ԹՈՒՐԻՆԻ ԳՈՐԾԸՆԹԱՑ
2018-2020 ՀԱՅԱՍՏԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստան. Թուրինի գործընթացի ազգային զեկույց

Այս զեկույցը մշակվել է 2018-2020թթ. Թուրինի գործընթացի շրջանակներում համապատասխան ազգային մարմինների կողմից (ԵԿՀ-ի կողմից խմբագրված կամ ձևաչափված չէ): Բովանդակության համար պատասխանատվություն են կրում միայն հեղինակները, և պարտադիր չէ, որ այն արտահայտի ԵԿՀ-ի կամ ԵՄ հաստատությունների տեսակետները:

Բովանդակություն

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 4

1. ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑԻ ՇՐՋԱՆԱԿԸ 6

Բաղադրիչ Ա. Երկրի և ՄԿՈՒ ընդհանուր նկարագիր 6

Ա.1. Ընդհանուր տեղեկություններ երկրի մասին 6

Ա.1.1 Ներածություն 6

Ա.2. Մասնագիտական կրթության և ուսուցման ընդհանուր նկարագիրը 7

Ա.2.1 ՄԿՈՒ-ի համառոտ նկարագրությունը: Կառուցվածքը և իրավական շրջանակը 7

Ա.2.2 Ինստիտուցիոնալ և կառավարման համակարգը 11

Ա.2.3 ՄԿՈՒ հիմնական վիճակագրությունը 13

Ա.2.4 ՄԿՈՒ տեսիլը և հիմնական բարեփոխումները 16

Ա.3: ՄԿՈՒ համատեքստը 19

Ա.3.1 Սոցիալ-տնտեսական համատեքստ 19

Ա.3.2 Միգրացիան և փախստականների հոսքերը 20

Ա.3.3 Կրթության ոլորտի համատեքստը 21

Ա.3.4 Ցկյանս ուսումնառության համատեքստը 23

Ա.3.5 Միջազգային համագործակցության համատեքստը. գործընկերություն և դոնորների աջակցություն 24

Բաղադրիչ Բ. Տնտեսության և աշխատաշուկայի վիճակը 29

Բ.1. ՄԿՈՒ, տնտեսություն և աշխատաշուկա 29

Բ.1.1 Աշխատաշուկայի վիճակը 29

Բ.1.2 Առանձնահատուկ մարտահրավերներ և հնարավորություններ. հմտությունների անհամապատասխանություն 31

Բ.1.3 Առանձնահատուկ մարտահրավերներ և հնարավորություններ. միգրացիա 32

Բ.1.4 Առանձնահատուկ մարտահրավերներ և հնարավորություններ. թվային փոխակերպում 33

Բ.1.5 Կրթությունն ու ՄԿՈՒ-ն ներառող քաղաքականության ռազմավարական արձագանքները 33

Բ.1.6 ՄԿՈՒ դերը աշխատաշուկայի ակտիվ քաղաքականությունների միջոցով տրվող լուծումներում 35

Բ.1.7 Հմտությունների պահանջարկի բացահայտումը և դրա ազդեցությունը ՄԿՈՒ իրականացման վրա 36

Բ.1.8 Աջակցություն միգրանտներին և փախստականներին ՄԿՈՒ-ի միջոցով 37

Բ.2: Ձեռներեցային կրթության և ձեռներեցություն 38

Բ.2.1 Աշխատատեղերի ստեղծումն ու ՄԿՈՒ-ն 38

Բ.2.2 Ձեռներեցային գործունեության խթանման ՄԿՈՒ քաղաքականությունը 39

II. Ամփոփում և եզրակացություններ 39

Բաղադրիչ Գ. Սոցիալական միջավայրը և ՄԿՈՒ անհատական պահանջարկը 41

Գ.1. Մասնակցություն ՄԿՈՒ-ին և ցկյանս ուսումնառությանը 41

Գ.1.1 Մասնակցություն 41

Գ.1.2 ՄԿՈՒ հնարավորությունները խոցելի ու մարգինալացված խմբերի համար 42

Գ.1.3 ՄԿՈՒ հասանելիության և մասնակցության բարելավման քաղաքականություն 42
Գ.1.4 Խոցելի և մարգինալացված խմբերի համար ՄԿՈՒ հասանելիության և մասնակցության խթանում 42
Գ.1.5 Ճկուն ՄԿՈՒ ծրագրերի իրականացումը ՄԿՈՒ ոլորտում մասնակցության ընդլայնման նպատակով 43
Գ.1.6 Ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման վավերացումը..... 43
Գ.2. Անաչառություն և հավասար հնարավորություններ ՄԿՈՒ ոլորտում 44
Գ.2.1 ՄԿՈՒ համակարգում սովորողների հաջողությունները 44
Գ.2.2 Լրացուցիչ ուսուցման և վերապատրաստման աջակցության կարիք ունեցող ՄԿՈՒ ուսանողները 45
Գ.2.3 ՄԿՈՒ ոլորտում հավասարության ապահովմանն ուղղված միջոցառումներ 46
Գ.2.4 Ներառական կրթությունը և ՄԿՈՒ-ն..... 46
Գ.3: Ակտիվ աջակցություն զբաղվածությանը..... 47
Գ.3.1 ՄԿՈՒ շրջանավարտների զբաղունակությունը 47
Գ.3.2 Անցման վրա ազդող տնտեսական գործոնները 48
Գ.3.3 Զբաղունակությանն ու զբաղվածության անցմանն ուղղված քաղաքականությունների վերանայում 49
Գ.3.4 Կարիերայի ուղղորդում 51
II.Ամփոփում և եզրակացություններ 52

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԱԾ	Աշխատաշուկայի ակտիվ ծրագրեր
ԱԶԳ	Ավստրիական զարգացման գործակալություն
ԱԶԾ	Ազգային զեկույցի շրջանակ
ԱԽ	Աշխատանքային խումբ
ԱՀՈՒ	Աշխատանքի վրա հիմնված ուսումնառություն
ԱՄԿ	Աշխատանքի միջազգային կազմակերպություն
ԱՊՀ	Անկախ պետությունների համագործակցություն
ԱՍՀԱԻ	Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ
ԱՍՀՆ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ԵԿՀ	Եվրոպական կրթական հիմնադրամ
ԵՄ	Եվրոպական միություն
ԶՊԳ	Զբաղվածության պետական գործակալություն
ԿԱԻ	Կրթության ազգային ինստիտուտ
ԿԳՆ	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն (նախկին ՀՀ կրթության և գիտության նախարարություն)
ԿԿՏՀ	Կրթության կառավարման տեղեկատվական համակարգ
ԿՍՄԴ	Կրթության դասակարգման միջազգային չափորոշիչ
ԿՏԱԿ	Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն
ՀԶՌ	Հայաստանի զարգացման ռազմավարություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՄԿՈՒ	Հիմնական մասնագիտական կրթություն և ուսուցում
ՀՆԱ	Համախառն ներքին արտադրանք
ՄԱԶԾ	Միացյալ ազգերի զարգացման ծրագիր
ՄԺԾԾ	Միջնաժամկետ ծախսային ծրագիր
ՄԿԿԶԿ	Մասնագիտական կողմնորոշման և կարողությունների զարգացման կենտրոն
ՄԿՄԿ	Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն
ՄԿՈՒ	Մասնագիտական կրթություն և ուսուցում
ՄԿՈՒԶԱԽ	ՄԿՈՒ զարգացման ազգային խորհուրդ
ՄԿՈՒԶԱԿ	ՄԿՈՒ զարգացման ազգային կենտրոն
ՇՄԿՈՒ	Շարունակական մասնագիտական կրթություն և ուսուցում
ՈԱԱԿ	Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն
ՈԱԾ	Որակավորումների ազգային շրջանակ
ՈԵԾ	Որակավորումների Եվրոպական շրջանակ

ՈՀ	Ոլորտային հանձնաժողովներ
ՈՆ	Որակավորման նկարագիր
ՈՒԱՀ	Ուսուցման ազգային հիմնադրամ
ՊԿՉ	Պետական կրթական չափորոշիչ
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություններ
ՌԴ	Ռուսաստանի Դաշնություն
ՏՀՏ	Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիա
ՏՄԿՈՒ	Տեխնիկական մասնագիտական կրթություն և ուսուցում
ՏՏ	Տեղեկատվական տեխնոլոգիաներ
ՏՏԿԱՀ	Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն
ՖՆ	ՀՀ ֆինանսների նախարարություն
CEDEFOP	Մասնագիտական կրթության զարգացման միջազգային կենտրոն
NEET	Զբաղվածությունից, կրթությունից և վերապատրաստումից դուրս գտնվողներ
SKYE	Հմտություններ և գիտելիքներ հանուն երիտասարդության հզորացման
UNEP	Միացյալ ազգերի բնապահպանական ծրագիր
VNFIL	Ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության վավերացում

1. ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑԻ ՇՐՋԱՆԱԿԸ

1. Սույն Զեկույցը մշակվել է մի ժամանակահատվածում, երբ զգալի բարեփոխումներ էին իրականացվում ՀՀ ՄԿՈՒ համակարգում և ընդհանրապես՝ կրթության ոլորտում: Դրանցից են մասնավորապես՝ նախարարությունների և ՄԿՈՒ-ին աջակցող հիմնական կառույցների, օրինակ՝ ՄԿՈՒ զարգացման ազգային կենտրոնի (տես՝ Բաժին Ա.2.2), վերակազմավորումը, ՄԿՈՒ ռազմավարության վերանայումը կրթության համապարփակ ռազմավարության համատեքստում (Բաժին Ա.2.4), կրթության համակարգի համար նախատեսված բյուջետային հատկացումների վերանայումը (Բաժին Ե.1.3) և այլն: Հետևաբար, ՄԿՈՒ համակարգի իրավիճակն այստեղ ներկայացված է ներկա պահի դրությամբ՝ որոշակի ակնկալիքների հետ մեկտեղ: Ակնկալվում է, որ ՄԿՈՒ առավել ընդգրկուն պատկերը, վերոնշյալ բարեփոխումների առաջին արդյունքներով հանդերձ, հասանելի կլինի 2019թ. վերջին, և համապատասխանաբար, կկատարվեն անհրաժեշտ թարմացումներ:

Բաղադրիչ Ա. Երկրի և ՄԿՈՒ ընդհանուր նկարագիր

Ա.1. Ընդհանուր տեղեկություններ երկրի մասին

Ա.1.1 Ներածություն

2. Հայաստանը ցամաքային երկիր է, որի տարածքը 29.8 հազար քառակուսի կիլոմետր է: 2019թ. հունվարի 1-ի դրությամբ բնակչությունը կազմում էր 2,965.1 հազար մարդ, որը մի փոքր պակաս է 2018 թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ (2,972.7 հազար մարդ)[1]: Երկիրը բաղկացած է վարչատարածքային 10 միավորից (մարզերից) և հատուկ կարգավիճակ ունեցող մայրաքաղաք Երևանից: Քաղաքային բնակչության մասնաբաժինը կազմում է մոտ 64%: 2017թ. կյանքի միջին տևողությունը կազմում էր 74.8 տարի[2]:

3. Երկիրը բնութագրվում է սակավ բնական պաշարներով, հետևաբար՝ մարդկային կապիտալի զարգացումը, որը միշտ համարվել է Հայաստանի հիմնական արժեքը, ազգային զարգացման ցանկացած ծրագրի գլխավոր առաջնահերթություններից մեկն է[3]:

4. ՀՆԱ-ում ամենամեծ մասնաբաժինը պատկանում է գյուղատնտեսությանը՝ 13.7%, որին հաջորդում են մեծածախ ու մանրածախ առևտուրը՝ 11%, արտադրությունը՝ 10.8%, և անշարժ գույքի հետ կապված գործունեությունը՝ 8.4%: Հաջորդ տեղը զբաղեցնում է շինարարությունը՝ 6.8%: Զբաղվածության առումով գյուղատնտեսությունը նույնպես առաջինն է, սակայն ներառում է աշխատողների զգալի մասը՝ 31.3%: Երկրորդ ամենամեծ ոլորտը կրկին մեծածախ ու մանրածախ առևտուրն է՝ 9.1%, սակայն այստեղ դրան հաջորդում է կրթությունը՝ 10.8%, արտադրությունը՝ 9.1%, և պետական կառավարումը՝ 8.8%: Շինարարության մեջ ներգրավված են աշխատողների ընդամենը 3.6%-ը[4]:

5. Հայաստանում քաղաքական իրավիճակը կտրուկ փոխվեց 2018թ. մայիսին տեղի ունեցած «Թավշյա հեղափոխությունից» հետո, որը հանգեցրեց քաղաքական վերնախավի ամբողջական փոփոխման: Դրան հաջորդեցին 2018թ. դեկտեմբերին կայացած արտահերթ խորհրդարանական ընտրությունները, երբ նախկին ընդդիմությունը եկավ իշխանության և ձևավորեց բացարձակ մեծամասնություն Ազգային Ժողովում:

6. Նոր կառավարությունը ձևավորվեց է 2019թ. հունվարին, թեև 2018թ. նշանակված նախարարներից շատերը (այդ թվում՝ ՀՀ կրթության և գիտության նախարարը) մնացին անփոփոխ: Նույն տարվա փետրվարին հաստատվեց ՀՀ կառավարության ծրագիրը[5]: Այն նշում է, որ կառավարության գործունեությունը

---

[1] ՀՀ վիճակագրական կոմիտե. https://www.armstat.am/file/article/sv_12_18a_520.pdf:
[2] Համաշխարհային բանկ. https://data.worldbank.org/country/armenia:
[3] Տես, օրինակ՝ Հայաստանի 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը. ՀՀ կառավարության որոշում № 442-Ն, 27.03.2014. https://eeas.europa.eu/sites/eeas/files/armenia_development_strategy_for_2014-2025.pdf:
[4] Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, 2018: ՀՀ վիճակագրական կոմիտե, 2018. https://www.armstat.am/file/article/trud_18_4.1.pdf:
[5] ՀՀ կառավարման որոշում № 65-Ա, 08.02.2019. https://www.gov.am/files/docs/3133.pdf.

ուղղված կլինի բարձր տեխնոլոգիաների, արդյունաբերական և բնապահպանական ստանդարտների վրա հիմնված մրցակցային և ներառական տնտեսության կառուցմանը: Կառավարության հիմնական նպատակները կլինեն՝

1) Տնտեսական գործունեության հնարավորությունների ընդլայնումը.
2) Պետական կառավարման արդյունավետության բարձրացումը.
3) Մարդկային ներուժի զարգացումը.
4) Հուսալի ենթակառուցվածքների զարգացումը և մատչելիության բարձրացումը:

7. 3-րդ նպատակին հասնելու միջոցառումները ներառում են մասնավորապես՝

- կրթության խթանումը, կրթության որակի ապահովումը, կրթության միջազգայնացումը,
- տնտեսության կառուցվածքային փոփոխությունների համար անհրաժեշտ մասնագիտական ներուժի զարգացումը կրթության և գիտության արդիականացման միջոցով,
- հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և արժանապատվության պաշտպանությունը և սոցիալական ներգրավվածությունը:

8. 2019թ. մայիսին հաստատվեց ՀՀ կառավարության 2019-2023թթ. համար նախատեսված միջոցառումների ծրագիրը[6]: Այն սահմանում է միջոցառումները՝ ըստ նպատակների, ինչպես նաև ակնկալվող արդյունքները, վերջնաժամկետները և ֆինանսավորման աղբյուրները:

9. Համաշխարհային բանկի՝ 2019թ. ապրիլին Հայաստանի համար հրապարակված երկրի մասին ակնարկում նշվում է, որ 2018թ. տնտեսական կատարողականը դանդաղել է տարեսկզբին գագաթնակետին հասնելուց հետո, այնուամենայնիվ այն ցույց է տվել 5.2% աճ: Քաղաքական անցումը նույնպես որևէ էական բացասական ազդեցություն չի ունեցել տնտեսության վրա: 2016 և 2017 թվականներին գրանցված կայուն աճը և ցածր գնաճը հանգեցրել են կենսապայմանների բարելավման և ազգային աղքատության մակարդակի նվազեցման 29.4%-ից մինչև 25.7% այդ ժամանակահատվածի համար[7]:

Ա.2. Մասնագիտական կրթության և ուսուցման ընդհանուր նկարագիրը

Ա.2.1 ՄԿՈՒ-ի համառոտ նկարագրությունը: Կառուցվածքը և իրավական շրջանակը

10. Հայաստանում ֆորմալ մասնագիտական կրթության և ուսուցման համակարգը հիմնականում հաստատութենահենք է և ունի երկու մակարդակ՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն: «Կրթության մասին» օրենքի (1998թ.) համաձայն մասնագիտական կրթական ծրագրերը «*նպատակաուղղված են կրթության հանրակրթական և մասնագիտական մակարդակների հաջորդականության միջոցով համապատասխան որակավորում ունեցող մասնագետների պատրաստմանը, հմտությունների և կարողությունների ձևավորմանը, գիտելիքների ծավալի ընդլայնմանն ու որակավորման բարձրացմանը*»[8]: Ինչպես նախնական, այնպես էլ միջին ՄԿՈՒ ծրագրերը կարող են իրականացվել թե՛ հիմնական ընդհանուր (9-ամյա) և թե՛ միջնակարգ ընդհանուր (12-ամյա) կրթության հենքի վրա: Առաջին դեպքում դրանք համապատասխանում են ISCED 3-րդ, իսկ երկրորդ դեպքում՝ ISCED 4-րդ մակարդակին[9]:

11. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթությունն իրականացվում է մասնագիտական (արհեստագործական) ուսումնարաններում, այլ մասնագիտական ուսումնական հաստատություններում, ուսումնական կենտրոններում և քրեակատարողական հիմնարկներում: Արհեստագործական կրթությունը կարող է իրականացվել նաև «վարպետային ուսուցման» ձևով՝ որպես «*համակարգման ուսուցման ձև», երբ անմիջական և ոչ անմիջական ուսուցման գործընթացն ուսուցանողի և ուսանողի միջև իրականացվում է անհատական ուսուցման ժամանակացույցի հիման վրա՝ ուսումնական հաստատությունում,*

---

[6] ՀՀ կառավարության որոշում № 650-Լ, 16.05.2019. https://www.gov.am/files/docs/3347.pdf.
[7] https://www.worldbank.org/en/country/armenia/overview.
[8] «Կրթության մասին» օրենքի համաձայն նույն սահմանումները վերաբերում են նաև բարձրագույն և հետբուհական կրթությանը:
[9] Որոշ զեկույցներում և Հայաստանում ՄԿՈՒ համակարգին վերաբերող այլ փաստաթղթերում ԿՄՄԴ 5-րդ մակարդակը սխալ է կցված միջին մասնագիտական կրթությանը, որը ոչ մի դեպքում չի կարող համարվել բարձրագույն (նույնիսկ կարճ փուլ) կրթություն:

կազմակերպությունում կամ վարպետի արհեստանոցում[10]: Արհեստագործական կրթության շրջանավարտներին շնորհվում է նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության դիպլոմ և «արհեստավորի» որակավորման աստիճան: Մասնագիտությունից կախված՝ կարող են լինել հետևյալ որակավորումները՝ «Անտառապահ», «Մսագործ», «Հացթուխ», «Հյուսն» և այլն: Տևողությունը երեք տարի է հիմնական ընդհանուր կրթության հիմքով և շուրջ մեկ տարի՝ միջնակարգ կրթության հիմքով:

12. Միջին մասնագիտական կրթությունը կարելի է ձեռք բերել միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ քոլեջներում, ինչպես նաև համալսարաններում: Տևողությունը կախված է կրթության հիմքից (հիմնական կամ միջնակարգ ընդհանուր) և մասնագիտությունից: Այն տատանվում է 2-ից 5 տարի: Շրջանավարտներին շնորհվում է միջին մասնագիտական կրթության դիպլոմ՝ «մասնագետի» որակավորման աստիճանով: Որակավորման օրինակներ են՝ «Հաշվապահ», «Խմորման արտադրության և գինեգործության տեխնոլոգ», «Գյուղատնտեսական մեքենայացման տեխնիկ», «Անասնաբույժ» և այլն: Այնուամենայնիվ, շնորհված որակավորումների մեծ մասի անվանումը՝ «Տեխնիկ», չի որոշարկում մասնագիտական ոլորտը:

13. «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» օրենքը սահմանում է մասնագիտական (արհեստագործական) ուսումնարանները և քոլեջները որպես իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություններ կամ դրա ստորաբաժանում, որոնք համապատասխանաբար՝ իրականացնում են նախնական կամ միջին մասնագիտական կրթական ծրագիր: Ներկայումս ՄԿՈՒ բոլոր պետական հաստատություններն ունեն *պետական ոչ առևտրային կազմակերպության (ՊՈԱԿ) կարգավիճակ*, գործում են համապատասխան օրենքի համաձայն[11]:

14. Որակավորումների ազգային շրջանակում[12], ՄԿՈՒ-ն զբաղեցնում է 3-5 մակարդակները՝

Մակար-դակը	Որակավորումը	Կրթական աստիճանը, ծրագիրը	Տևողությունը
1-ին	ՏԱՐՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ	Միջնակարգ կրթության 1-ին աստիճան	4 տարի
2-րդ	ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ	Միջնակարգ կրթության 2-րդ աստիճան	5 տարի
3-րդ	ԱՐՀԵՍՏԱՎՈՐ (հիմնական կրթությամբ) (Վարպետային ուսուցման որակավորման վկայական)[13]	Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագիր	6 ամսվանից 1 տարի
4-րդ	1. ՄԻՋՆԱԿԱՐԳ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ (ԱՏԵՍՏԱՏ)	Միջնակարգ կրթության 3-րդ աստիճան՝ ավագ դպրոց	3 տարի
	2. ԱՐՀԵՍՏԱՎՈՐ (միջնակարգ կրթությամբ) (Արհեստագործական կրթության դիպլոմ)	Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագիր	1-3 տարի
5-րդ	ՄԱՍՆԱԳԵՏ (Միջին մասնագիտական կրթության դիպլոմ)	Միջին մասնագիտական կրթական ծրագիր	2-5 տարի
6-րդ	ԲԱԿԱԼԱՎՐ (Բակալավրի դիպլոմ)	Բակալավրի կրթական ծրագիր	Առնվազն 3 տարի
7-րդ	ՄԱԳԻՍՏՐՈՍ (Մագիստրոսի դիպլոմ)	Մագիստրոսի կրթական ծրագիր	Առնվազն 1 տարի
	ԴԻՊԼՈՄԱՎՈՐՎԱԾ ՄԱՍՆԱԳԵՏ (Դիպլոմավորված մասնագետի դիպլոմ)	Դիպլոմավորված մասնագետի կրթական ծրագիր	Առնվազն 5 տարի
8-րդ	ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ (Գիտությունների թեկնածուի վկայական)	Հետբուհական մասնագիտական կրթական ծրագիր	Առնվազն 3 տարի

[10] ՀՀ կառավարության որոշում № 1254-Ն, 30.12.2008.
[11] «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենք, 2001.
[12] ՀՀ կառավարության որոշում № 332-Ն, 31.03.2011, վերանայված կառավարության №714, 07.07.2016թ. որոշմամբ:
[13] ՀՀ կառավարության № 1254-Ն, 30.12.2008 որոշման համաձայն՝ վարպետային ուսուցումը մասնագիտական կրթության բնագավառում համակարգված ուսուցման ձև, երբ անմիջական և ոչ անմիջական ուսուցման գործընթացն ուսուցանողի և ուսանողի միջև իրականացվում է անհատական ուսուցման ժամանակացույցի հիման վրա: Կարող է իրականացվել ուսումնական հաստատությունում, կազմակերպությունում կամ վարպետի արհեստանոցում:

Հանրակրթություն | Մասնագիտական կրթություն | Բարձրագույն կրթություն

15. 12-ամյա պարտադիր միջնակարգ ընդհանուր կրթության անցնելու հետո 3-րդ մակարդակը այլևս չի կարող իրականացվել, քանի որ այն չի ապահովում միջնակարգ կրթություն: Այնուամենայնիվ այս մակարդակը մնում է շրջանակում այն անձանց կրթությունը դասակարգելու նպատակով, ովքեր ստացել են այն նախքան միջնակարգ կրթության պարտադիր դարձնելը:

16. Կարևոր է նշել, որ չնայած նախնական և միջին ՄԿՈՒ-ն ՈԱՇ-ի տարբեր մակարդակներում են, իրականում դրանք երկու զուգահեռ համակարգեր են. սովորաբար ՄԿՈՒ հաստատություններ ընդունվելիս դիմորդները ընտրություն են կատարում այս երկու մակարդակների միջև (այսինքն, թե զբաղվածության որ տեսակն ավելի հարմար կլինի իրենց համար, ինչպես օրինակ՝ արհեստավոր, թե միջին մակարդակի ղեկավար), և համապատասխան որակավորումը (և դիպլոմը) ձեռք բերելուց հետո նպատակ ունեն մտնել աշխատաշուկա կամ (անմիջապես կամ որոշակի ժամանակահատվածից հետո) շարունակել կրթությունը համալսարանում: Սա նշանակում է, որ ՄԿՈՒ-ի 3-րդ և 4-րդ մակարդակներից անցումը 5-րդ մակարդակին նպատակամետ չէ: ԿԳՆ-ի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ յուրաքանչյուր տարի նախնական ՄԿՈՒ-ի միայն 3-4 շրջանավարտ է միջին ՄԿՈՒ ձեռք բերելու ցանկություն հայտնում:

17. Հայաստանում ՄԿՈՒ-ի կողմից տրամադրված գիտելիքների, հմտությունների և կարողությունների ծավալը պատկերացնելու համար ստորև ներկայացված են համապատասխան մակարդակների բնութագրիչները՝

3-րդ մակարդակ՝ Արհեստավոր առանց միջնակարգ կրթության	
Գիտելիքները	• Բազային գիտելիքներ մայրենի և օտար լեզուներից, ՏՀՏ-ից, մաթեմատիկայից, ինչպես նաև հասարակագիտական, բնագիտական, արվեստի, սպորտի, անվտանգ կենսագործունեության բնագավառների առարկաներից՝ որոշակի ոլորտում պարզ աշխատանք կատարելու կամ հետագա ուսումնառության համար: • Ընդհանուր հասկացությունների, սկզբունքների և մեթոդների իմացություն, որոնք բավարար են պարզ մասնագիտական գործունեություն իրականացնելու համար:
Հմտություններ	• Իմացական, ճանաչողական, հաղորդակցման և գործնական բնույթի բազային հմտություններ, որոնք անհրաժեշտ են՝ 1) որոշակի մասնագիտական խնդիրների լուծման և առաջադրանքների կատարման համար՝ համապատասխան կանոնների, մեթոդների, սարքերի և գործիքների ընտրության և կիրառման միջոցով, 2) անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման և օգտագործման համար՝ անհրաժեշտության դեպքում կիրառելով ՏՀՏ, 3) օտար լեզվով ամենօրյա կիրառություն ունեցող արտահայտությունների գործածության համար. • ուսումնառության արդյունքում ձեռք բերած գիտելիքները և իմացությունն աշխատանքում կիրառելու պարզ մասնագիտական հմտություններ:
Կարողություններ	• Աշխատանքի և ուսումնառության ընթացքում ցուցաբերել ինքնուրույնություն և ստանձնել առաջադրանքների կատարման արդյունքների հանդեպ անձնական պատասխանատվություն. • հարմարեցնել սեփական վարքագիծը խնդիրների լուծման ընթացքում ի հայտ եկող հանգամանքներին. • բացատրել և կատարել եզրահանգումներ բնության, հասարակության և առօրյա կյանքի տարբեր երևույթների ու օրինաչափությունների մասին. • տիրապետել հասարակական համակեցության կանոններին և դրսևորել քաղաքացիական գիտակցություն. • կարևորել ազգային և համամարդկային մշակութային արժեքները:
4-րդ մակարդակ՝ Արհեստավոր միջնակարգ կրթությամբ	
Գիտելիքներ	• Փաստական և տեսական հիմնարար գիտելիքներ միջնակարգ կրթության բոլոր բնագավառներից՝ հետագա աշխատանքի կամ ուսումնառության համատեքստում:

	• Աշխատանքի բնագավառին առնչվող ընդհանուր հասկացությունների, սկզբունքների և մեթոդների իմացություն, որոնք պահանջվում են հետագա մասնագիտական գործունեություն իրականացնելու համար:
Հմտություններ	• Տարաբնույթ իմացական, ճանաչողական, հաղորդակցման և գործնական հմտություններ, որոնք անհրաժեշտ են՝ 1) աշխատանքի կամ հետագա ուսումնառության որևէ բնագավառում կոնկրետ խնդիրներ լուծելու, առաջադրանքներ և ուսումնասիրություններ կատարելու, ինչպես նաև գործածված մեթոդներն ու ձեռքբերված արդյունքները վերլուծելու և ամփոփելու համար, 2) Տեղեկատվության հավաքագրման, համադրման, դասակարգման և օգտագործման համար՝ կիրառելով ՏՀՏ. 3) Օտար լեզուներով գրավոր և բանավոր հաղորդակցվելու համար: • Ուսումնառության արդյունքում ձեռքբերած գիտելիքները և իմացությունը աշխատանքում կիրառելու մասնագիտական հմտություններ:
Կարողություններ	• Ինքնուրույն կազմակերպել և կառավարել սեփական աշխատանքային կամ ուսումնառության գործընթացները՝ կանխատեսելի, բայց փոփոխունակ միջավայրում և ստանձնել դրանց գնահատման և բարելավման որոշ պատասխանատվություն: • Հստակ ուղղորդման ներքո բացահայտել սեփական կրթական պահանջմունքները՝ ուսումնառությունը շարունակելու համար: • Կազմակերպել այլ անձանց առօրյա գործողությունները: • Կատարել բնության, հասարակության և առօրյա կյանքի տարաբնույթ երևույթների վերլուծություններ՝ կիրառելով հիմնավորման և ապացուցման մեթոդներ: • Պահպանել հասարակական համակեցության կանոնները և դրսևորել քաղաքացիական գիտակցությամբ վարքագիծ: • Արժևորել և գնահատել ազգային և համամարդկային արժեքները:
5-րդ մակարդակ՝ Մասնագետ	
Գիտելիքներ	• Հիմնական և համակողմանի փաստական, տեսական և մասնագիտացված գիտելիքներ՝աշխատանքի կամ ուսումնառության ոլորտից: • Մասնագիտության հիմնարար հասկացությունների, տեսությունների և մեթոդների իմացություն:
Հմտություններ	• Բազմակողմանի և համապարփակ իմացական, ճանաչողական, վերլուծական և գործնական հմտություններ, որոնք անհրաժեշտ են՝ 1) տարաբնույթ, այդ թվում՝ մասնագիտական խնդիրները բացահայտելու համար, 2) առաջացած խնդիրների վերաբերյալ դատողություններ կատարելու և լուծումներ առաջադրելու համար՝ ցուցաբերելով ստեղծագործական մոտեցում. • Հաղորդակցման և ՏՀՏ հմտություններ, որոնք անհրաժեշտ են՝ 1) մասնագիտությանն առնչվող տեղեկատվությունները, գաղափարները, հասկացությունները, խնդիրներն ու դրանց լուծումները բացատրելու և հանրության նեղ շրջանակներում ներկայացնելու համար: 2) մասնագիտական ոլորտում աշխատանքը դյուրացնելու և արագացնելու համար: 3) մասնագիտությանն առնչվող քանակական և որակական տվյալները հավաքագրելու, մշակելու և վերլուծելու համար:
Կարողություններ	• Որոշ չափով կառավարել և վերահսկել աշխատանքային կամ ուսումնառության գործընթացներ՝ անկանխատեսելի ու փոփոխունակ միջավայրում, ստանձնել սեփական և այլ անձանց գործողություններին հետևելու և դրանք բարելավելու պատասխանատվություն: • Բացահայտել սեփական կրթական պահանջմունքները և ընդունել որոշում հետագա ուսումնառության վերաբերյալ: • Պահպանել հասարակական համակեցության կանոնները, կենսական տարբեր իրավիճակներում դրսևորել քաղաքացիական գիտակցությամբ վարքագիծ, ինչպես նաև իրականացնել որոշակի վերահսկողություն թիմում այդ կանոնների պահպանման նկատմամբ; • Կիրառել ազգային և համամարդկային արժեքները առօրյա հարաբերություններում:

18. Նախնական և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը (դասակարգիչները) հաստատում է ՀՀ կառավարությունը[14], և ներկայումս[15] դրանք ներառում են նախնական մասնագիտական կրթության 112 մասնագիտությունների 278 որակավորումներ և միջին մասնագիտական կրթության 248 մասնագիտությունների նույն թվով որակավորումներ[16]: Մասնագիտությունները և որակավորումները խմբավորվում են ըստ կրթության ընդհանուր և նեղ բնագավառների՝ ինչպես առաջարկում է ISCED 2013-ը[17]: Այդ որակավորումներից շուրջ 170-ը (80 նախնական և 90 միջին) ներկայումս դասավանդվում են ՄԿՈՒ հաստատություններում[18]:

19. Կրթության բնագավառը, մասնավորապես՝ ՄԿՈՒ-ն կարգավորող հիմնական իրավական ակտը 1999թ. ընդունված «**Կրթության մասին» օրենքն** է[19]: Այն սահմանում է կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները, կրթության իրավունքի պետական երաշխիքները, կրթության համակարգի իրավակազմակերպական, ինչպես նաև ֆինանսատնտեսական հիմքերը: Օրենքը սահմանում է կրթության համակարգի կառուցվածքը, դրան առնչվող հիմնական հասկացությունները, կրթության մակարդակներն ու տեսակները և այլն:

20. «**Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» օրենքը**[20] ընդունվել է 2005 թվականին՝ 2004թ. ՄԿՈՒ ռազմավարությանը ՀՀ կառավարության կողմից հավանություն տալուց[21] հետո: Սույն օրենքը սահմանում է ՄԿՈՒ-ին առնչվող ավելի առանձնահատուկ խնդիրներ և հիմք է հանդիսանում ՄԿՈՒ տարբեր հարցերի կարգավորող ենթաօրենսդրական ակտերի համար: Վերջին անգամ օրենքում լրացումներ են կատարվել 2014թ., երբ ՄԿՈՒ ոլորտում պետական քաղաքականության սկզբունքները լրացվել են հատուկ կրթության կարիք և ներառական կրթություն ունեցողների համար պայմանների ապահովման պահանջով:

21. Կան մի շարք այլ օրենքներ, որոնք վերաբերում են ՄԿՈՒ-ի որոշակի հարցերի: Այսպես, օրինակ՝ «**Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքը**[22] կարգավորում է ՄԿՈՒ հաստատությունների վարչական և կառավարման բազմաթիվ հարցերը[23], «**Լիցենզավորման մասին» օրենքը**[24] սահմանում է ՄԿՈՒ իրականացման լիցենզավորման կանոններն ու ընթացակարգերը, «**Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» օրենքը**[25] այդ երեխաների համար մասնագիտական և բարձրագույն կրթությունից օգտվելու արտոնություններ է սահմանում և այլն:

Ա.2.2 Ինստիտուցիոնալ և կառավարման համակարգը

22. **ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը**[26] (ԿԳՆ[27]) պատասխանատու է պետական քաղաքականության ձևավորման և ռազմավարությունների և գործողությունների պլանների համակարգման և իրագործման համար, մասնավորապես՝ կրթության, այդ թվում՝ ՄԿՈՒ ոլորտում: Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության վարչությունը բաղկացած է 2 բաժիններից. ՄԿՈՒ քաղաքականության մշակման և ռազմավարության, և մասնագիտական կրթության և ուսուցման: Վարչությունն ունի ընդհանուր թվով 10 աշխատակից, այդ թվում՝ վարչության պետը և երկու բաժինների պետերը: Քաղաքականության մոնիթորինգի համար պատասխանատու է զարգացման

---

[14] ՀՀ կառավարության որոշում № 1139-Ն, 01.10.2015.
[15] Վերջին փոփոխությունները ցանկերում կատարվել են կառավարության № 977-Ն, 06.09.2018 որոշման համաձայն.
[16] Նախնական մասնագիտական կրթության մասնագիտություններին կարող է համապատասխանել մեկից ավելի որակավորում, մինչդեռ միջին մասնագիտական կրթության դեպքում՝ միայն մեկ որակավորում:
[17] Տես, օրինակ՝ http://unesdoc.unesco.org/images/0022/002280/228085e.pdf:
[18] Աղբյուրը՝ ԿԳՆ ՄԿՈՒ վարչություն
[19] Օրենք № 297, 08.05.1999.
[20] Օրենք№ 164-Ն, 08.08.2005.
[21] ՀՀ կառավարության արձանագրության որոշում № 17, 06.05.2004.
[22] Օրենք № 248, 23.10.2001.
[23] ՄԿՈՒ բոլոր պետական հաստատություններն ունեն պետական ոչ առևտրային կազմակերպությունների կարգավիճակ
[24] Օրենք № 193, 27.06.2001
[25] Օրենք № 411-Ն, 18.10.2002
[26] Նախկին ՀՀ մշակույթի նախարարությունը և ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը միացվել են ՀՀ կրթության և գիտության նախարարությանը 2019թ. հունիսի 1-ին:
[27] Պարզության համար ամենուրեք կօգտագործվի «ԿԳՆ» հապավումը:

ծրագրերի և մոնիթորինգի վարչությանը, որտեղ առնվազն մեկ անձ զբաղվում է ՄԿՈՒ հարցերով: ՄԿՈՒ ֆինանսավորման հարցերը համակարգվում են ֆինանսաբյուջետային վարչության կողմից:

23. 2008թ. ստեղծված **ՄԿՈՒ զարգացման ազգային խորհուրդը** (ՄԿՈՒԶԱԽ) եռակողմ խորհրդակցական մարմին է, որը գործում է սոցիալական գործընկերության սկզբունքներին համաձայն և ներառում է ՀՀ կառավարության, գործատուների և արհմիությունների հավասար թվով ներկայացուցիչներ: ՄԿՈՒԶԱԽ-ի հիմնական նպատակը ԿԳՆ-ին խորհրդատվություն տրամադրելն է՝ որոշումներ կայացնելու և ՄԿՈՒ զարգացման ծրագրերի մշակման համար: Այսպիսով, խորհուրդը, որը նիստեր է գումարում եռամսյակը մեկ անգամ, խորապես ներգրավված է ՄԿՈՒ համակարգի կառավարման գործընթացներում (մանրամասների համար տես՝ Բաժին Ե.2.1):

24. Գոյություն ունեն մի շարք հաստատություններ, որոնք աջակցում են ԿԳՆ-ին քաղաքականության իրականացման գործում: ՄԿՈՒ ոլորտում հիմնական օժանդակ կառույցներն են Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնը, Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնը, Ուսուցման ազգային հիմնադրամը, Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնը և Մասնագիտական կողմնորոշման և կարողությունների զարգացման կենտրոնը, որը Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի մասնաճյուղ է և գտնվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության ներքո (ԱՍՀՆ)[28]:

25. ***Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնը*** (ՄԿՈՒԶԱԿ)[29], որը ստեղծվել է 2008թ. Կրթության ազգային ինստիտուտի (ԿԱԻ)[30] ենթակայության ներքո, ՄԿՈՒ համակարգին աջակցության հիմնական կառույցն է: Այն մասնակցում է ՄԿՈՒ քաղաքականության և ռազմավարությունների, կարճաժամկետ և երկարաժամկետ զարգացման ծրագրերի և գործողությունների պլանների մշակմանը, իրականացնում է ՄԿՈՒ համակարգի տարաբնույթ հետազոտություններ, վերլուծում և գնահատում է իր կատարողականը, ապահովում է կապը ՄԿՈՒ համակարգի և աշխատաշուկայի միջև, կազմակերպում է պետական կրթական չափորոշիչների և ուսումնական ծրագրերի մշակման և շարունակական կատարելագործման գործընթացներ, տրամադրում է մասնագիտական փորձաքննություն, բացահայտում և հարմարեցնում է միջազգային լավագույն փորձը ՄԿՈՒ համակարգում, աջակցում է ՈԱՇ-ի մշակմանը և ՈԵՇ-ի հետ համապատասխանությանը և կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգի ներմուծմանը ՄԿՈՒ ոլորտում:

26. ***Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնը*** (ՈԱԱԿ)[31], որը զբաղվում է թե՛ մասնագիտական, թե՛ բարձրագույն կրթությամբ, ստեղծվել է 2008թ. (գործարկվել է 2009թ. մարտին) որպես կառավարությանը հաշվետու անկախ կառույց: ՈԱԱԿ-ի հիմնական իրավասությունները վերաբերում են այն հաստատությունների և ծրագրերի արտաքին որակի գնահատման և հավաստագրման՝ ՀՀ կառավարության հաստատմանը ենթական ընթացակարգերի և չափորոշիչների մշակմանը, հաստատությունների և որակի գնահատման աուդիտին, հաստատությունների որակի ապահովման ներքին համակարգերի գնահատմանը, ուսանողների ընթացիկ և ամփոփիչ գնահատման մեթոդաբանությունների և չափորոշիչների մշակման վերաբերյալ խորհրդատվությանը, և որակի ապահովման եվրոպական ցանցում երկրի ներգրավվածությանն ու մասնակցությանը աջակցելուն:

27. 2004թ. հիմնադրված **Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնը** (ԿՏԱԿ)[32] պատասխանատու է կրթության բոլոր մակարդակներում ՏՀՏ ներդրման և կիրառման տարբեր հարցերի, ինչպես նաև կրթության կառավարման տեղեկատվական համակարգերի (ԿԿՏՀ) մշակման համար: ԿՏԱԿ-ի գործունեությունը ներառում է նաև դասավանդողների համակարգչային գրագիտության բարելավումը վերապատրաստման միջոցով, կրթական տեղեկատվական և հաղորդակցման միջավայրի ստեղծումը, վիճակագրական տվյալների

---

[28] ՀՀ կառավարության 2017թ. սեպտեմբերի 22-ի արձանագրային որոշմամբ նախատեսվեց Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոնը վերակազմավորել Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի (ԱՍՀԻ) մասնաճյուղի:

[29] http://www.mkuzak.am/?lang=en.

[30] 2019թ. ԿԱԻ-ն վերակազմավորվեց, և ՄԿՈՒԶԱԿ-ը առանց իր կանոնադրության կամ գործառույթների շրջանակում որևէ փոփոխության ենթարկվելու, 2019թ. հուլիսից ժամանակավորապես անցավ մեկ այլ կազմակերպության ենթակայության: Վերակազմավորման գործընթացների ավարտը ակնկալվում է 2019թ. վերջին:

[31] http://www.anqa.am/en/.

[32] http://www.ktak.am.

հավաքումը, վերլուծումը և տարածումը, մասնակցությունը ռազմավարական և զարգացման այլ ծրագրերի մշակման գործընթացին և կրթական համակարգին վերաբերող զեկույցների և ցուցիչների հրապարակումը:

28. 2011թ. ստեղծված ***Ուսուցման ազգային հիմնադրամի*** (ՈՒԱՀ)[33] նպատակն է ՄԿՈՒ համակարգի և աշխատաշուկայի ներկայացուցիչների միջև կապի ապահովումը, և մասնավորապես՝ ՄԿՈՒ տարբեր ոլորտներում գործատուների և նրանց կազմակերպությունների ներգրավվածությանն աջակցելը: ՈՒԱՀ-ի հիմնական պարտականությունները վերաբերում են աշխատաշուկայի ուսումնասիրությանը և հմտությունների կարիքների որոշարկմանը, ինչպես նաև աշխատանք փնտրող տարբեր կատեգորիաների անձանց, այդ թվում՝ աշխատող և գործազուրկ մեծահասակների համար շարունակական ՄԿՈՒ կազմակերպմանը: ՈՒԱՀ-ը նաև պաշտոնապես լիազորված է ԿԳՆ-ի կողմից որպես ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության վավերացման համակարգի (դեռևս պաշտոնապես չի գործարկվել երկրում) իրականացման համար պատասխանատու մարմին:

29. Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի ***Մասնագիտական կողմնորոշման և կարողությունների զարգացման կենտրոն*** (ՄԿԿԶԿ) մասնաճյուղը[34] գտնվում է ԱՍՀՆ-ի ենթակայության ներքո և պատասխանատու է կրթության բոլոր մակարդակներում մասնագիտական ուղղորդման և կարիերայի զարգացման ծառայությունների կազմակերպման և իրականացման բոլոր հարցերի համար, ինչպես նաև աշխատանք փնտրողների, այդ թվում՝ մեծահասակների համար: Այս կառույցը ստեղծվել է 2006թ. ՀԲ-ի կողմից ֆինանսավորվող Սոցիալական պաշտպանության կառավարման ծրագրի (ՍՊԿԾ) աջակցությամբ որպես երիտասարդների մասնագիտական կողմնորոշման կենտրոն: 2013թ. կենտրոնը վերանվանվեց Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոնի (ՄԿՄԿ), և դրանից ի վեր այն պատասխանատու է մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման ոլորտում քաղաքականության և մեթոդաբանության մշակման համար: Ինչպես նշվեց վերևում, ներկայումս կենտրոնը ԱՍՀԱԻ-ի մասնաճյուղ է: Այն նաև աջակցում է ՄԿՈՒ հաստատություններին կարիերայի ուղղորդման բաժիններ ստեղծելու, հանրակրթական դպրոցների աշակերտների, քոլեջների և ուսումնարանների ուսանողների և շրջանավարտների համար մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման ծառայությունների կազմակերպման և իրականացման գործում[35]: ՄԿԿԶԿ-ն զգալի աջակցություն է ստացել ԵԿՀ-ից՝ անձնակազմի վերապատրաստման, հաստատությունների կարիերայի ուղղորդման խորհրդատու-ների վերապատրաստման կազմակերպման, մեթոդաբանությունների մշակման և այլ հարցերում:

30. ՄԿՈՒ պետական հաստատությունների կառավարումը հիմնված է սոցիալական գործընկերության սկզբունքների վրա և «բազմաշահակից» կառավարման օրինակ է: Յուրաքանչյուր հաստատություն ունի **կոլեգիալ կառավարման մարմին**, այն կառավարման խորհուրդ, որը պատասխանատու է քոլեջի կամ ուսումնարանի տնօրենի ընտրության, զարգացման (բիզնես) պլանների և բյուջեի հաստատման, հաստատությունների ներքին կանոնակարգի քննարկման և հաստատման, ինչպես նաև ուսումնական պլանների, ծրագրերի և այլնի համար: Խորհրդի նիստերը գումարվում են եռամսյակը առնվազն մեկ անգամ (լրացուցիչ մանրամասների համար տես՝ Բաժին Ե.2.1):

Ա.2.3 ՄԿՈՒ հիմնական վիճակագրությունը

31. 2019թ. հունվարի դրությամբ Հայաստանում գործում էր 23 նախնական մասնագիտական ուսումնական հաստատություն՝ *արհեստագործական ուսումնարան* (դրանցից 7-ը Երևանում), և 80 միջին մասնագիտական ուսումնական հաստատություն՝ քոլեջ (դրանցից 26-ը Երևանում): Կար նաև 13 մասնավոր քոլեջ, որից 8-ը գտնվում էր Երևանում:

32. 2018-2019 ուս. տարում ՄԿՈՒ պետական հաստատություններում ուսանողների ընդհանուր թվաքանակը կազմել է 28,442 մարդ, որոնցից 13,177-ը (կամ 46.3%) կանայք էին: Ուսանողների ճնշող մեծամասնությունը (84.4%) ներգրավված են հիմնական ընդհանուր կրթության հենքով: Աղյուսակ 1-ը ներկայացնում է ՄԿՈՒ պետական հաստատություններում ընդգրկվածության հետ կապված որոշ ցուցանիշներ: Մասնավոր

[33] http://armntf.am/.
[34] http://www.mycareer.am.
[35] Մինչև 2013թ. ՄԿՄԿ-ն կարիերայի ուղղորդման ծառայություններ էր մատուցում ուղղակիորեն շահառուներին, օրինակ՝ հանրակրթական դպրոցի աշակերտներին, ՄԿՈՒ և համալսարանի ուսանողներին և շրջանավարտներին, ինչպես նաև մեծահասակներին:

քոլեջներում ուսանողների ընդհանուր թվաքանակը եղել է 1,509 հոգի (պետական ԿՈՒ հաստատությունների ուսանողների 5.3%-ի չափով):

Աղյուսակ 1. ՄԿՈՒ պետական հաստատությունների դիմորդները, ուսանողները և շրջանավարտները, 2016-2018**թթ**.

	2016-2017		2017-2018		2018-2019	
	Ընդամենը	**Կանայք**	**Ընդամենը**	**Կանայք**	**Ընդամենը**	**Կանայք**
Նախնական						
Դիմորդներ	3,161	1,058	3,298	1,198	2,926	949
Հիմնական կրթության հենքով	*2,078*	*434*	*2,172*	*546*	*2,217*	*452*
Միջնակարգ կրթության հենքով	*1,083*	*624*	*1,126*	*652*	*709*	*497*
Վճարովի	*5*	*3*	*152*	*67*	*52*	*35*
Ուսանողներ	6,251	1,758	6,500	1,913	6,723	1,822
Հիմնական կրթության հենքով	*5,173*	*1,135*	*5,364*	*1,252*	*6,003*	*1,320*
Միջնակարգ կրթության հենքով	*1,078*	*623*	*1,136*	*661*	*720*	*502*
Վճարովի	*10*	*3*	*156*	*68*	*56*	*35*
Շրջանավարտներ	2,359	822	2,671	1,006	2,045	866
Միջին						
Դիմորդներ	7,850	4,125	7,919	4,243	6,955	3,452
Հիմնական կրթության հենքով	*5,551*	*2,473*	*5,961*	*2,831*	*6,107*	*2,838*
Միջնակարգ կրթության հենքով	*2,299*	*1,652*	*1,958*	*1,412*	*848*	*614*
Վճարովի	*1,805*	*911*	*864*	*571*	*640*	*381*
Ուսանողներ	21,788	11,528	21,525	11,462	21,719	11,355
Հիմնական կրթության հենքով	*15,819*	*7,344*	*16,199*	*7,690*	*17,997*	*8,684*
Միջնակարգ կրթության հենքով	*5,969*	*4,184*	*5,326*	*3,772*	*3,722*	*2,671*
Վճարովի	*5,762*	*2,874*	*3,925*	*2,087*	*3,088*	*1,735*
Շրջանավարտներ	7,056	4,036	4,521	2,167	5,566	3,139
Ընդհանուր ՄԿՈՒ						
Դիմորդներ	11,011	5,183	11,217	5,441	9,881	4,401
Հիմնական կրթության հենքով	*7,629*	*2,907*	*8,133*	*3,377*	*8,324*	*3,290*
Միջնակարգ կրթության հենքով	*3,382*	*2,276*	*3,084*	*2,064*	*1,557*	*1,111*
Վճարովի	*1,810*	*914*	*1,016*	*638*	*692*	*416*
Ուսանողներ	28,039	13,286	28,025	13,375	28,442	13,177
Հիմնական կրթության հենքով	*20,992*	*8,479*	*21,563*	*8,942*	*24,000*	*10,004*
Միջնակարգ կրթության հենքով	*7,047*	*4,807*	*6,462*	*4,433*	*4,442*	*3,173*
Վճարովի	*5,772*	*2,877*	*4,081*	*2,155*	*3,144*	*1,770*
Շրջանավարտներ	9,415	4,858	7,192	3,173	7,611	4,005

Աղբյուրը՝ ՀՀ Վիճակագրական կոմիտե[36]

33. ՄԿՈՒ ուսանողների բաշխումն ըստ մասնագիտությունների խմբերի ներկայացված է Գծապատկեր 1-ում:

[36] ՀՀ սոցիալական իրավիճակը 2018թ. (չհրապարակված): ՀՀ սոցիալական իրավիճակը 2017թ. (https://www.armstat.am/en/?nid=82&id=1958): ՀՀ սոցիալական իրավիճակը 2016թ. (https://www.armstat.am/en/?nid=82&id=2059).

Գծապատկեր 1. Միջին և նախնական ՄԿՈՒ ուսանողների բաշխումն ըստ մասնագիտությունների (2017-2018 **ուստարի**)



Միջին ՄԿՈՒ



Նախնական ՄԿՈՒ

34. ՄԿՈՒ պետական հաստատություններում անձնակազմի ընդհանուր թվաքանակը կազմել է 6,561 մարդ (1,463-ը՝ արհեստագործական ուսումնարաններում և 5,098-ը՝ քոլեջներում): Նրանցից 3,874-ը մանկավարժներ էին (74.2%-ը՝ կանայք):

35. Արհեստագործական ուսումնարաններում դասավանդողների 81.6%-ը (84.0%-ը՝ կանայք) ունեն բարձրագույն կրթություն: Քոլեջներում այս ցուցանիշը 92.9% է (կանանց համար՝ 93.7%): Դասավանդողների 8.2%-ը (կանանց 8.5%-ը) ունեն հետբուհական կրթություն: Միջին ՄԿՈՒ հաստատություններում 2013թ. մինչև 2018թ, ընկած ժամանակահատվածում ուսանող-դասավանդող հարաբերակցությունը նվազել է 1.4 տոկոսային կետով, սակայն նախնական ՄԿՈՒ-ի համար՝ 2013թ. մինչև 2017թ. 0.5 տոկոսային կետով նվազելուց հետո կրկին հասել է 7.2-ի (Աղյուսակ 2):

Աղյուսակ 2. Ուսանող-դասավանդող հարաբերակցությունը ՄԿՈՒ հաստատություններում, 2013-2017**թթ**.

	2013	2014	2015	2016	2017	2018
Նախնական ՄԿՈՒ	7.0	7.4	7.2	7.3	6.6	7.2
Միջին ՄԿՈՒ	7.4	6.6	6.1	6.1	6.0	5.6

Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե[37]

36. 2017թ. կրթության ոլորտի պետական ծախսերը կազմել են 127,158,715.2 հազար ՀՀ դրամ[38], որը կազմում էր պետական բյուջեի 8.68%-ը և ՀՆԱ-ի 2.12%-ը: 2018թ. կրթության բյուջեի (127,594,171.4 հազար ՀՀ դրամ)[39] աննշան (0.34%) աճի շնորհիվ վերոնշյալ երկու ցուցանիշները աճել և հասել են 9.38% և 2.29%-ի՝ համապատասխանաբար[40]:

37. Միևնույն ժամանակ, ՄԿՈՒ բյուջեն 2017 թվականից մինչև 2018թ. աճել է 5%-ով (18,577,934.2 հազար դրամից մինչև 19,510,215.60 հազար դրամ): Հետևաբար, ՄԿՈՒ բյուջեի մասնաբաժինը կրթության ընդհանուր բյուջեում աճել է 14.61%-ից մինչև 15.29%, ընդհանուր պետական բյուջեում՝ 1.27%-ից մինչև 1.43%, և որպես ՀՆԱ-ի տեսակարար կշիռ՝ 0.31%-ից մինչև 0.33%[41]:

38. 2019թ. կրթության բյուջեն կտրուկ աճեց (285,603,849.2 հազար դրամ) և կազմեց պետական բյուջեի 17.33%-ը[42]: Այնուամենայնիվ, ՄԿՈՒ բյուջեն զգալիորեն նվազել է (12,289,423.2 հազար դրամ) և կազմում է կրթության բյուջեի 4.30%-ը և պետական բյուջեի 0.75%-ը:

---

[37] Ibid.
[38] «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» օրենք:
[39] «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» օրենք:
[40] Սեփական հաշվարկներ:
[41] «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» և «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» օրենքներ, սեփական հաշվարկներ:
[42] «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» օրենք:

Ա.2.4 ՄԿՈՒ տեսիլը և հիմնական բարեփոխումները

39. ԿԳՆ-ն մշակել էր Կրթության զարգացման 2016-2025թթ. պետական ծրագրի նախագիծը, որը պարունակում էր նաև ՄԿՈՒ-ին վերաբերող բաժին: Սակայն այն չընդունվեց կառավարության կողմից: Որոշվեց մշակել ավելի երկարաժամկետ փաստաթուղթ՝ Կրթության զարգացման ռազմավարություն 2020-2030, որը մշակման ընթացում է: Նախատեսվում է, որ առաջին նախագիծը առկա կլինի 2019թ. սեպտեմբերին, իսկ փաստաթղթի վերջնական տարբերակը կհաստատվի կառավարության կողմից մինչև տարեվերջ:

40. Ներկայումս, ՄԿՈՒ ոլորտում առկա իրավիճակը համադրելի է ամբողջ կրթական համակարգի վիճակի հետ. նախորդ գլխավոր քաղաքական փաստաթուղթը՝ *ՄԿՈՒ 2017-2021թթ. բարեփոխումների ծրագիրը*[43], սպառվել էր, և ԿԳՆ-ն մշակել էր ՄԿՈՒ բարեփոխումների ծրագրի նախագիծը (2017-2021): Այն ներկայացվել է կառավարություն 2017թ. օգոստոսին, սակայն չհաստատվեց «մեթոդաբանական պատճառներով»[44] : ՄԿՈՒ քաղաքականության փաստաթղթի հաջորդ տարբերակը, որը վերանվանվեց «ՄԿՈՒ 2018-2022թթ. ռազմավարական ծրագիր և դրա իրականացման գործողությունների ծրագիր», ՀՀ ԿԳՆ-ի կողմից ներկայացվեց է կառավարության հաստատմանը 2018թ. դեկտեմբերին, սակայն կրկին վերադարձվել է նախարարություն այն՝ նոր կառավարության ծրագրի և գործողությունների պլանի համապատասխան վերանայելու հրահանգով: Վերջինս կազմվել է 2019թ. հունիսին, իսկ 2019-2023թթ. գործողությունների ծրագիրը նախատեսվում էր ընդունվել 2019թ. մայիսին: Ի վերջո, 2019թ. հունիսին որոշում է կայացվել ոչ թե ներկայացնել ՄԿՈՒ համակարգը որպես ինքնուրույն փաստաթուղթ, այլև ներառել այն նախորդ պարբերությունում նշված համապարփակ կրթության ռազմավարության փաստաթղթի մեջ: Միևնույն ժամանակ կա համաձայնագիր, որ գոյություն ունեցող նախագծով և դրա հիմնական բովանդակությամբ սահմանված խնդիրներն ու նպատակները առանց հիմնական փոփոխությունների կփոխանցվեն Կրթության զարգացման ռազմավարություն 2020-2030-ի մեջ: Ուստի, ողջամիտ է դրանք ներկայացնել այստեղ:

41. Նպատակն է՝ բարելավել մասնագիտական կրթության որակը, բարձրացնել կառավարման համակարգի արդյունավետությունը, հզորացնել ինստիտուցիոնալ և մարդկային կարողությունները, արդիականացնել բովանդակությունը ներկայիս աշխատաշուկայի պահանջներին համապատասխանությունն ապահովելու նպատակով, բարձրացնել ոլորտի ծախսարդյունավետությունը, ինչպես նաև ամրապնդել սոցիալական երկխոսությունը: Ռազմավարության հիմնական նպատակներն են՝

- ՆՄՄԿ որակի բարձրացում և դրա համապատասխանեցում աշխատաշուկայի պահանջներին՝ հաշվի առնելով ՀՀ յուրաքանչյուր մարզի տարածքային զարգացման ռազմավարության գերակա ուղղությունները և խնդիրները,
- բնակչության բոլոր խավերի համար ՆՄՄԿ մատչելիության ապահովում,
- ՄԿՈՒ համակարգի արդյունավետության բարելավումը ուսումնական հաստատություններում որակի ներքին ապահովման համակարգի և որակի արտաքին գնահատման գործընթացի ներմուծման միջոցով,
- ՆՄՄԿ շրջանավարտների շարունակական կրթության ապահովում,
- ՆՄՄԿ հաստատությունների ինստիտուցիոնալ և մարդկային կարողությունների հզորացում,
- որակավորումների համապատասխանեցում Որակավորումների ազգային շրջանակի և Որակավորումների եվրոպական շրջանակի հետ,
- ուսումնական հաստատությունների մասնակցության ընդլայնումը միջազգային ցանցերում:
- գյուղատնտեսական ճյուղի ՆՄՄԿ հաստատությունների վերանորոգում և վերակառուցում՝ ներդնելով էներգաարդյունավետ համակարգ և ապահովելով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համար նշված հաստատությունների հասանելիությունը,

[43]Կառավարության արձանագրային որոշում № 27, 04.07.2012.

[44]Կառավարությունը իր № 42 05.10.2017 որոշմամբ, հաստատել է պետական եկամուտների և ծախսերի վրա ազդող ռազմավարական փաստաթղթերի նկատմամբ վերահսկողության մշակման, հանձնման և իրականացման մեթոդական հրահանգը, և այդ ժամանակից ի վեր բոլոր համապատասխան փաստաթղթերը պետք է մշակվեն և ներկայացվեն Կառավարություն հաստատման՝ համաձայն այս մեթոդաբանության:

- ՆՄՄԿ հաստատություններում համապատասխան մասնագետներով համալրված կարիերայի ուղղորդման միավորների ստեղծում, ուսումնական հաստատությունների և գործատուների միջև համագործակցության ընդլայնում և զարգացում,
- ՆՄՄԿ կառավարման համակարգի թվայնացում, հաստատությունների հաշվետվողականության և գործունեության թափանցիկության ու հրապարակայնության բարձրացում,
- կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխում՝ ուղղորդելով դրանք դեպի ուսումնառության վերջնարդյունքները, ինչպես նաև շրջանավարտների զբաղունակության բարձրացմանը և մասնագիտական կարողությունների համապատասխանեցմանը աշխատուժի շուկայի արդի պահանջներին,
- ՆՄՄԿ հաստատությունների խոշորացում՝ այդ թվում մասնագիտական կրթական ծրագրերի միավորում, ձևավորելով նոր ցանցային և համագործակցային համակարգ:

42. Ռազմավարության նախագիծը սահմանում է ինը գերակայություններ՝

1) **Կառուցվածքային-բովանդակային բարեփոխում**, որի ժամանակ առաջին հերթին կփոխվի կրթական հաստատությունների ցանցը:

2) **Սոցիալական գործընկերության ամրապնդում**. որը մասնագիտական կրթության համակարգում կիրականացվի սոցիալական գործընկերության հայեցակարգի վերանայմամբ՝կմշակվի գործատուների ներգրավման և ակտիվացման մեխանիզմները, ինչպես նաև բիզնեսի և ՄԿՈՒ համագործակցության մշակույթի զարգացմամբ:

3) **Կրթական ծրագրերի բովանդակային արդիականացում**, որի անհրաժեշտությունը պայմանավորված է գոյություն ունեցող պետական կրթական չափորոշիչների վերանայմամբ և նորերի ստեղծմամբ՝ հաշվի առնելով տարածաշրջանի և/կամ ոլորտի զարգացման ծրագրերը:

4) **Ուսումնական գործընթացի կազմակերպման մոդելների մշակում**, որը թույլ կտա կիրառել գործնական ուսուցման արդիականացված բովանդակություն աշխատավայրում, ինչպես նաև ուսումնական հաստատություններում և վերապատրաստման կենտրոններում:

5) **Գնահատման ձևերի բարելավում**: ՄԿՈՒ համակարգում աշխատաշուկայի և հասարակության ժամանակակից պահանջներին համապատասխան կատարված փոփոխությունները պետք է ուղեկցվեն ուսումնառության ռազմավարությունների փոփոխություններով, ուսանողների գիտելիքների և կարողությունների գնահատմամբ:

6) **Համացանցի վրա հիմնված կրթական տեխնոլոգիաների ներդրում**: Ժամանակակից մարտահրավերները պահանջում են կրթության ընթացակարգերի օպտիմալացում և ուսուցման գործընթացի կազմակերպում ավելի քիչ ռեսուրսների կիրառմամբ նույն նպատակներին առավել արդյունավետ հասնելու համար:

7) **ՄԿՈՒ համակարգի միջազգայնացում**, որը ենթադրում է այնպիսի պայմանների ստեղծում, որոնք կնպաստեն շրջանավարտների մասնագիտական որակավորումների մակարդակի բարձրացմանը միջազգային աշխատաշուկայի պահանջներին համապատասխան:

8) **Երիտասարդության զբաղվածության և ձեռներեցային գործունեության խթանում**: Ներկայիս բիզնես միջավայրը,որում գործում են կազմակերպությունները, պահանջում են արագընթաց փոփոխություններ և շարունակական զարգացում:

9) **Մարդկային ռեսուրսների զարգացման ռազմավարություն**: Ժամանակակից տնտեսության մեջ մարդկային ռեսուրսների զարգացումը հավերժ գործընթաց է՝ պայմանավորված բիզնես միջավայրով և մշտական փոփոխություններով:

43. Վերոնշյալ գերակայությունները նաև ուղեցույց են ծառայել ԿԳՆ-ի վերջին երեք տարիների գործունեության համար (2017-2019) առանց որևէ ՄԿՈՒ ռազմավարության մեջ պաշտոնապես ընդգրկվելու: Բարեփոխումների հիմնական ձեռքբերումներն են՝

1) ՄԿՈՒ հաստատությունների կառավարման խորհուրդների արդյունավետությունը բարձրացնելու և նրանց գործառույթների լիարժեք կատարումն ապահովելու նպատակով՝ 2018թ. վերանայված

սոցիալական գործընկերության հայեցակարգը համաձայնեցվել է ՄԿՈՒ ազգային խորհրդի հետ և հաստատվել է ՀՀ ԿԳՆ հրամանով[45]:

2) Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական մասնագիտություններն ու որակավորումները աշխատաշուկայի իրողություններին և ՀՀ մարզերի տնտեսական զարգացման ուղղություններին համապատասխանեցնելու համար կառավարության կողմից վերանայվել է ՄԿՈՒ մասնագիտությունների և որակավորումների դասակարգիչը[46]:

3) ՄԿՈՒ համակարգում աշխատող ավելի քան 1500 մարդ (հաստատությունների տնօրեններ, փոխտնօրեններ, դասավանդողներ և այլ մասնագետներ) վերապատրաստվել են ՄԿՈՒԶԱԿ-ի աջակցությամբ[47]:

4) Ամեն ամիս լույս է տեսնում «Մասնագիտական կրթություն և ուսուցում» ամսագիրը:

5) Մշակվել (կամ վերանայվել) և հաստատվել է 56 նոր ՄԿՈՒ պետական կրթական չափորոշիչ: Դրանք բոլորը ներառում են ձեռներեցության պարտադիր մոդուլը:

6) 95 ՄԿՈՒ հաստատություններում ստեղծվել են վերապատրաստված կարիերայի խորհրդատուներով համալրված կարիերայի ստորաբաժանումներ, որոնք սկսել են կարիերայի ուղղորդման ծառայություններ մատուցել ուսանողներին, շրջանավարտներին, ինչպես նաև ՄԿՈՒ դիմորդներին:

7) Հայաստանում GIZ-ի աջակցությամբ ՄԿՈՒ համակարգում ներդրված դուալ ուսուցման համակարգն ընդլայնելու նպատակով 7 ՄԿՈՒ հաստատություններում դուալ ուսուցման ծրագրեր են փորձարկվում 8 մասնագիտությունների գծով:

8) ԵԿՀ «Հմտությունների հաղորդակցություն» (Skills Connexion) տարածաշրջանային ծրագրի շրջանակներում մշակվել է աշխատանքի վրա հիմնված ուսումնառության հայեցակարգը և հաստատվել ՄԿՈՒԶԱԽ-ի կողմից:

9) Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ցանցն օպտիմալացնելու, կառավարման արդյունավետությունը բարելավելու և ՄԿՈՒ հաստատությունների ծախսարդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ ԿԳՆ-ի կողմից կատարվել է վերոնշյալ հաստատությունների քարտեզագրում:

10) 12-ամյա պարտադիր կրթության ներդրման արդյունքում փոփոխվել է ՄԿՈՒ ուսանողներին պետական կրթաթոշակների և ուսանողական նպաստների տրամադրման մասին կանոնակարգը, որը հնարավոր է դարձրել ավելացնել ՄԿՈՒ հաստատություններում անվճար սովորող ուսանողների թիվը[48]:

11) ՄԿՈՒ դասավանդողների պատրաստման մագիստրոսական դասընթացը պիլոտային փուլում է մի քանի համալսարաններում:

44. Կարևորագույն բարեփոխումներից մեկը, որը դեռևս ընթացքում է, ՄԿՈՒ հաստատությունների ցանցի օպտիմալացումն է: 2016թ. ի վեր Երևանի ֆինանսատնտեսագիտական քոլեջը և Երևանի գյուղատնտեսական քոլեջը միացվել են համապատասխանաբար Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանին և Հայաստանի ազգային ագրարային համալսարանին, միավորվել են Սևանի պետական քոլեջը և Սևանի արհեստագործական պետական քոլեջը, Հրազդանի պետական բժշկական քոլեջը միացվել է Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջին, Բերդի արհեստագործական ուսումնարանը միացվել է Բերդի պետական քոլեջին: Նախատեսվում է ևս 10 միավորում Երևանում և 3 մարզերում: Սա կնվազեցնի հաստատությունների թիվը 11-ով:

---

[45] ԿԳՆ հրաման № 233-A/Q, 15.03.2018.
[46] ՀՀ կառավարության որոշում № 977-Ն, 06.09.2018.
[47] ՄԿՈՒԶԱԿ-ի զեկույցները 2017 – 2018թթ. համար http://www.mkuzak.am/?page_id=166.
[48] ՀՀ կառավարության որոշում № 749-Ն, 29.06.2017.

Ա.3: ՄԿՈՒ համատեքստը

Ա.3.1 Սոցիալ-տնտեսական համատեքստ

45. Հայաստանի Հանրապետությունը վերջին 15 տարիների ընթացքում հասել է համեմատաբար կայուն աճի, որը բարձրացրել է իր կարգավիճակը ցածր միջինից բարձր միջին եկամուտներ ունեցող տնտեսության 2017թ.[49]: 189 երկրների շարքում Հայաստանը 2018թ. զբաղեցրել է 83-րդ տեղը (առաջ անցնելով 2015թ. զբաղեցրած 84-րդ տեղից) և գտնվում է բարձր մարդկային զարգացում ունեցող երկրների խմբում[50]:

46. 2009թ. ՀՆԱ-ի և մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի կտրուկ անկումը (երկուսն էլ ավելի քան 25%) հաղթահարվել է, և 2017թ. դրանք գրեթե հասել են 2008 և 2014թթ. արժեքներին, երբ գրանցվել էին երկու բարձրակետերը (Գծապատկեր 2):

Գծապատկեր 2. ՀՆԱ-ի (միլիոն ԱՄՆ դոլար) և մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի (ԱՄՆ դոլար) դինամիկան[51]





47. Աղքատության ցուցանիշները փոքր-ինչ բարելավվել են վերջին տարիներին: Այսպես՝ մեկ չափահաս անձի հաշվով, աղքատության մակարդակը 2017 թվականին կազմել է 25.7%՝ նվազելով 2010 թվականի ցուցանիշի (35.8%) համեմատ: Սակայն, բնակչության 30 տոկոսը դեռևս գտնվում է աղքատության ազգային գծից (մեկ շնչի հաշվով օրական 3.3 ԱՄՆ դոլար) ներքև[52]:

48. Տնտեսության առավել դինամիկ զարգացող ճյուղերն են սննդի արդյունաբերությունը, ՏՏ-ն, զբոսաշրջային ծառայությունները, հանքարդյունաբերությունը, տեքստիլի և կոշիկի, ծխախոտի, թարմ մրգերի ու բանջարեղենի արտադրությունը: 2008թ. ֆինանսական ճգնաժամից ի վեր արտահանման հարաբերակցությունը ՀՆԱ-ին կրկնապատկվել է և հասել մոտ 18.6%-ի 2017թ: Այնուամենայնիվ, արտահանումը շարունակում է մնալ ռեսուրսների վրա հիմնված և սահմանափակվում է մի քանի ապրանքախմբերով՝ բազային մետաղներ, ադամանդներ, սնունդ և խմիչքներ (պահածոյացված և թարմ սնունդ, կոնյակ) և ծխախոտ[53]:

49. 2010 թվականից մինչև 2017թ. բարելավվել են մի շարք ցուցանիշներ: Այսպիսով, կյանքի միջին տևողությունը աճել է 73-ից մինչև 75 տարի, մինչդեռ մահացության մակարդակը (մինչև 5 տարեկան կենդանի մնացած 1000 երեխայի հաշվով) նվազել է 18-ից մինչև 13 տոկոս: Համացանցից օգտվող բնակչության մասնաբաժինը կազմել է 69.7%՝ 2010թ. 25%-ի դիմաց: Գործարարություն սկսելու համար պահանջվող օրերի քանակը նվազել է 14-ից 5-ի: Միևնույն ժամանակ, գրանցվել է մի փոքր բացասական դինամիկա դպրոցական համախառն ընդգրկվածության ցուցանիշում՝ տարրական կրթության համար ցուցանիշը նվազել է 99.1% -ից

---

[49] Համաշխարհային բանկ: http://databank.worldbank.org/data/download/site-content/OGHIST.xls.
[50] ՄԱԶԾ Մարդկային զարգացման ազգային զեկույց 2018: http://hdr.undp.org/en/2018-update
[51] Համաշխարհային բանկ: https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.CD?locations=AM&view=chart և https://data.worldbank.org/indicator/NY.GDP.PCAP.CD?locations=AM.
[52] Հայաստանի ԿԶՆ իրականացման կամավոր ազգային ակնարկ: Զեկույց ՄԱԿ-ի բարձր մակարդակի քաղաքական ֆորումը Կայուն զարգացման վերաբերյալ (վերափոխում դեպի կայուն և դիմացկուն հասարակություններ) 2018թ. https://sustainabledevelopment.un.org/content/documents/19586Armenia_VNR_2018.pdf.
[53] Ibid.

մինչև 94.2%, մինչդեռ միջնակարգ կրթության համար՝ 105% -ից մինչև 86%: Տարրական կրթության ավարտման մակարդակը նույնպես նվազել է՝ 94%-ից մինչև 92%[54]:

50. Սույն զեկույցի համապատասխան բաժիններում ներկայացված՝ միգրացիայի, ակտիվության ցուցանիշի, զբաղվածության և գործազրկության վերաբերյալ տվյալները ցույց են տալիս սոցիալ-տնտեսական իրավիճակի որոշակի բարելավումներ, այնուամենայնիվ, շատ ցուցանիշներ դեռևս մտահոգիչ են:

51. Երկրում մարզերի միջև առկա են զգալի անհամաչափություններ: Դրանք պայմանավորված են մի շարք գործոններով, ինչպիսիք են՝ տնտեսական զարգացման մակարդակը, կլիման, հողերի բերրիությունը, բնակչության խտությունը և այլն: Այսպես, օրինակ՝ 2018թ. Սյունիքում (զարգացած հանքարդյունաբերություն ունեցող մարզ) գրանցված ամենաբարձր միջին ամսական անվանական աշխատավարձը հավասար էր 234.6 հազար դրամի, որն ավելի քան երկու անգամ գերազանցում էր ամենացածր միջինը՝ 105.6 հազար դրամ Արագածոտնում: Ազգային միջինը 172.7 հազար դրամ էր, մինչդեռ Երևանում՝ 194.7 հազար դրամ: Գործազրկության ամենաբարձր ցուցանիշը, որը հավասար էր 27.1% (26.8%-ը տղամարդկանց և 27.3%-ը՝ կանանց համար) և 24.3% (29.3%-ը՝ տղամարդկանց և 19.4%-ը կանանց համար) գրանցվել են Երևանում և Շիրակում՝ համապատասխանաբար: Դրանք մոտ հինգ անգամ գերազանցում են գործազրկության ամենացածր ցուցանիշին, որը գրանցվել է Գեղարքունիքում (մարզ, որտեղ գտնվում է Սևանա լիճը)՝ 5.0% (7.1%-ը տղամարդկանց և 2.3%-ը կանանց համար): Ուշագրավ է, որ վեց մարզերում կանանց գործազրկության մակարդակը ավելի ցածր է, քան տղամարդկանցը, և մյուս չորս մարզերում և Երևանում դրանք չեն գերազանցում տղամարդկանց գործազրկության մակարդակը ավելի քան 2.6 տոկոսով[55]:

Ա.3.2 Միգրացիան և փախստականների հոսքերը

52. Վերջին տարիներին զուտ միգրացիան ցույց տվեց դրական փոփոխություն, չնայած այն շարունակում է մնալ բավականին բացասական: Այս ցուցանիշը 2016-2018թթ. համեմատությամբ գրանցել է տալիս աճ 6.3 տոկոսային կետով, և 2016-2019թթ. հունվար-մարտ ժամանակահատվածի համար անկում՝ 1.8 տոկոսային կետով (Աղյուսակ 3):

Աղյուսակ 3. Զուտ միգրացիայի դինամիկան 2016-2019**թթ**

Տարի	Հունվար-դեկտեմբեր	Հունվար-մարտ
2016	-24.8	-5.7
2017	-24.0	-5.1
2018	-18.5	-4.0
2019	…	-3.9

Աղբյուրը՝ ՀՀ Վիճակագրական կոմիտե[56]

53. Ըստ 2017թ. ՏՏԿԱՀ արդյունքների[57], տնային տնտեսությունների 22.2%-ը 2014-2017թթ. ունեցել են արտաքին և ներքին միգրացիոն գործընթացներում ներգրավված անդամներ, որոնք կազմել են 15 և բարձր տարիքի անդամների 10.4%-ը: 2017թ. դրությամբ տնային տնտեսությունների անդամների 52.4%-ը (շուրջ 137 հազ. մարդ) դեռևս բացակայել են և գտնվել են ՀՀ այլ մարզում, Երևանում, տվյալ մարզի այլ բնակավայրում կամ այլ երկրում: 32.8%-ը (շուրջ 86 հազ. մարդ) վերադարձել են իրենց մեկնումներից, իսկ 2.0%-ը (շուրջ 5.2 հազ. մարդ) առաջին անգամ են ժամանել տվյալ բնակավայր[58]:

54. 2017թ. դրությամբ տեղաշարժերի 13.9%-ի բնույթը եղել է ներհանրապետական՝ Երևան քաղաքի ու ՀՀ մարզերի միջև, 10.5%-ինը՝ Արցախի Հանրապետության հետ, իսկ մնացած 76.6%-ինը՝ միջպետական, որի գերակշիռ մեծամասնության՝ 78.2%-ի տեղաշարժերն իրականացվել են Ռուսաստանի Դաշնության հետ: Այս

[54] Համաշխարհային բանկ. Հայաստանի սոցիալական պատկերը https://databank.worldbank.org/views/reports/reportwidget.aspx?Report_Name=CountryProfile&Id=b450fd57&tbar=y&dd=y&inf=n&zm=n&country=AMD.

[55] Պարենային ապահովություն և աղքատություն 2018թ.: ՀՀ Վիճակագրական կոմիտե 2019թ. https://www.armstat.am/file/article/f_sec_4_2018_1.pdf.

[56] https://www.armstat.am/file/article/sv_03_19a_520.pdf.

[57] Համաշխարհային բանկ, 2017. https://datacatalog.worldbank.org/dataset/armenia-integrated-living-conditions-survey-2016.

[58] ՀՀ վիճակագրական կոմիտե, 2018. https://www.armstat.am/file/article/demog_2018_7.pdf.

երկիրը առաջատար էր աշխատանքային միգրացիայի առումով (91.8%) նույնպես, բայց ինչպես երևում է Աղյուսակ 4-ում, վերադարձողների մեծ մասը (ավարտված աշխատանքի պատճառով) ՌԴ-ից էր: Բիզնես հիմնելու նպատակով գաղթածների երկրորդ հանգրվանը ՌԴ-ից հետո (43.0%), եղել են եվրոպական երկրները (20.1%)[59]:

Աղյուսակ 4. Միգրանտների մասնաբաժինը՝ ըստ մեկնելու/վերադառնալու պատճառների և գտնվելու/վերադառնալու վայրի, 2017թ. (%)

Գտնվելու/վերադառնալու պատճառները	Գտնվելու/վերադառնալու վայրը						
	Երևան	ՀՀ մարզեր	Արցախ	ՌԴ	ԱՊՀ այլ երկրներ	Եվրոպական երկրներ	Այլ երկրներ
Աշխատելը/աշխատանք փնտրելը	1.9	1.7	0.9	91.8	1.5	1.1	1.1
Գործնական	0	0	11.7	43.0	13.9	20.1	11.3
Աշխատանքի ավարտ	1.1	0.6	0.7	94.8	2.8	0	0

Աղբյուրը՝ 2017թ. ՏՏԿԱՀ

55. Ըստ վերոնշյալ աղբյուրի՝ հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում միգրանտ անդամների ավելի քան 50%-ը գումար և/կամ ապրանք է ուղարկել իրենց ընտանիքներին և/կամ ընկեր-բարեկամներին:

56. 2012թ. ի վեր Սիրիայից ապաստան հայցողների մեծ հոսք է (հիմնականում էթնիկ հայեր) գաղթել Հայաստան: Ըստ ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի (ՄԱԿ ՓԳՀ)[60] տվյալների՝ նրանց թիվը կազմել է շուրջ 22 հազար մարդ, որոնցից 15,000-ը շարունակում են մնալ և պաշտպանություն ստանալ Հայաստանում: Աշխատաշուկայում նրանց ներգրավվածության վերաբերյալ պաշտոնական տվյալներ (գրանցված գործազրկություն) չկան, սակայն հայտնի է, որ նրանցից շատերը բարձրակարգ արհեստավորներ ու ձեռներեցներ էին ու հիմնել են իրենց փոքր բիզնեսները:

57. 2012 թվականից սիրիահայերը ներգրավված են ՄԿՈՒ հաստատություններում, և վիճակագրությունը[61] ցույց է տալիս, որ եթե մինչև 2011թ. ՀՀ ՄԿՈՒ համակարգում սովորում էր առավելագույնը չորս սիրիացի, ապա 2017թ. նրանք արդեն 17-ն էին (5 կին), և 2018թ. նրանց թիվը հասել է 51-ի (16 կին): Բարձրակետը գրանցվել է 2015թ.՝ 59 ուսանող (33 կին):

58. Հայաստանում 2018թ. դեկտեմբերի 31 դրությամբ փախստականներ և ապաստան հայցողներ կային նաև Ադրբեջանից (1,390 մարդ), Իրաքից (1,092), Արցախի Հանրապետությունից (573), Ուկրաինայից (122), Իրանից (76), Եմենից (21) և այլ երկրներից (102)՝ ընդհանուր թվով 18,085 մարդ:

Ա.3.3 Կրթության ոլորտի համատեքստը

59. Ինչպես նշվեց վերևում (տես Բաժին Ա.2.1), հիմնական ընդհանուր և միջնակարգ ընդհանուր կրթությունից հետո ուսանողները կարող են ընդունվել ՄԿՈՒ երկու մակարդակները՝ նախնական և միջին: Այսպիսով, Հայաստանում ՄԿՈՒ-ն իրականացվում է միջնակարգ կրթության և հետմիջնակարգ կրթության մակարդակներով (Հայաստանի կրթության համակարգի կառուցվածքը տես Հավելված 1-ում):

60. Կարևոր է նշել, որ հիմնական ընդհանուր կրթության հենքի վրա ՄԿՈՒ հաստատություններում (երկու մակարդակներում) ընդգրկված ուսանողները մասնագիտական ուսուցմանը զուգահեռ ուսումնասիրում են նաև հանրակրթական առարկաներ: Ուստի, նրանց դիպլոմները ճանաչվում են նաև որպես միջնակարգ ընդհանուր կրթության վկայականներ և թույլ են տալիս ուսումը շարունակել համալսարաններում: Նախկինում, նախնական ՄԿՈՒ ուսանողներին հնարավորություն էր ընձեռվում չմասնակցել ընդհանուր դասերին և ձեռք բերել մասնագիտական որակավորման դիպլոմ (տես՝ ՈԱՇ 3-րդ մակարդակի բացատրությունները Բաժին Ա.2.1-ում): ՄԿՈՒ շրջանավարտների այս կատեգորիան, այնուամենայնիվ, համալսարան ընդունվելու իրավունք չունի:

61. 2018-2019 ուս. տարում հիմնական ընդհանուր կրթության հենքով ՄԿՈՒ հաստատություններում սովորող ուսանողները կազմել են միջնակարգ կրթության ծրագրերում ներգրավվածների (այդ թվում՝ հանրակրթական ավագ դպրոցում սովորողների) ընդհանուր թվի 32.1%-ը (կանանց համար մասնաբաժինը եղել է՝ 30.0%):

[59] Ibid.
[60] https://www.un.am/en/agency/UNHCR.
[61] ՀՀ սոցիալական վիճակը 2012-2017թթ.: ՀՀ վիճակագրական կոմիտե:

Մասնավորապես՝ հիմնական ընդհանուր կրթություն ունեցողների (9-րդ դասարան) 32.1%-ը (կանայք՝ 29.6%) շարունակել են իրենց կրթությունը ՄԿՈՒ հաստատություններում: Վերջին 5 տարիներին ՄԿՈՒ ուսանողների մասնաբաժինը միջնակարգ կրթության ծրագրերում ընդգրկված սովորողների ընդհանուր թվի մեջ ցույց է տալիս կայուն աճ (Աղյուսակ 5):

Աղյուսակ 5. Հիմնական ընդհանուր կրթության հենքով ՄԿՈՒ ուսանողների մասնաբաժինը միջնակարգ կրթություն ստացողների ընդհանուր թվի մեջ

Տարի	Հիմնական ընդհանուր կրթության հենքով ՄԿՈՒ ուսանողների մասնաբաժինը միջնակարգ կրթություն ստացողների ընդհանուր թվում		ՄԿՈՒ հաստատություններ ընդունված՝ հիմնական ընդհանուր կրթություն ստացածների մասնաբաժինը՝ ըստ տարիների	
	Ընդհանուր	*Կանայք*	*Ընդհանուր*	*Կանայք*
2018-2019	32.1%	30.0%	32.1%	29.6%
2017-2018	31.5%	27.6%	23.6%	20.5%
2016-2017	30.5%	26.0%	20.6%	17.4%
2015-2016	29.4%	25.1%	19.1%	15.9%
2014-2015	27.1%	23.1%	16.6%	13.6%

Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

62. Քոլեջների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտներին թույլատրվում է ուսումնառության շարունակել համալսարաններում համապատասխան մասնագիտությամբ՝ երկրորդ կուրսից: Անցման ընթացակարգերը սահմանվում են կառավարության[62] կողմից հաստատված կարգով և բավականին բարդ են: Դրանք, մասնավորապես պահանջում են, որ կրթության բովանդակության տարբերությունը (առարկաներ, մոդուլներ) չգերազանցի որոշակի սահմանը: Այն գնահատվում է համապատասխան բուհերում ստեղծված հատուկ հանձնաժողովների կողմից, որոնք նաև ընտրում է քոլեջի շրջանավարտներին՝ ելնելով նրանց գնահատականներից: Բացի այդ, ամեն տարի ԿԳՆ-ն հաստատում է այն քոլեջների և բուհերի ցանկերը, որոնց միջև թույլատրվում է անցումը, ինչպես նաև ընդունելության տեղերի քանակը՝ ըստ հաստատությունների, որոնք նախատեսվում են այդ անցման համար: Օրինակ՝ 2,310 տեղ առկա կրթության, և 1,431-ը՝ հեռակա կրթության համար հատկացվել է 26 քոլեջների 2017-2018 ուս. տարվա, և 1,647 և 1,371 տեղ 2018-2019 ուս. տարվա համար: 2019-2020 թվականների համար նախատեսված է 1,411 և 1,377 տեղ՝ համապատասխանաբար:

63. Ըստ «Կրթության մասին» օրենքի՝ մասնագիտական յուրաքանչյուր մակարդակ, ներառյալ ՄԿՈՒ-ն, ունի այսպես կոչված հիմնական և լրացուցիչ ծրագրեր: Առաջինը, որը նկարագրված է վերևում, որակավորման հանգեցնող ֆորմալ կրթությունն է, մինչդեռ երկրորդը ձևակերպված է որպես *«լրացուցիչ (շարունակական) կրթական ծրագրերում իրականացվող ոչ ֆորմալ ուսումնառություն առավելագույնը հինգ ամիս տևողությամբ»*[63]: Օրենքը սահմանում է, որ լրացուցիչ կրթական ծրագրերը իրականացվելու են մարդու ողջ կյանքի ընթացքում մասնագիտական և անհատական կրթական կարիքները բավարարելու համար և համարվում են ոչ ֆորմալ ուսումնառության ապահովման միջոց: Լրացուցիչ կրթության նպատակն է կատարելագործել, թարմացնել և շարունակել նախկինում ձեռքբերված գիտելիքները, հմտությունները, կարողությունները և արժեքները[64]:

64. «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» օրենքը սահմանում է[65] լրացուցիչ (շարունակական) կրթությունը որպես՝ *«կրթական գործընթաց հիմնական (նախնական) մասնագիտական կրթական ծրագրերի շրջանակներում, որոնք նպատակաուղղված են մասնագիտական որակների բարելավմանը, մասնագիտական վերաորակավորման ապահովմանը, անձի որակավորման շարունակական բարձրացմանը»*[66]:

---

[62] Կանոնակարգի վերջին տարբերակը հաստատվել է կառավարության № 752-Ն, 08.07.2015 որոշմամբ: Այնուամենայնիվ, քոլեջ-համալսարան անցման այս մեխանիզմը գործում է 1990-ականների կեսից:

[63] «Կրթության մասին» օրենք, հոդված 3, մաս 1.6.

[64] «Կրթության մասին» օրենք, հոդված 26.

[65] «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» օրենք, հոդված 3:

[66] Այս սահմանումը պարունակում է մի շարք սխալներ կամ առնվազն՝ անորոշություններ: Այսպես՝ որևէ տեղ սահմանված չէ և հայտնի չէ, թե ինչ են «*մասնագիտական որակ(ներ)ը*» կամ «*վերաորակավորումը*»: Սակայն եթե անգամ ենթադրենք, որ վերջինս անձին մեկ

Ա.3.4 Ցկյանս ուսումնառության համատեքստը

65. «Կրթության մասին» օրենքով ցկյանս ուսումնառությունը (ՑՈՒ) սահմանվում է՝ որպես «Անձի ամբողջ կյանքի ընթացքում ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության մասնակցության միջոցով ձեռք բերած ուսումնառության արդյունքներ, որոնցով անհատը ձևավորում կամ կատարելագործում է իր գիտելիքները, հմտությունները, կարողությունները և արժեքային համակարգը»:

66. 2009թ. ՀՀ կառավարությունը հավանություն է տվել Հայաստանի Հանրապետությունում ցկյանս ուսումնառության հայեցակարգին[67]: Այն վերլուծեց իրավիճակը ՑՈՒ ոլորտում, որոշարկեց խնդիրներն ու մարտահրավերները և առաջարկեց որոշ լուծումներ: 10 տարի առաջ վերոնշյալ փաստաթղթով ձևակերպված ՑՈՒ մի շարք խնդիրներ, ինչպիսիք են, օրինակ՝ ցկյանս ուսումնառության անբավարար ֆինանսավորումը, ՑՈՒ ոլորտի կառավարման թույլ համակարգումն ու ղեկավարումը, ՑՈՒ վերաբերյալ վիճակագրական տվյալների բացակայությունը, արդիական են առ այսօր:

67. Մեկ այլ քաղաքական փաստաթուղթ՝ ՀՀ լրացուցիչ և շարունակական կրթության 2013-2017թթ. ռազմավարությունը, ընդունվել է 2012թ. ԿԳՆ կողմից[68]: Սույն փաստաթուղթը ենթադրում է, որ ցկյանս ուսումնառության համատեքստում երկրի կրթական համակարգը հիմնված է երկու հենասյուների վրա՝

- ֆորմալ կրթության համակարգ.
- լրացուցիչ և շարունակական կրթություն, որն իրականացվում է ոչ ֆորմալ կամ ինֆորմալ ուսումնառության միջոցով:

68. Ոչ ֆորմալ ուսուցման տարբեր ձևեր և տեսակներ կան, ինչպես օրինակ՝

- Օրենքի պահանջներին համապատասխան իրականացվող դասընթացներ, ինչպես օրինակ՝ քաղաքացիական ծառայողների կամ պետական այլ աշխատողների (դատավորներ, ոստիկաններ, զինծառայողներ և այլն) համար նախատեսված դասընթացները:
- Պետական ծրագրի շրջանակներում իրականացվող մասնագիտական դասընթացներ գրանցված գործազուրկների, հաշմանդամների կամ այլ խոցելի անձանց համար, ինչպես օրինակ՝ ՀՀ ԱՍՀՆ զբաղվածության պետական գործակալությունը (ԶՊԳ):
- Ընկերությունների կողմից իրենց աշխատակազմի կամ աշխատանքի տեղավորման նպատակով դիմողների համար իրականացվող վերապատրաստման դասընթացներ:
- Մասնավոր ընկերությունների (ինչպես նաև որոշ պետական կազմակերպությունների, օրինակ՝ ՄԿՈՒ քոլեջների) կողմից իրականացվող կոմերցիոն դասընթացներ (մասնագիտական և ոչ մասնագիտական)՝ որպես բնակչությանը կամ այլ մասնավոր կամ հանրային հաճախորդներին տրամադրվող ծառայություններ:
- Միջազգային տարբեր կազմակերպությունների և ծրագրերի կողմից իրականացվող նպատակային, այդ թվում՝ բարեգործական բնույթի դասընթացներ:
- Տարբեր նախապատրաստական դասընթացներ, ներառյալ՝ մասնավոր ուսուցչի/կրկնուսույցի գործունեությունը:

69. 2018-2019թթ. պետական բյուջեում գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցողների վերապատրաստման համար հատկացվել է 136,875 հազար դրամ և 123,750 հազար դրամ՝ համապատասխանաբար (ներառյալ ուսման ընթացքում նպաստների վճարումը): Նույն տարիներին պետական աշխատողների տարաբնույթ վերապատրաստումների համար հատկացվել է ավելի քան 2 միլիարդ դրամ[69]: Այս ֆինանսավորումը տրամադրվում է ԱՍՀՆ-ին:

այլ որակավորման շնորհումն է, ապա օրենսդրությամբ որևէ կերպ նախատեսված չէ, որ դա կարող է տեղի ունենալ լրացուցիչ կրթական ծրագրերի միջոցով կամ արդյունքում: Անհայտ է նաև «*որակավորումը լրացնել*» արտահայտության իմաստը:

[67] ՀՀ կառավարության արձանագրային որոշում № 43, 15.10.2009.

[68] ԿԳՆ հրաման № 1163-Ա/Ք, 20.12.2012.

[69] «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» և «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» օրենքներ:

Ա.3.5 Միջազգային համագործակցության համատեքստը. գործընկերություն և դոնորների աջակցություն

70. Հայաստանում ՄԿՈՒ զարգացումներին աջակցում են մի շարք դոնորներ, որոնցից խոշորագույնը Եվրամիությունն է (ԵՄ): Հայաստանում ՄԿՈՒ համակարգային բարեփոխումներն իրականացվում են «**Ավելի լավ որակավորումներ ավելի լավ աշխատանքի համար**» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում է **Եվրոպական միության բյուջետային աջակցության** միջոցով: Ծրագրի ընդհանուր արժեքն է՝ 15 միլիոն եվրո: Ընդհանուր նպատակն է՝ աջակցել Հայաստանին *բարելավելու աշխատաշուկայի արդյունավետությունը, ինչպես նաև աջակցելու ՄԿՈՒ շրջանավարտների զբաղունակությանը*: Հատուկ նպատակները բխում են ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ծրագրից և Զբաղվածության ազգային ռազմավարությունից ու 2014-2018թթ. գործողությունների ծրագրից, և ներառում են հետևյալը.

- Բարելավել աշխատաշուկայի միջնորդությունը և խորհրդատվական ծառայությունները՝ թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց համար ավելի լավ մուտք դեպի զբաղվածության դաշտ ապահովելու համար:
- Բարելավել շրջանավարտների զբաղունակության հեռանկարները պիլոտային ոլորտում (ՄԿՈՒ գյուղատնտեսական հաստատություններ):

71. 2018-2020 ֆինանսական տարիների ընթացքում առավելագույնը 13 միլիոն եվրո կարող է փոխանցվել ՀՀ պետական բյուջե՝ ըստ ՀՀ կառավարության ֆինանսավորման համաձայնագրին կից տեխնիկական և վարչական դրույթներում սահմանված ընդհանուր և հատուկ պայմանների: Դրամական միջոցները կհատկացվեն 3 մասնավճարներով (միայն փոփոխական տրանշներ). 1-ին մասնավճար՝ 1.5 միլիոն եվրո, 2-րդ մասնավճար՝ 3 միլիոն եվրո, և 3-րդ մասնավճար՝ 8.5 միլիոն եվրո: Բացի այդ, լրացուցիչ 2 միլիոն եվրո է հատկացվել լրացուցիչ միջոցառումների աջակցման համար (0.8 միլիոն եվրո՝ տեխնիկական աջակցության, 0.8 միլիոն եվրո՝ դրամաշնորհային ծրագրի, և 0.4 միլիոն եվրո՝ վարչական ծախսերի համար):

72. Բյուջեի աջակցության բաղադրիչով նախատեսված մասնավճարները ստանալու համար կառավարությունը պետք է ծրագրի ամբողջ ընթացքում պահպանի համապատասխանությունը չորս հիմնական պայմանների հետ (հանրային քաղաքականություն, մակրոտնտեսական կայունություն, պետական ֆինանսական կառավարման համակարգի բարեփոխումներ և բյուջեի թափանցիկություն) և հասնի քաղաքականության մատրիցով սահմանված ցուցանիշներին, որոնք ներառում են 12 հատուկ պայման 2017-2019 ֆինանսական տարիների համար:

73. Տեխնիկական և վարչական դրույթները որոշարկում են **չորս արդյունք**, որոնց պետք է հասնել ծրագրի ընթացքում.

- Աշխատաշուկայի առաջարկի և պահանջարկի համապատասխանեցման բարելավված մեխանիզմ.
- Բարելավված որակավորումներ և աշխատանք փնտրողների զբաղունակություն.
- ՄԿՈՒ գյուղատնտեսական հաստատությունների պահանջարկին աշխատուժի առաջարկի համապատասխանեցման բարելավված մեխանիզմ.
- ՄԿՈՒ գյուղատնտեսական ոլորտի ուսանողների բարելավված որակավորում և զբաղունակություն:

74. 12 ցուցանիշներից 9-ը վերաբերում են ՄԿՈՒ-ին, իսկ 3-ը՝ զբաղվածությանը: ՀՀ ԿԳՆ-ն և ՀՀ ԱՍՀՆ-ն պատասխանատու են այս ցուցանիշների պահանջների բավարարման համար՝ համապատասխանաբար.

1) ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված գյուղատնտեսական և գյուղատնտեսությանն առնչվող որակավորումների 90%[70]-ի համար հաստատված են ՄԿՈՒ պետական կրթական չափորոշիչներ և համապատասխան ուսումնական ծրագրեր, որոնք ներառում են ձեռներեցության պարտադիր մոդուլը:
2) Գյուղատնտեսական ՄԿՈՒ հաստատությունների դասավանդողների 90%-ը վերապատրաստվել են վերանայված, նոր մշակված և ընդունված գյուղատնտեսական և գյուղատնտեսությանն առնչվող ՄԿՈՒ պետական կրթական չափորոշիչների և ուսումնական ծրագրերին համապատասխան:

[70] Բոլոր թիրախները ներկայացված են ծրագրի իրականացման վերջին տարվա դրությամբ: Որոշ ցուցանիշների համար սահմանվում են նաև միջանկյալ թիրախներ:

3) Ութ գյուղատնտեսական ՄԿՈՒ հաստատություններ առաջարկում են աշխատանքի վրա հիմնված ուսումնառություն՝ (i) ընտրված մասնագիտությունների/որակավորումների համար, (ii) առնվազն 3 ամիս տևողությամբ, և (iii) կիրառելով նոր հագեցած և կատարելագործված ենթակառուցվածքներ (ինչպես սահմանված է ստորև պայման 7-ում):

4) 8 ՄԿՈՒ հաստատությունների կառավարման խորհուրդները իրականացնում են իրենց գործառույթները՝ ըստ սոցիալական գործընկերության վերանայված հայեցակարգի:

5) 4 գյուղատնտեսական ՄԿՈՒ ուսումնական հաստատություններում ներդրված է ներքին որակի ապահովման համակարգ տեղական օրենսդրությանը և CEDEFOP-ի՝ ՄԿՈՒ առնչությամբ առաջարկություններին համապատասխան:

6) Ութ գյուղատնտեսական ՄԿՈՒ հաստատություններ վերանորոգվել և վերակառուցվել են և համապատասխանում են էներգախնայողության, սեյսմիկ կայունության և հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության պահանջներին:

7) Ութ գյուղատնտեսական ՄԿՈՒ հաստատություններ հագեցված են անհրաժեշտ ենթակառուցվածքով՝ ըստ (i) յուրաքանչյուր ընտրված գյուղատնտեսական ՄԿՈՒ հաստատության հաստատված զարգացման ռազմավարության և (ii) արտաքին տեխնիկական օժանդակության առաջարկություններին:

8) 17,000 գործատուներ պաշտոնապես գրանցված են «Գործ» տվյալների բազայում և ստանում են ԶՊԳ-ի կողմից մատուցվող ծառայություններ:

9) 9,000 ժամանակավոր (ներառյալ սեզոնային և վճարման դիմաց կատարվող աշխատանքները) զբաղված անձ ներգրավված են զբաղվածության ամենամյա պետական ծրագրերում:

10) 895 երիտասարդ (16-29 տարեկան) աշխատում են պետական ծրագրերում, որոնք նպատակաուղղված են կայուն զբաղվածության ստեղծմանը՝ հիմք ընդունելով ԶՊԳ վարչական վիճակագրությունը:

11) Ավարտական կուրսի ուսանողների 90%-ն իրենց քոլեջներում ստանում են մասնագիտական կողմնորոշման խորհրդատվություն, Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոնի մեթոդաբանության համաձայն; :

12) ԵՄ ֆինանսական աջակցությամբ 2010-2014թթ. արդիականացված 17 ՄԿՈՒ հաստատությունների շրջանավարտների 45%-ն ավարտելուց հետո մեկ տարվա ընթացքում գտել են աշխատանք իրենց մասնագիտությամբ:

75. Ցուցանիշների պահանջների իրագործման ընթացքում հաջողության տարբեր աստիճաններ են գրանցվել՝ մասնավորապես երկրում 2018թ. քաղաքական փոփոխությունների հետ կապված պատճառներով: Համապատասխանաբար, 2018-2019թթ. ՀՀ կառավարությունը ԵՄ-ին խնդրանք է ներկայացրել որոշ ցուցանիշների թիրախների վերանայման, ինչպես նաև իրականացման վերջնաժամկետների վերաբերյալ: Հիմնական մարտահրավերները վերաբերում են շինարարական աշխատանքներին և սարքավորումների մատակարարմանը: 2019թ. հունիսի կեսից Բրյուսելից որևէ պաշտոնական արձագանք չի ստացվել:

76. «ԵՄ-ն հանուն երիտասարդների՝ ՍԵՅ ԵՍ. հմտություններ աշխատանքի համար» ծրագիրը մշակվել է ԵՄ-ն հանուն երիտասարդության նախաձեռնության ներքո, Վորլդ Վիժն Գերմանիայի կողմից և իրականացվում է Հայաստանում գործող Վորլդ Վիժնի գրասենյակի կողմից[71]՝ «Գլոբալ զարգացումներ» հիմնադրամի հետ սերտ համագործակցությամբ: Ծրագրի նպատակն է նպաստել գյուղական համայնքներում ապրող երիտասարդների գործազրկության խնդիրների հասցեագրմանը և եկամտի աղբյուրների ստեղծմանը: Ծրագրի թիրախային խումբ են հանդիսանում հատկապես սակավ հնարավորություններ ունեցող 15-ից 35 տարեկան կանայք և տղամարդիկ: Ծրագրի նպատակն է աջակցել նրանց աշխատանք գտնելու կամ ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու հարցում:

77. Ծրագրի ընթացքում մշակվել է աշխատանքի վրա հիմնված ուսումնառության (ԱՀՈՒ) սկզբունքին համապատասխանող՝ գյուղատնտեսության ոլորտի չորս ուսումնական ծրագիր՝ գինեգործություն, գյուղտեխնիկայի շահագործում, անասնաբուժություն և կաթնամթերքի արտադրություն: 48 երիտասարդներ

[71] Այս նախագիծը ունի նաև բաղադրիչ Վրաստանում, որն իրականացվում է Վորլդ Վիժն Վրաստանի գրասենյակի կողմից՝ համագործակցելով "Anika" ասոցիացիայի և Վրաստանի ֆերմերների ասոցիացիայի հետ:

Արարատից, Ալավերդուց, Գավառից և Ստեփանավանից և շրջակա տարածաշրջաններից համապատասխանաբար վերապատրաստվել են 2018թ.: 2019թ. ավելի քան 50-60 մարդ օգտվել է բարելավված և ընդլայնված ուսումնական ծրագրերին համապատասխան իրականացվող դասընթացներից: Դասընթացներն իրականացվել են իրական արտադրության մեջ վերը նշված համայնքներում գործող համապատասխան ձեռնարկություններում: Այդ նպատակով, ընդհանուր առմամբ 24 դասընթացավար (4 ՄԿՈՒ քոլեջների դասավանդող և հրահանգիչներ ընկերություններից) վերապատրաստվել է աշխատանքի վրա հիմնված ուսումնառության իրականացման ուղղությամբ:

78. Ծրագրի շրջանակներում Հայաստանի երեք մարզերում (Արարատ, Գեղարքունիք և Լոռի) հիմնադրվել է 7 ՍՔԱՅ երիտասարդական ակումբ[72], որտեղ ներգրավված 140 երիտասարդները հանդիպում են շաբաթական 2-3 ժամ, որպեսզի միասին հաճելի ժամանակ անցկացնեն, սովորեն և ծառայեն իրենց համայնքներին: 2020թ. ԱՀՈՒ-ն ավարտելուց հետո, նշված դասընթացներն ավարտած վերապատրաստվողների համար կփորձարկվի ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության վավերացման համակարգը: Դրան կհաջորդի Հայաստանում ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության վավերացման մեխանիզմի կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների մշակումը և ներկայացումը ԿԳՆ:

79. «ԵՄ-ն հանուն երիտասարդության՝ հմտություններ ապագայի համար» տարածաշրջանային ծրագիրը[73] (2018-2020թթ.) իրականացվում է Հայաստանում «Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլ» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության կողմից՝ «ՕքսԻՋեն» երիտասարդների և կանանց իրավունքների պաշտպանության հիմնադրամի հետ համագործակցաբար:

80. Ծրագրի շահառուները վեց ՄԿՈՒ հաստատություններ են՝ Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջը, Սիսիանի պետական քոլեջը, Արթիկի պետական քոլեջը, Սևանի պետական քոլեջը, Բերդի պետական քոլեջը և Բերդի արհեստագործական պետական ուսումնարանը[74]: Դրանց համար մշակվում են զբոսաշրջության և ՏՏ[75] ոլորտի նոր ուսումնական ծրագրեր՝ ելնելով աշխատաշուկայի ժամանակակից պահանջներից: Նախատեսվում է նաև այդ հաստատությունների դասախոսական կազմի կարողությունների զարգացում նոր ուսումնական ծրագրերի արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով:

81. Զբոսաշրջության ոլորտում դուալ (աշխատանքի վրա հիմնված ուսումնառություն) կրթական մոդելը «Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում» որակավորման համար կփորձարկվի Սիսիանի պետական քոլեջում GIZ-ի հետ համագործակցաբար: Ծրագրի շրջանակներում իրականացվում է նաև 300 երիտասարդների ընդհանուր հմտությունների զարգացման դասընթաց: Փորձարկումից հետո այս դասընթացները նախատեսվում է ինտեգրել ֆորմալ ՄԿՈՒ ուսումնական ծրագրերում բոլոր որակավորումների համար:

82. «Ռազմավարական զարգացման գործակալություն» (ՌԶԳ) ՀԿ-ն, համագործակցելով **Շվեյցարիայի Եկեղեցու Օգնություն** (HEKS/EPER) կազմակերպության և Բեռնի Կիրառական Գիտությունների համալսարանի գյուղատնտեսության, անտառային և պարենային գիտությունների դպրոցի (HAFL) հետ, իրականացնում է գյուղատնտեսության ոլորտում «Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացում Սյունիքի մարզում» ծրագիրը: Վերջինս մեկնարկել է 2016թ. հոկտեմբերին և կշարունակվի մինչև 2020թ. սեպտեմբերը: Ծրագիրը միտված է նպաստելու գյուղատնտեսության ոլորտում մասնագիտական կրթության և խորհրդատվական ծառայությունների զարգացմանը՝ գործնականորեն կիրառելով նորարարական

---

[72] Երիտասարդության տնտեսական հզորացման հմտություններ և գիտելիքներ (SKYE) մոդելը ամբողջական և ինտեգրված մոտեցում է՝ օգնելու երիտասարդներին, ովքեր կայուն ապրուստի միջոցներ ստեղծելու և իրենց համայնքներում կառուցողական մասնակցություն ունենալու համար անհրաժեշտ հմտությունների, վարքագծի և վերաբերմունքի ձևավորման ավելի քիչ հմտություններ ունեն: Դա ձեռք է բերվում այսպես կոչված ակումբներում կազմակերպված խմբային դասընթացների և աջակցության ծառայությունների միջոցով: Մոդելը երիտասարդության վրա հիմնված տնտեսական զարգացման մոդելն է, որը համատեղ մշակվել է Վորլդ Վիժնի, Նոր Հորիզոնների հիմնադրամի կողմից և Գիտելիքահենք տնտեսություն՝ ձեռնարկությունների ձևավորման միջոցով (CEFE) այս կարիքների հասցեագրման նպատակով: ՍՔԱՅ Ակումբները երիտասարդների խմբեր են, որոնք հանդիպում են ամեն շաբաթ՝ համայնքի խնդիրները բացահայտելու և ուղեղային փոթորիկ առաջացնելու, համայնքային ծառայության կամ սոցիալական ձեռնարկությունների նախագծերը պլանավորելու և իրականացնելու համար:
Ծրագրում ներգրավված է երեք երկիր՝ Հայաստանը, Վրաստանը և Ուկրաինան:

[73] Ծրագրում ներգրավված է երեք երկիր՝ Հայաստանը, Վրաստանը և Ուկրաինան:

[74] 2019թ. Բերդի պետական քոլեջը և Բերդի պետական արհեստագործական ուսումնարանը միաձուլվել են և վերափոխվել «Բերդի բազմագործառութային պետական քոլեջի»:

[75] ՏՏ ոլորտի համար նախագիծը համագործակցում է Սիներջի Ինթերնեյշնլ սիսթեմզի (www.synisys.com) և Գյումրիի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի հետ (http://www.gtc.am).

մոտեցումներ և ստեղծելով շուկային համապատասխան գործնական կրթական համակարգ անասնաբուժության, կաթի վերամշակման և ֆերմերներին խորհրդատվական ծառայությունների մատուցման ոլորտներում:

83. Ծրագիրը նախատեսում է բարելավել Գորիսի պետական գյուղատնտեսական քոլեջի և Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Սիսիանի մասնաճյուղի կարողությունները և ամրապնդել ՄԿՈՒ հաստատությունների և մասնավոր հատվածի միջև համագործակցությունը՝ ապահովելով առավել մրցունակ և շուկային միտված գործնական կրթություն: Դասախոսներն ու գիտակ դասընթացավարները պետք է ներգրավվեն HAFL-ի կողմից իրականացվող դասընթացներին, որը կօգնի նրանց ձեռք բերել նոր հմտություններ և սովորել նոր մեթոդներ ու գործիքներ գյուղատնտեսության ոլորտում նորարարական և շուկային միտված ՄԿՈՒ իրականացնելու նպատակով: Նախատեսվում է ստեղծել Շահագրգիռ կողմերի մասնակցությամբ երկխոսության հարթակ, որը կներգրավի Հայաստանի ՄԿՈՒ ոլորտում ծրագրեր իրականացնող շահառուներին և դոնոր կազմակերպություններին՝ ոլորտում իրականացվող ծրագրերի արդյունավետ համակարգման, փորձի փոխանակման, ծրագրի ձեռքբերումների կապիտալիզացիային աջակցելու և հետագա զարգացումների նպատակով[76]:

84. 2016թ. ի վեր GIZ-ի «Մասնավոր հատվածի զարգացում և ՏՄԿՈՒ Հարավային Կովկասում» (ՄՀՋ) ծրագիրն իրականացնում է մի նախագիծ, որը նվիրված է Հայաստանում դուալ ՏՄԿՈՒ համակարգի ներդրմանը, ՀՀ ԿԳՆ-ի և ընտրված ոլորտների մասնավոր ընկերությունների հետ սերտ համագործակցությամբ, այն է՝ գինեգործության, զբոսաշրջության, ՏՏ և ճշգրիտ ճարտարագիտության ոլորտներում: Դուալ համակարգի նպատակն է խթանել տեղական տնտեսական զարգացմանը և բարձրացնել երիտասարդների զբաղվածությունը մասնավոր հատվածի կողմից ՏՄԿՈՒ որակի ճանաչման միջոցով:

85. ՄՀՋ-ն շեշտը դնում է նաև օժանդակ օրենսդրության և նորմատիվ փաստաթղթերի մշակման վրա՝ որպես հիմք Հայաստանում դուալ ՏՄԿՈՒ համակարգի կայուն գործարկման համար: Բացի այդ, ծրագիրն աջակցում է ՄԿՈՒ հաստատություններում որակավորումների ինստիտուցիոնալ ձևավորմանը և մասնավոր ընկերություններում գործնական կրթության կազմակերպմանը, ինչպես նաև դասավանդողների և մասնավոր հատվածների հրահանգիչների կարողությունների զարգացմանը: Հայաստանում դուալ ՏՄԿՈՒ համակարգի ներդրումը ոգեշնչված է գերմանական մոդելով, և այն ներառում է հետևյալ քայլերը. 1) 2016թ. հմտությունների վերլուծություն ընտրված ոլորտներում և վերապատրաստման կարիքների որոշարկում. 2) 2017թ. ուսումնական պլանների և մոդուլային ծրագրերի մշակում և ստանդարտացում. 3) 2018թ. դասավանդողների վերապատրաստում և մշակված դուալ ՄԿՈՒ ծրագրերի պիլոտավորում, ինչպես նաև որակի կառավարման համակարգի մշակում:

86. ՀՀ ԿԳՆ-ի թույլտվությամբ 2018թ. ի վեր 90 աշկերտների համար հինգ ֆորմալ ՄԿՈՒ երկակի ՏՄԿՈՒ դասընթացներ են իրականացվում չորս պիլոտային ՄԿՈՒ քոլեջներում 21 մասնավոր ընկերությունների հետ համագործակցաբար: 2020թ. նախատեսվում է ևս 75 աշկերտ ներգրավել նոր դասընթացներում: Բացի այդ, 2018թ. երեք կարճաժամկետ 4-ից 6 ամիս տևողությամբ վերապատրաստման ծրագրեր են իրականացվել 3 մասնագիտությունների համար 67 աշկերտի ներգրավմամբ: Եվս 61 սովորող կօգտվեն այդ դասընթացներից 2020թ:

87. «**Անուշավան Աբրահամյան» կրթական հիմնադրամը** 2006 թվականից աջակցում է ՀՀ ՄԿՈՒ համակարգին: Շահառուները 9 ՄԿՈՒ հաստատություններ են՝ Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջը, Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջը, Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջը, Արարատի պետական քոլեջը, Արմավիրի պետական ինդուստրիալ-մանկավարժական քոլեջը, Վանաձորի պետական պոլիտեխնիկական քոլեջը, Վարդենիսի պետական քոլեջը, Հրազդանի արհեստագործական պետական ուսումնարանը և Մարալիկի արհեստագործական պետական ուսումնարանը: Հիմնական նպատակը սարքավորումների ապահովումն ու նպաստավոր պայմանների ու նոր հնարավորությունների ստեղծումն է: Այսպիսով, բոլոր վերոնշյալ հաստատություններում բացվել են ռոբոտաշինության և համակարգչային ծրագրավորման արհեստանոցներ: Հայաստանի տարբեր մարզերում հիմնանորոգվել են միջին մասնագիտական կրթօջախները և ստեղծվել են բազմաթիվ արհեստանոցներ կարուձևի և դիզայնի, վարսահարդարման և դիմահարդարման, սննդի ու սպասարկման, ատաղձագործության, շինարարության համար:

---

[76] Մանրամասն տեղեկությունների համար տես՝ https://sda.am/index.php?id=99.

88. Բացի այդ, երկու քոլեջներում բացվել են գինեգործության լաբորատորիաներ, ևս երկուսում՝ ոսկերչական, և մեկում՝ եռակցման արհեստանոցներ: Հիմնադրամը նաև միկրոավտոբուսներ է նվիրել չորս հաստատությունների ուսանողների տեղափոխումն ապահովելու համար: Վերանորոգման աշխատանքներ (հիմնականում դռներ, պատուհաններ, զուգարաններ) են կատարվել մի քանի ՄԿՈՒ քոլեջում:

89. «Մեծ քսանյակի (G20) ուսուցման ռազմավարության կիրառումը. **ԱՄԿ**-ի և Ռուսաստանի Դաշնության գործընկերություն» ծրագրի 2-րդ փուլն ընդգրկում է 2016-2019թթ. ընկած ժամանակահատվածը և նպատակաուղղված է երեք հիմնական արդյունքների իրագործման. 1) Կառավարության և շահագրգիռ կողմերի կարողությունների զարգացման քաղաքականությունների և ռազմավարությունների մշակման և իրականացման գործում ԱՄԿ ՄՌԶ և Կայուն զարգացման նպատակների քաղաքականության հենանիշերին համընթաց. 2) Ոլորտային կազմակերպությունների և իրավասու մարմինների կարողությունը մասնագիտական չափորոշիչների, որակավորումների և հմտությունների վրա հիմնված ուսուցման ծրագրերի մշակման գործում. 3) Հմտությունների տեխնոլոգիական կանխատեսումների մեթոդաբանության և ՏՄԿՈՒ հաստատությունների վարչական անձնակազմի ուսուցման ծրագրի մշակում և կիրառում: Շահառու երկրներն են՝ Հայաստանը, Հորդանանը, Ղրղզստանը, Տաջիկստանը, Վյետնամը և Ռուսաստանի Դաշնության հինգ տարածաշրջաններ: Հայաստանի ներկայացուցիչները մասնակցել են մի շարք միջոցառումների ՄԿՈՒ պլանավորման նոր մեթոդաբանության, աշխատուժի առաջարկի ու պահանջարկի, հմտությունների կանխատեսման, կարողությունների վրա հիմնված որակավորումների և հմտությունների գնահատման մեթոդների առնչությամբ:

90. 2018թ. նոյեմբերից մինչև 2019թ. մայիսն ընկած ժամանակահատվածում **Հայաստանում Բրիտանական խորհուրդը** իրականացրել է «Անգլերենը և աշխատանքային հմտությունները կարիերայի զարգացման համար» ծրագիրը[77]: Դրա նպատակն էր բարձրացնել ՀՀ Արարատի մարզի ՄԿՈՒ հաստատությունների 17-20 տարեկան ուսանողների զբաղունակությունը անգլերենի հմտությունների զարգացման միջոցով՝ որպես աշխատատեղի պահանջ՝ նրանց համար հասանելի դարձնելով իրենց մասնագիտական և զբաղունակության հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվության աղբյուրները՝ զինելով նրանց զբաղունակության հիմնական փոխանցելի հմտություններով: Այս ծրագրի շրջանակներում երկու զարգացման կենտրոններ են ստեղծվել Մասիսի գյուղատնտեսական քոլեջում և Արարատի տարածաշրջանային պետական քոլեջում: Նրանք այդ հաստատությունների ուսանողներին առաջարկել են երկու լրացուցիչ դասընթաց. 1) Անգլերեն աշխատանքի համար, և 2) Աշխատանքային հմտություններ: Ակնկալվում է, որ այդ կենտրոնները կլինեն կայուն և կշարունակեն իրենց գործունեությունը ծրագրի ավարտից հետո:

91. 2015-2018 թվականների ընթացքում **Ավստրիայի զարգացման գործակալությունը** (ԱԶԳ) իրականացրել է «Օրգանական գյուղատնտեսության աջակցության նախաձեռնություն» ծրագիրը՝ 3.3 միլիոն եվրո ընդհանուր բյուջեով, որից 2.8 միլիոն եվրոն տրամադրվել է Եվրամիության կողմից: Հիմնական գործընկերներն են՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը և ՀՀ կրթության և գիտության նախարարությունը: Ծրագրի նպատակն էր բարելավել գյուղական կենսամիջոցները կայուն ձևով՝ բարձրացնելով հայկական օրգանական սննդամթերք արտադրողների և վերամշակողների տեղական ավելացված արժեքը: Ծրագրի բաղադրիչներից մեկում մշակվել է «Օրգանական գյուղատնտեսության հիմունքներ» մոդուլը, որը պետք է ներդրվի 8 պիլոտային ՄԿՈՒ ուսումնարանների գյուղատնտեսական ուսումնական ծրագրերում: Բացի այդ, դասավանդողների համար հրատարակվել է մեթոդական ուղեցույց:

92. «Հիդրոքլորֆտորածխածինների փուլային փոխարինում» ծրագրի 2-րդ փուլը, որը ֆինանսավորվում է Մոնրեալի արձանագրության ֆինանսական մեխանիզմ հանդիսացող բազմակողմանի հիմնադրամի կողմից, մեկնարկել է ՀՀ բնապահպանության նախարարության կողմից 2018թ. մարտին **ՄԱԶԾ և** ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի զարգացման կազմակերպության (UNEP) հետ համատեղ: ՀՀ ԿԳՆ-ի ներգրավվածությունն ու աջակցությունը խիստ կարևոր էր ծրագրի 2-րդ փուլի իրականացման, վերապատրաստման բաղադրիչի համար, հետևաբար, 2018թ. ապրիլին փոխըմբռնման հուշագիր է ստորագրվել ՀՀ ԿԳՆ-ի և ՀՀ ԲՆ-ի միջև: 2018թ. օգոստոսին ՀՀ կառավարության կողմից ՄԿՈՒ մասնագիտությունների դասակարգչում ներմուծվել է «Սառնարանային տնտեսության» նոր մասնագիտության «Տեխնիկ՝ սառնարանային տնտեսության» որակավորումը: 2018թ. սեպտեմբերին մուլտիմեդիա դասընթացների սարքավորումների երեք հավաքածու է

[77] https://www.britishcouncil.am/en/programmes/education/english-career-development.

ձեռք բերվել և հաջողությամբ տեղադրվել երեք տարածաշրջանային պետական քոլեջներում՝ Երևանում, Արմավիրում և Արարատում, որոնք ընտրվել են համատեղ երկու նախարարությունների կողմից:

93. Ավելին՝ բոլոր երեք մասնագիտական հաստատությունները հագեցված էին վերականգնման և վերամշակման գործիքներով և սառնարանային արհեստանոցների համար անհրաժեշտ սարքավորումներով, որոնք ուսանողներին հնարավորություն կտան վերապատրաստվել սառնարանային և օդորակիչ սարքավորումների էկոլոգիապես անվտանգ տեղադրման և սպասարկման ոլորտում: «Տեխնիկ՝ սառնարանային տնտեսության» նոր որակավորման պետական կրթական չափորոշիչը մշակվել է և նախատեսվում է փորձարկվել վերոնշյալ երեք քոլեջներում 2019թ. սեպտեմբերից: Այս հաստատությունների համապատասխան դասավանդողները կվերապատրաստվեն սառնարանային տնտեսության լավագույն փորձի վերաբերյալ 2019թ. Երևանում բացվելիք տարածաշրջանային վերապատրաստման կենտրոնում:

94. «**Կնաուֆ Արմենիա» ՍՊԸ**-ն Հայաստանում ՄԿՈՒ նոր գործընկեր է: Համագործակցության հուշագիր է ստորագրվել այս ընկերության և ՀՀ ԿԳՆ միջև 2018թ: Ներկայումս Հայաստանի ճարտարապետության և շինարարության համալսարանում նախապատրաստական աշխատանքներ են իրականացվում «Չոր շինարարություն» (շինարարություն գիպսաստվարաթղթե սալերի կիրառմամբ) նոր մասնագիտության ներդրման ուղղությամբ: Այս հաստատությունում նոր կհամալրվեն նոր արհեստանոցներ, և կկազմակերպվեն շինարարության մասնագետների վերապատրաստում:

95. Միջազգային համագործակցության համատեքստում 2012թ. Հայաստանը միացել է **Համաշխարհային հմտություններ** միջազգային կազմակերպությանը, որտեղ երկիրը ներկայացված է ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից: Հայաստանի տարբեր ՄԿՈՒ քոլեջների ուսանողներ մասնակցում էին 2012-2016 և 2018թթ. մրցույթներին: Այն հիմնականում ֆինանսավորվում էր պետական բյուջեից՝ GIZ-ի որոշակի ներդրմամբ: Հմտությունների մրցույթներում, որտեղ հայ ուսանողները մրցում էին, հետևյալն էին՝ ռոբոտներ և SS, խոհարարություն և հագուստի ձևավորում: Նախատեսվում է նաև մասնակցել 2019թ. Կազանում անցկացվելիք մրցույթին:

Բաղադրիչ Բ. Տնտեսության և աշխատաշուկայի վիճակը

Բ.1. ՄԿՈՒ, տնտեսություն և աշխատաշուկա

Բ.1.1 Աշխատաշուկայի վիճակը

96. ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից իրականացված աշխատաշուկայի վերլուծությունը[78] ցույց է տալիս, որ բնակչության զբաղվածության և գործազրկության մակարդակները 2013-2017 թվականներին հիմնականում անփոփոխ են մնացել՝ 16%-ից 18% միջակայքում՝ աննշան տատանումներով: 2017թ. գործազրկության մակարդակը 2013թ. համեմատ աճել է, սակայն փոքր-ինչ նվազել է 2016թ. համեմատ: Չնայած նշված բացասական միտումներին՝ որոշակի դրական տեղաշարժ է նկատվել տնտեսության ֆորմալացման մակարդակում. 2013-2017թթ. ընթացքում ոչ ֆորմալ զբաղվածության մակարդակը գրանցել է նվազման միտում, իսկ ոչ գյուղատնտեսական ոլորտում բեկումնային անկում է նկատվել (2013թ. 19.6%-ից մինչև 18.3%՝ 2017թ.)[79]:

97. Գործազրկության մակարդակը կազմում է մոտ 17.8 տոկոս[80]: Այն հատկապես բարձր է երիտասարդների շրջանում. 15-24 տարիքային խմբի մոտ գրանցվել է՝ 38.4%, իսկ 25-34 տարիքային խմբի մոտ՝ 21.2%: Երիտասարդության շրջանում գործազրկության հիմնական պատճառը կրթությունից աշխատաշուկա սահուն անցումն ապահովող արդյունավետ մեխանիզմների ու ծառայությունների պակասն է, հատկապես փոքր քաղաքներում: Ըստ վիճակագրական տվյալների՝ 24-29 տարեկան գործազուրկների համար աշխատանք փնտրելու տևողությունը 2 տարուց ավել է:

98. Ըստ կրթության մակարդակի իրականացված վերլուծությունը ցույց է տալիս, որ ՄԿՈՒ շրջանավարտների մասնաբաժինը շրջանավարտների ընդհանուր թվաքանակում ավելի փոքր է բարձրագույն

---

[78] Աշխատաշուկայի վիճակագրություն, ՀՀ ԱՎԾ. https://www.armstat.am/file/article/trud_18_9.pdf.
[79] Աշխատաշուկայի վիճակագրություն, ՀՀ ԱՎԾ. 2018 https://www.armstat.am/file/article/trud_18_4.3.pdf.
[80] Աշխատաշուկայի վիճակագրություն, ՀՀ ԱՎԾ. Աղյուսակ 9.26 Զբաղվածության մակարդակը՝ ըստ տարիքային խմբերի

և հետբուհական, ինչպես նաև ընդհանուր միջնակարգ կրթություն ստանձնած անձանց համեմատ (Աղյուսակ 6): Այնուամենայնիվ, այս խմբերի գործազրկության մակարդակի վերաբերյալ տվյալները հասանելի չեն:

Աղյուսակ 6. Գործազրկությունը՝ ըստ կրթության մակարդակի՝ որպես ընդհանուր գործազուրկների մասնաբաժին %

	Ընդամենը		*Տղամարդիկ*		*Կանայք*		*Քաղաք*		*Գյուղ*	
	2016	2017	2016	2017	2016	2017	2016	2017	2016	2017
Բարձրագույն և հետբուհական	27.5	29.8	25.0	27.2	30.5	32.8	28.4	32.1	21.8	18.9
ՄԿՈՒ	26.0	23.9	22.2	20.3	30.4	28.0	27.4	25.1	17.0	18.3
Միջնակարգ ընդհանուր	42.0	42.2	46.7	46.7	36.7	37.0	40.2	39.3	53.9	55.6
Հիմնական ընդհանուր, տարրական և ցածր	4.4	4.1	6.1	5.7	2.5	2.2	4.0	3.4	7.4	7.2

99. Զբաղվածության մակարդակն ունի նաև արտահայտված տարածաշրջանային առանձնահատկություններ. գյուղական բնակչության համեմատ քաղաքային բնակչության զբաղվածության մակարդակը (զբաղվածներ/տնտեսապես ակտիվ բնակչության հարաբերակցություն) շարունակում է ցածր մնալ: 2017թ. գյուղական բնակչության զբաղվածության մակարդակը կազմել է 62.3%, իսկ քաղաքային բնակչությանը՝ 42.5%: Սակայն պետք է նկատի ունենալ, որ գյուղատնտեսության մեջ զբաղվածները հիմնականում գյուղացիական տնտեսություններում չգրանցված, աշխատանքի ցածր արտադրողականությամբ և ցածր վարձատրությամբ կամ եկամտով աշխատող ինքնազբաղվածներ են, ինչը հաճախ չի ապահովում նրանց կենսապահովման նվազագույնը և մեծացնում է աղքատության հավանականությունը՝ քաղաքային բնակչության համեմատ: 2008-2015թթ. աղքատության մակարդակի աճը քաղաքային և գյուղական բնակավայրերում կազմել է համապատասխանաբար 1.8 և 2.9 տոկոսային կետ[81]:

100. Տնտեսության մեջ առկա աշխատանքի առաջարկի և պահանջարկի խիստ անհամապատասխանությունը Հայաստանի աշխատաշուկայի առանձնահատկություններից է. աշխատաշուկայի իրական կարիքների և ուսումնական հաստատությունների կողմից աշխատաշուկա թողարկվող մասնագետների՝ աշխատուժի առաջարկի միջև կառուցվածքային անհամապատասխանությունը հանգեցնում են առաջարկ-պահանջարկի հավասարակշռության մեջ զգալի բացերի: ՀՀ ԱՍՀՆ Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի կողմից գործատուների շրջանում իրականացվող կանոնավոր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գործատուների շուրջ 27%-ը չի կարողացել որակյալ աշխատուժ գտնել հայտարարված թափուր աշխատատեղերի համար[82]: Գործատուների 54%-ը ստիպված են եղել աշխատանքի ընդունել պահանջվածից ցածր կրթական մակարդակ ունեցող մասնագետների, և իրականացնել նրանց մի մասի վերապատրաստումներ աշխատավայրում: Հայաստանի աշխատաշուկայի առանձնահատկություններից են նաև տղամարդկանց համեմատ կանանց ցածր զբաղվածության աստիճանը, ինչպես նաև ցածր վարձատրությունը, մինչդեռ կանանց ընդգրկվածությունը, հատկապես բուհական կրթությունում շատ ավելի բարձր է, քան տղամարդկանց մոտ, ինչպես և նրանց ակադեմիական առաջադիմությունը:

101. Տնտեսական ոլորտների առումով զբաղվածության ամենամեծ մասը բաժին է ընկնում գյուղատնտեսությանը (2016թ.՝ 33.6%, 2017թ.՝ 31.3%), որին հաջորդում են մեծածախ և մանրածախ առևտուրը (2016թ.՝ 11.5%, 2017թ.՝ 11.1%), կրթությունը (10.7% և 10.8%), մշակող արդյունաբերություն (8.3% և 9.1%) և հանրային կառավարումը (8.6% և 8.8%): Հատկանշական է, որ զբաղված կանանց թիվը ավելի մեծ է գյուղատնտեսությունում և էլ ավելի մեծ կրթության ոլորտում (Աղյուսակ 7):

[81] Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը 2017թ, http://www.armstat.am/file/article/poverty_2017_a_2.pdf

[82] Գործատուների շրջանում իրականացված հետազոտություն՝ ըստ տնտեսության ոլորտների, ԱՍՀԻ, ԱՍՀՆ, 2016 http://www.employment.am/

Աղյուսակ 7. Զբաղվածներն ըստ տնտեսական գործունեության տեսակների, %

NACE	Ոլորտ	Ընդամենը		Տղամարդիկ		Կանայք	
		2016	2017	2016	2017	2016	2017
A	Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	33.6	31.3	30.6	28.2	36.9	34.8
B	Հանքագործական արդյունաբերություն և բաց հանքերի շահագործում	0.9	0.9	1.5	1.6	0.2	0.2
C	Մշակող արդյունաբերություն	8.3	9.1	10.0	10.9	6.4	7.2
D	Էլեկտրականություն, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	2.4	2.5	3.8	3.9	0.9	1.1
E	Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	0.5	0.5	0.8	0.8	0.2	0.3
F	Շինարարություն	3.7	3.6	6.8	6.7	0.3	0.2
G	Մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլետների նորոգում	11.5	11.1	12.5	11.5	10.4	10.8
H	Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	3.3	3.9	5.0	6.1	1.3	1.4
I	Կացության և հանրային սննդի կազմակերպում	2.3	2.3	2.0	2.2	2.7	2.5
J	Տեղեկատվություն և կապ	1.9	1.9	2.4	2.1	1.3	1.7
K	Ֆինանսական և ապահովագրական կազմակերպություն	1.3	1.5	1.1	1.3	1.5	1.8
L	Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	0.2	0.3	0.3	0.3	0.1	0.3
M	Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն	1.3	1.6	0.8	1.5	1.8	1.7
N	Վարչարարական և օժանդակ գործունեություն	0.6	0.4	0.8	0.5	0.5	0.3
O	Պետական կառավարում և պաշտպանություն, պարտադիր սոցիալական ապահովություն	8.6	8.8	12.1	12.7	4.7	4.5
P	Կրթություն	10.7	10.8	4.2	4.4	17.9	17.7
Q	Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	4.8	4.7	1.5	1.6	8.4	8.0
	Մշակույթ, զվարճանք և հանգիստ	1.7	1.8	1.4	1.4	2.0	2.2
S	Սպասարկման այլ ծառայություններ	1.8	2.1	1.8	1.7	1.9	2.6
T	Տնային տնտեսությունների գործունեություն որպես գործատու	0.5	0.5	0.2	0.3	0.7	0.7
U	Օտարերկրյա կազմակերպությունների գործունեություն	0.1	0.2	0.2	0.3	0.1	0.2

Բ.1.2 Առանձնահատուկ մարտահրավերներ և հնարավորություններ. հմտությունների անհամապատասխանություն

102. Հմտությունների անհամապատասխանությունը ընդունված է գրեթե բոլորի կողմից, և այդ հարցը հաճախ է արծարծվում տարբեր ֆորումներում և քննարկումների ժամանակ[83]: Այն գործատուների հիմնական բողոքներից մեկն է ՄԿՈՒ համակարգի նկատմամբ և ընդունվում է կրթության ոլորտի պատասխանատուների կողմից: Այսպիսով, ՄԿՈՒ շրջանավարտների հմտությունները աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցնելու անհրաժեշտությունը հստակորեն նշվում է նաև այնպիսի քաղաքականության փաստաթղթերում, ինչպիսիք են ՄԿՈՒ 2017-2021թթ. բարեփոխումների ծրագիրը կամ ՄԿՈՒ 2019-2022թթ. բարեփոխումների ռազմավարության նախագիծը:

[83] Հայաստանում հմտությունների անհամապատասխանությունը մանրամասն քննարկվում է ԵԿՀ-ի փաստաթղթում «Արևելյան գործընկերության երկրներում երիտասարդների աշխատանքի անցման քարտեզագրումը. Հայաստան» (2018, չհրապարակված):

103. Միևնույն ժամանակ, Հայաստանում հմտությունների անհամապատասխանությունը բավարար ուսումնասիրված ու փաստագրված չէ: Վերջին հասանելի տեղեկատվությունը հրապարակվել է ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից 2017թ.[84] և հուշում է, որ 2015-2016թթ. համապատասխանաբար՝ զբաղվածների 78.8% և 82.6%-ի համար կրթության մակարդակը համապատասխանում է կատարված աշխատանքին: Հատկանշական է, որ տվյալ աշխատանքի համար «թերկրթված» աշխատողների մասնաբաժինը զգալիորեն փոքր էր «գերկրթված» աշխատողներից (Աղյուսակ 8):

Աղյուսակ 8. Զբաղվածներն ըստ կրթության և կատարած աշխատանքի համապատասխանության, %

	Ընդամենը		*Տղամարդիկ*		*Կանայք*		*Քաղաք*		*Գյուղ*	
	2015	2016	2015	2016	2015	2016	2015	2016	2015	2016
Աշխատանքը համապատասխանում է որակավորմանը	79.8	82.6	79.4	81.5	80.2	83.9	77.4	78.5	82.6	87.0
Աշխատանքը որակավորումից ցածր է	17.5	16.6	17.3	17.6	17.7	15.6	19.9	20.7	14.8	12.3
Աշխատանքը որակավորումից բարձր է	2.8	0.7	3.4	0.9	2.1	0.5	2.7	0.8	2.8	0.7

104. Ակնհայտ է, որ կրթության մակարդակի համապատասխանությունը աշխատանքին ամենևին չի նշանակում, որ աշխատողների հմտությունները նույնպես համապատասխանում են պահանջներին: Պետք է հաշվի առնել ոչ միայն որակավորման մակարդակը, այլև կրթության ոլորտը: Սա հավասարապես վերաբերում է նաև բարձր որակավորում ունեցողներին: Համապատասխանաբար, «ցածր որակավորում ունեցող» մարդիկ կարող են ցուցադրել նույնիսկ հմտությունների ավելի լավ համապատասխանություն ոչ ֆորմալ ուսումնառության կամ երկարատև աշխատանքային փորձի արդյունքում:

105. Հմտությունների համապատասխանության վերաբերյալ որոշակի տեղեկատվություն կարելի է գտնել նաև որոշ ծրագրերի կողմից իրականացված ուսումնասիրություններում: Այսպես, օրինակ՝ 2018թ. Վորլդ Վիժնի կողմից իրականացված վերջին հետազոտությունը Հայաստանի չորս մարզերի գյուղական երիտասարդության շրջանում[85] ենթադրում է, որ գործազուրկ երիտասարդների 53%-ը կարծում են, որ նրանք պատշաճ աշխատանքի տեղավորման համար մասնագիտական հմտություններ չունեն: Միևնույն ժամանակ և՛ երիտասարդները, և՛ գործատուները նշում են նաև առանցքային հմտությունների պակասը, ինչպիսիք են՝ լեզուները, SS հմտությունները, հաղորդակցման հմտությունները և այլն:

106. Այստեղ արժե ներկայացնել որոշ ավելի վաղ, բայց դեռևս արդիական հետազոտությունների արդյունքներ: Այսպես՝ 2015թ. Համաշխարհային բանկը[86] զեկուցեց, որ աշխատանքային տարիքի աշխատողների 71%-ն ունեն համապատասխան տարիների կրթություն, 15%-ն ունի ավելի բարձր որակավորում, քան պահանջում է աշխատանքը, իսկ 14%-ը՝ ավելի ցածր: ԱՄԿ-ի կողմից 15-29[87] տարեկան երիտասարդների շրջանում կատարած հետազոտության արդյունքները ենթադրում են, որ վերոնշյալ ցուցանիշները հավասար են համապատասխանաբար 70.3%-ի, 19.6%-ի և 10.1%-ի:

Բ.1.3 Առանձնահատուկ մարտահրավերներ և հնարավորություններ. միգրացիա

107. Աշխատանքային միգրացիան Հայաստանից լայնամասշտաբ է, և այդ կապակցությամբ որոշ պաշտոնական տվյալներ են ներկայացված Բաժին Ա.3.20-ում: Միևնույն ժամանակ գոյություն չունի որևէ վիճակագրություն Հայաստան ժամանած աշխատանքային միգրանտների վերաբերյալ, ամենայն

[84] ՀՀ աշխատաշուկան, ՀՀ վիճակագրական կոմիտեի, 2017. https://www.armstat.am/file/article/trud_2017_4.1.pdf.

[85] Գյուղատնտեսության ոլորտում պահանջվող հմտությունների և երիտասարդների՝ Հայաստանի գյուղատնտեսության ոլորտում աշխատելու շահադրդվածությանն ուղղված հարցում. https://www.wvi.org/sites/default/files/Report%20Survey%20on%20Skills%20Need%20eng.pdf.

[86] Հայաստանի Զբաղվածությանը և արտադրողականությանը միտված հմտություններ (STEP) հետազոտության արդյունքները (քաղաքներում). Համաշխարհային բանկ, 2015. http://documents.worldbank.org/curated/en/774051473400159803/pdf/108199-WP-P145377-PUBLIC-ArmeniaSTEPSkillsReportFullyeditedJan.pdf.

[87] ԱՄԿ Դպրոցից աշխատաշուկա անցման ուսումնասիրություն (SWTS) երկիր հակիրճ, ԱՄԿ, 2016. https://www.ilo.org/wcmsp5/groups/public/---ed_emp/documents/publication/wcms_537747.pdf

հավանականությամբ, այս կատեգորիայի անձանց աննշան թվի պատճառով: Ուստի, չի կարելի համարել, որ այս երևույթը կարող է ազդել ազգային աշխատաշուկայի վրա:

108. Ուղեղների արտահոսքի առկայությունը նույնպես լայնորեն ընդունված է, սակայն կրկին որևէ վիճակագրություն չկա այդ կապակցությամբ:

Բ.1.4 Առանձնահատուկ մարտահրավերներ և հնարավորություններ. թվային փոխակերպում

109. Հայաստանը բավականին առաջադեմ է հասարակության թվային փոխակերպման գործընթացում: Կան դրա բազմաթիվ օրինակներ, ինչպիսիք են էլեկտրոնային կառավարության համակարգի ներդրումը, թվայնացված փաստաթղթերի շրջանառությունը բոլոր պետական մարմիններում[88], էլեկտրոնային ստորագրությունները բոլոր քաղաքացիների համար, որոնք առկա են ավելի քան 10 տարի: Բնակչությունն օգտվում է բազմաթիվ առցանց ծառայություններից (նաև բջջային հավելվածներով), ներառյալ՝ էլեկտրոնային բանկինգը, «ԱրՔա» ազգային վճարային համակարգը (բոլոր միջազգային վճարային համակարգերին զուգահեռ), միջազգային ձայնային և հաղորդագրությունների համակարգի «Զանգի» տեղական անալոգը, կամ ցանկացած բիզնեսի առցանց գրանցման հնարավորությունը: 2011թ. հնարավոր է դարձել առցանց տնտեսական օպերատորների հարկային հաշիվների դուրսգրումը, իսկ 2014-2015թթ. սկսած այն դարձել է պարտադիր և երկրում գործող ցանկացած կազմակերպության ինվոյսինգի միակ ձևը: Ներկայումս միայն Հայաստանի ՏՏ ընկերությունների ուղեցույցում[89] գրանցված են ավելի քան 320 կազմակերպություն, որոնց կեսից ավելին արտադրում են համակարգ և/կամ հարմարեցված ծրագրակազմ:

110. Այս փոխակերպումը, այնուամենայնիվ որևէ էական, առնվազն՝ հստակ տեսանելի ազդեցություն ՄԿՈՒ-ի վրա չի ունեցել: Մի կողմից՝ համակարգչային գրագիտության ուսուցման մոդուլը պարտադիր է դարձել բոլոր որակավորումների պետական կրթական չափորոշիչների համար 2000-ականների վերջին (նախկինում գրեթե բոլոր ուսումնական ծրագրերում համապատասխան առարկա կար), մյուս կողմից՝ մինչ այժմ ՄԿՈՒ բովանդակության մեջ էական փոփոխություններ չեն արվել նոր թվայնացված տեխնոլոգիաների պահանջները բավարարելու ուղղությամբ, օրինակ՝ արդյունաբերության մեջ: ՄԿՈՒ ուսանողներին երբեմն պրակտիկայի ընթացքում դասավանդում են ընկերություններում ներդրված թվային տեխնոլոգիաները, մասնավորապես՝ պիլոտային դուալ կրթության դեպքում: Այնուամենայնիվ, որոշ մասնագիտությունների համար, ինչպիսիք են՝ հաշվապահությունը, թվային միջավայրում գործառնությունների ուսուցումը (օրինակ՝ «ՀԾ-հաշվապահություն» հայկական հաշվապահական համակարգը) դարձել է անխուսափելի:

111. Միևնույն ժամանակ, ՏՏ ոլորտի մասնագետների պահանջարկն աճում է, և ՄԿՈՒ հաստատություններին համագործակցության առաջարկով են դիմում տարբեր ընկերություններ: Դեռ ավելին՝ ուսանողները նաև դառնում են ավելի պահանջկոտ իրենց մասնագիտություններին ուղղակիորեն կամ անուղղակիորեն առնչվող նոր ՏՏ հմտությունների ուսումնառության առումով: Թվային տեխնոլոգիաներով աշխատելը առավել տարածված է դառնում ՄԿՈՒ ուսանողների շրջանում առանց ֆորմալ ուսումնական ծրագրերի: Այսպես, օրինակ՝ Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջում ուսանողները ստեղծում են իրենց հաստատությունը գովազդող թվային անիմացիոն ֆիլմեր, մինչդեռ Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջում ուսանողների «թվային ստեղծագործությունը» (օրինակ՝ սեփական լրատվամիջոցների ռեսուրսների ստեղծում) բնականոն գործունեություն է:

Բ.1.5 Կրթությունն ու ՄԿՈՒ-ն ներառող քաղաքականության ռազմավարական արձագանքները

112. Երկրի քաղաքականության հիմնական շրջանակը սահմանվում է ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարությամբ[90] (ՀԶՌ): ՀԶՌ-ն որոշարկում է չորս գերակայություն՝ 1) Զբաղվածության ընդլայնում, 2) Մարդկային կապիտալի զարգացում, 3) Սոցիալական պաշտպանության համակարգի

---

[88] "Mulberry" կոչվող համակարգ

[89] " Հայաստանի ՏՏ ընկերությունների ուղեցույցը" (http://itguide.eif.am) ստեղծվել և գործարկվել է ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի կողմից (http://www.eif-it.com), խոշորագույն տեխնոլոգիական բիզնես ինկուբատորներից և խորհրդատվական ընկերություններից մեկն է Հայաստանում:

[90] Կառավարության որոշում № 442, 27.03.2014.

բարելավում և 4) Կառավարման համակարգի ինստիտուցիոնալ արդիականացում: Գերակայություն 1-ում շեշտը դրվում է աշխատանքային ռեսուրսների արդյունավետության բարելավման, զբաղվածության մակարդակի բարձրացման, գործազուրկների, մարգինալացված և սոցիալապես անապահով վիճակում գտնվող անձանց աշխատաշուկա վերադառնալը հեշտացնելու և աղքատությունը մեղմելու նպատակով նվազագույն աշխատավարձի քաղաքականության իրագործման վրա: Գերակայություն 2-ն ուղղված է մասնագիտական և բարձրագույն կրթության մատչելիության բարձրացմանը, մասնագիտական կրթության որակի բարելավմանը և այն աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցնելուն: Հիմնական նպատակը շրջանավարտների զբաղվածության խթանումն է:

113. Կրթության ոլորտում պետական քաղաքականությունը սովորաբար սահմանվում է Կրթության զարգացման ազգային ծրագրերով, որոնք ընդունվում են խորհրդարանի կողմից՝ որպես օրենք: Վերջին ծրագիրը նախատեսված էր 2011-2015թթ.[91] համար և արդեն սպառվել է: Ծրագիրը սահմանել էր կրթության զարգացման հետևյալ գերակայությունները՝

- Բացառիկ նվաճումներին ուղղված ծրագրերը խրախուսող ներդրումային քաղաքականություն.
- Բարեփոխումներն առաջնորդելու կարողությունների հզորացում.
- Գործունեության հաշվետվողականության և թափանցիկության բարելավում.
- Կրթության բովանդակության և չափորոշիչների բարելավում.
- Դասավանդող կադրերի կարողությունների հզորացում.
- Համակարգի օպտիմալացում և ինստիտուցիոնալ բարեփոխումներ.
- Միջազգային ցանցերում մասնակցության ընդլայնում:

114. Այդ ծրագրում ՄԿՈՒ զարգացման գերակայությունները հետևյալն էին՝

- Նախնական և միջին մասնագիտական կրթության համակարգի ինտեգրում միասնական եվրոպական կրթական տարածքին[92].
- ՄԿՈՒ համակարգի արդյունավետության և արդյունավորության ապահովում[93]:

115. Բացի այդ, ծրագիրը նախատեսել էր կառավարման համակարգի բարելավում, որի շրջանակներում, ի թիվս այլոց, պետք է մշակվեր ծրագրի մոնիթորինգի մեխանիզմներ և զարգացնել և ամբողջացնել կրթության կառավարման տեղեկատվական համակարգը (ԿԿՏՀ/EMIS):

116. ՀՀ զբաղվածության 2013-2018թթ. ռազմավարությունը և գործողությունների պլանը, որը կարգավորում է զբաղվածության պետական քաղաքականությունը, ընդունվել է 2012թ. նոյեմբերին[94]: Ռազմավարությունը խմբավորել է 10 բաղադրիչներ. 1) աշխատաշուկայի և տնտեսության համապատասխանության ապահովում. 2) աշխատաշուկայի և կրթական համակարգի միջև կապի ապահովում. 3) ժողովրդագրական և տարածաշրջանային հավասարակշռված զարգացման խթանում. 4) աշխատաշուկայի պետական կարգավորում. 5) աշխատաշուկայի կարգավորման ամենամյա պետական ծրագրի պլանավորում, իրականացում, մոնիթորինգ, գնահատում և թիրախային կառավարում. 6) աշխատավարձի պետական կարգավորում և աշխատանքի արտադրողականություն. 7) աշխատանքային հարաբերությունների պետական կարգավորում և վերահսկողություն. 8) սոցիալական գործընկերություն. 9) իրավական դրույթներ և 10) տեղեկատվական համակարգերի կառավարում:

---

[91] Օրենք № 246-Ն, 19th հուլիս, 2011թ.

[92] Համապատասխան խնդիրներն էին. ա) նպաստել մասնագիտական կրթության և ուսումնական հաստատությունների ինտեգրմանը համաշխարհային կրթական համակարգերին. բ) ՄԿՈՒ որակավորումների համակարգը համապատասխանեցնել որակավորումների եվրոպական շրջանակին. գ) ներդնել կրեդիտների կուտակման և փոխանցման ընդհանուր համակարգ. դ) բարձրացնել մասնագետների մասնագիտական իրազեկությունը այլ երկրների լավագույն փորձի և նվաճումների վերաբերյալ. ե) միանալ Կոպենհագենի հռչակագրին և գործընթացին. զ) նպաստել ՄԿՈՒ հաստատությունների ցանցային կապի հաստատմանը:

[93] Խնդիրներ. ա) ստեղծել մասնագիտական կողմնորոշման և խորհրդատվության արդյունավետ համակարգ. բ) խրախուսել սոցիալական գործընկերությունն ու երկխոսությունը.գ) կառուցել ՄԿՈՒ հաստատությունների արդյունավետ ցանց; դ) Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տնտեսական գերակայությունները, սահմանել հիմնական և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների առաջնահերթությունները և ներդնել մասնագետների պահանջարկի բացահայտման արդյունավետ համակարգ; ե) բարելավել ՄԿՈՒ հաստատությունների ուսումնանյութական բազան; զ) բարելավել հաստատությունների գործունեության հաշվետվողականությունն ու թափանցիկությունը:

[94] ՀՀ կառավարության արձանագրային որոշում № 45, 08.11.2012.

117. 2014թ. Հայաստանի խորհրդարանն ընդունեց «Զբաղվածության մասին» նոր օրենքը (№ 152-Ն, 2013թ. դեկտեմբերի 11), և կառավարությունը սահմանեց Զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագիրը, որը ներառում է զբաղվածության 11 ակտիվ ծրագիր (այս ծրագրերից երկուսն ունեն ենթածրագրեր, որոնք, երբեմն համարվում են առանձին ծրագրեր, և որոշ զեկույցներում նշվում է, որ կան աշխատաշուկայի 13 ակտիվ ծրագրեր), որոնք ուղղված են աշխատաշուկայում ոչ մրցունակ բնակչության առավել խոցելի խմբերի տնտեսական գործունեությանն աջակցելուն: Դրանք ներառում են երկարաժամկետ գործազուրկներին (ավելի քան 5 տարի), հաշմանդամություն ունեցող անձանց, 16-29 տարեկան երիտասարդներին, կանանց, բազմազավակ ընտանիքներին, և ընտանեկան նպաստի ծրագրերում ընդգրկվածներին: Ծրագրերը նաև ներառում են մանկատների և նախկին բանտարկյալների շրջանավարտների զբաղվածության աջակցումը:

118. Զբաղվածության նոր ռազմավարության մշակման գործընթացը, որը նախատեսված է 2019-2022թթ.[95] համար, նախաձեռնվել է ՀՀ ԱՍՀՆ-ի կողմից և ստանում է ԱՄԿ-ի աջակցությունը: ԱՄԿ փորձագետների[96] կողմից առաջարկվում են հետևյալ ոլորտները՝

1) Ամրապնդել կապը աշխատաշուկայի և կրթության միջև.
2) Համապատասխանեցնել կրթության և աշխատաշուկայի կարիքները երիտասարդների համար.
3) Խրախուսել գործատուներին ավելի շատ ժամանակ և գումար ներդնել ուսուցման գործընթացում.
4) Ակտիվացնել գրանցումը Զբաղվածության պետական գործակալության հետ.
5) վերլուծականորեն հիմնավորված ռազմավարությունները պետք է պատշաճ կերպով համակարգվեն միջգերատեսչական մակարդակով.
6) Խթանել նոր ռազմավարության տվյալների պահանջարկը, հավաքագրումը և կիրառումը հիմնավորված մոնիթորինգի և գնահատման համակարգով.
7) Մակրոտնտեսության քաղաքականությունը կարևորում է զբաղվածության և զարգացման նպատակները և կարող է ուղղվել դրանց իրականացմանը:

Բ.1.6 ՄԿՈՒ դերը աշխատաշուկայի ակտիվ քաղաքականությունների միջոցով տրվող լուծումներում

119. Պետական բյուջեով ֆինանսավորվող՝ զբաղվածության ոլորտի հիմնական ծառայությունները ներառում են աջակցություն աշխատաշուկայում անմրցունակ ճանաչված անձանց, աշխատանք փնտրողների և գործազուրկների աշխատանքի տեղավորմանը կամ ժամանակավոր զբաղվածության ապահովմանը: Բացի այդ զբաղվածության ծառայությունները ներառում են աջակցություն աշխատանք փնտրողների համար համապատասխան աշխատատեղերի ընտրության հարցում և ապահովում են գործատուներին անհրաժեշտ հմտություններ և որակավորումներ ունեցող աշխատուժով:

120. Զբաղվածության ամենամյա պետական ծրագրերում ներառված աշխատաշուկայի ակտիվ ծրագրերը չորս տեսակի են՝

1) **Ծրագրեր, որոնք աջակցում են շահառուի անհապաղ աշխատանքի տեղավորմանը կամ ինքնազբաղվածությանը**: Այս ծրագրերն են՝ «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցում և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար դրամական օգնության տրամադրում», «Աշխատանքի տոնավաճառի կազմակերպում», «Գործազուրկին այլ վայրում աշխատանքի տեղավորման աջակցության տրամադրում», «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրում», «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության կամ անասնապահությամբ զբաղվելու համար աջակցության տրամադրում», «Աշխատանքի տեղավորման ոչ պետական

[95] Քանի որ զբաղվածության նոր ռազմավարության ավարտումն ու հաստատումը չի ակնկալվում մինչև 2019թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսները, փաստաթղթի ժամանակահատվածը կարող է վերանայվել և տեղափոխվել մինչև, օրինակ՝ 2020-2024թթ.

[96] «Հայաստանի աշխատաշուկան. Նկատառումներ զբաղվածության հաջորդ ազգային ռազմավարության համար», Դունկան Քեմփբել, Պեր Ռոնաս, Սուսաննա Կարապետյան, ԱՄԿ 2018:

կազմակերպության կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու համար աջակցության տրամադրում»:

2) **Ծրագրեր, որոնք նախատեսված են ծրագրի ավարտից հետո 3 ամսվա ընթացքում շահառուների աշխատանքի տեղավորմանը կամ ինքնազբաղվածությանն աջակցելու համար**: Այս ծրագրերն են՝ «Գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող՝ աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում», «Ձեռք բերված մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրում»:

3) **Ծրագրեր, որոնք աջակցում են շահառուին առկա թափուր աշխատատեղերից ձեռք բերել համապատասխան աշխատանք**: «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց գործատուներին այցելության համար դրամական օգնության տրամադրում»:

4) **Ծրագրեր, որոնք ապահովում են ժամանակավոր զբաղվածություն**. «Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրում», «Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովում»:

121. Զբաղվածության ոլորտի ծրագրերի միջոցով պետական բյուջեից բնակչությանը հատկացվող հիմնական փոխանցումները ներառում են՝ ձեռք բերված մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրումը և աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրումը:

122. Աշխատաշուկայի պետական ակտիվ զբաղվածության ծրագրերի հիմնական շահառուներն են գործազուրկները, աշխատանք փնտրողները և աշխատաշուկայում անմրցունակ անձինք:

123. 2018թ. Զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագիրը ներառել է աշխատաշուկայի 11 ակտիվ ծրագրեր և խթանել զբաղվածությունը 2,672 աշխատանք փնտրողների համար: Շահառուների գերակշիռ մասը կանայք էին՝ 84%, հաշմանդամություն ունեցող անձինք կազմել են՝ 5% կամ 126 մարդ: Զբաղվածության ակտիվ ծրագրերի իրականացումը հանգեցրել է 1,962 անձանց մշտական աշխատանքի տեղավորմանը:

124. Զբաղվածության կարգավորման 2018թ. ամենամյա պետական ծրագիրը հաստատվել է կառավարության կողմից 2017թ. սեպտեմբերին[97] և ներառում է 15 գործողություն, այդ թվում՝ աշխատաշուկայի 11 ակտիվ ծրագրեր՝ 1.75 միլիարդ դրամ ֆինանսավորմամբ (3.1 միլիոն եվրո): Դրանց թվում կային երկու նոր աշխատաշուկայի ակտիվ քաղաքականություններ. 1) Աշխատաշուկայում անմրցունակ և մասնագիտություն չունեցող երիտասարդ մայրերի համար գործատուի մոտ մասնագիտական ուսուցման կազմակերպում և 2) Մասնակի փոխհատուցում մինչև երկու տարեկան երեխա ունեցող և երեխայի խնամքի արձակուրդում գտնվող մայրերին, և նրանց, ովքեր ցանկանում են վերադառնալ աշխատանքի մինչև երեխայի երկու տարեկանը լրանալը:

125. 2018թ. ընթացքում շուրջ 154 հազար մարդ դիմել և խորհրդատվություն և տեղեկատվություն է ստացել ԶՊԳ տարածաշրջանային կենտրոնների միջոցով: Նրանցից ավելի քան 20 հազար մարդ օգտվել է կարիերայի ուղղորդման (մասնագիտական կողմնորոշման) ծառայություններից: Աշխատանքի տեղավորումը խթանվել է շուրջ 11,996 աշխատանք փնտրողների համար, այդ թվում՝ 8,159-ը (68%) կանայք են եղել: 16-29 տարեկան երիտասարդները կազմել են 3,894 հոգի կամ 33%: 83% կամ 9,932 անհատներ, ովքեր աջակցություն են ստացել աշխատանքի տեղավորման հարցում, եղել են աշխատաշուկայում անմրցունակ անձինք:

Բ.1.7 Հմտությունների պահանջարկի բացահայտումը և դրա ազդեցությունը ՄԿՈՒ իրականացման վրա

126. Յուրաքանչյուր տարի ՄԿՈՒ հաստատություններում ընդգրկվածությունը պլանավորելու համար (հիմնականում պետական բյուջեից ֆինանսավորվող՝ անվճար, բայց նաև վճարովի տեղերի համար), ԿԳՆ-ն պաշտոնապես տեղեկատվություն է պահանջում ՄԿՈՒ պահանջարկի վերաբերյալ տարածաշրջանային

[97] Կառավարության արձանագրային որոշում № 41, 28.09.2017.

մակարդակում մարզպետարաններից, իսկ ոլորտային մակարդակում՝ նախարարություններից: Այս աղբյուրները, այնուամենայնիվ, տրամադրում են միայն քանակական տեղեկատվություն, այսինքն՝ մարզի կամ ոլորտի տնտեսության մեջ պահանջվող ՄԿՈՒ որակավորմամբ անձանց թիվը, եթե այդպիսիք կան: Բացի այդ, գործատուներին ներկայացնող երկու հիմնական կառույցները՝ ՀՀ առևտրաարդյունաբերական պալատը և Հայաստանի գործատուների հանրապետական միությունը, նույնպես տրամադրում են համապատասխան տեղեկատվություններ ՄԿՈՒ պահանջարկի վերաբերյալ: Այդ տվյալների ճշգրտությունը և վավերությունը, իհարկե, միշտ կարող են վիճելի լինել, սակայն հիմնական խնդիրը, թերևս, որակական կողմն է, այսինքն՝ հմտությունները (կամ գիտելիքներն ու կարողությունները), որոնցով ՄԿՈՒ շրջանավարտները պետք է զինվեն: Այդ հարցը չի քննարկվում ընդգրկվածությունը պլանավորելու փուլում:

127. ՄԿՈՒ հաստատություններից նույնպես պահանջվում է ներկայացնել առաջարկություններ տվյալ տարվա սովորողների թվաքանակի մասին: Նրանց դիրքորոշումը կարևոր է հաստատությունների կարողությունների (մարդկային և նյութական ռեսուրսների առկայության)՝ պահանջարկին համապատասխան ուսուցում իրականացնելու առումով: Պետք է հաշվի առնվի նաև համապատասխան լիցենզիայի առկայությունը:

128. Քանակական տեղեկատվություն տրամադրող մեկ այլ կառույց է Զբաղվածության պետական գործակալությունը: Այսպես, օրինակ՝ այս կազմակերպության կողմից 2,154 պետական և մասնավոր՝ տնտեսության տարբեր ճյուղերին պատկանող և տարբեր չափսերի կազմակերպությունների շրջանում 2018թ. իրականացված հարցման արդյունքներն այդ կազմակերպություններից 305-ում բացահայտեցին 846 թափուր աշխատատեղ: ՄԿՈՒ-ին առնչվող ամենապահանջված որակավորումները հետևյալն էին՝ տարբեր տեսակի տեխնիկներ, էլեկտրիկներ, հաշվապահներ, վաճառքի մենեջերներ, մատուցողներ, մատնահարդարներ, դիմահարդարներ, այգեգործներ, ֆլորիստներ, կահույք արտադրողներ, ոսկերիչներ, ատաղձագործներ, փականագործներ, գորգագործներ և այլն:

129. Երկրում փաստորեն գոյություն չունեն արդյունավետ մեխանիզմներ աշխատաշուկայում առկա հմտությունների պահանջարկի բացահայտման, առավել ևս՝ հետագա կարիքների կանխատեսման համար: Հայաստանում՝ պահանջվող կարողությունների սահմանման և դրանք ուսումնառության արդյունքների վերափոխման համար կիրառվող ամենագործնական մեթոդը գործատուների ներկայացուցիչների ներգրավումն է պետական կրթական չափորոշիչների մշակման գործընթացին, որը քննարկվում է սույն զեկույցի Բաժին Դ.3.4-ում:

130. Պետք է փաստել, որ կրթության բովանդակությունը և հմտությունների պահանջարկը սահմանելու համար ԿԳՆ-ն լրջորեն հաշվի է առնում նաև որոշ դոնորների և ծրագրերի կողմից իրականացված հետազոտությունների և ուսումնասիրությունների արդյունքները, որոնք, մասնավորապես օգտակար են գործատուների կողմից պահանջվող առանցքային հմտությունների բացահայտման համար: Նման ուսումնասիրությունների օրինակներ են՝ «ՍԵՅ ԵՍ» ծրագրի «Բազային ցուցիչների գնահատում»[98] և «Գյուղատնտեսության ոլորտում պահանջվող հմտությունների և երիտասարդների՝ Հայաստանի գյուղատնտեսության ոլորտում աշխատելու շահագրգռվածությանն ուղղված հարցում»[99] հետազոտությունները, որոնք իրականացվել են Վորլդ Վիժն Հայաստանի և գործընկեր «Գլոբալ զարգացումներ» հիմնադրամի կողմից իրականացվող «ԵՄ-ն հանուն երիտասարդության՝ ՍԵՅ ԵՍ. հմտություններ աշխատանքի համար» ծրագրի շրջանակներում, ինչպես նաև Սեյվ դը չիլդրենի կողմից իրականացվող «Հայաստանում աշխատաշուկայի երիտասարդակենտրոն և գենդերազգայուն հետազոտությունը»[100]:

Բ.1.8 Աջակցություն միգրանտներին և փախստականներին ՄԿՈՒ-ի միջոցով

131. Ֆորմալ ՄԿՈՒ համակարգում գոյություն չունի միգրանտներին կամ փախստականներին ուղղված հատուկ քաղաքականություն կամ գործունեություն: Չնայած կան մի շարք նախաձեռնություններ, այդ թվում՝ դոնորների կողմից ֆինանսավորվող, որոնք, մասնավորապես՝ հասցեագրված են Սիրիայից փախստականների հարցերին: Մասնավորապես՝ 2015 թվականից մինչև 2017թ. Եվրամիության կողմից

[98] https://www.wvi.org/sites/default/files/Report_eng%2C%20SAY%20YES%20baseline_Final.pdf.
[99] https://www.wvi.org/sites/default/files/Report%20Survey%20on%20Skills%20Need%20eng.pdf.
[100] https://armenia.savethechildren.net/sites/armenia.savethechildren.net/files/library/LMR%20Report_Eng.pdf.

ֆինանսավորվող[101] «Սիրիահայերի ինտեգրման խթանում» ծրագիրն իրականացվել է հայկական Կարմիր Խաչ ընկերության կողմից: Ծրագրի նպատակն է խթանել սիրիահայերի տնտեսական ինտեգրումը[102] և երեխաների կրթությունը, և իրականացվել է Երևանում, Շիրակի, Լոռու, Կոտայքի, Արագածոտնի, Արարատի և Արմավիրի մարզերում:

132. Ցուցաբերվել է տարաբնույթ աջակցություն՝ թե՛ տնտեսական, թե՛ սոցիալ-մշակութային ինտեգրմանը: Ստեղծվել է էլեկտրոնային կայք, որը հասանելի կլինի զբաղվածության գործակալությունների և գործարար աշխարհի համար, խորհրդատվություններ են տրամադրվել, ուսումնասիրություններ են իրականացվել սիրիահայերի համար աշխատաշուկան և նրա պահանջները բացահայտելու նպատակով: Պատմամշակութային միջոցառումներ են կազմակերպվել դպրոցներում և հասարակական վայրերում իրազեկման բարձրացման և ինտեգրման նպատակով: Շուրջ 5000 աշակերտ է ներգրավվել կրթական գործունեության մեջ, այդ թվում՝ 800 սիրիահայեր:

133. Ներկայումս Վորլդ Վիժն Հայաստանն իրականացնում է երկամյա (2019-2020) ծրագիր՝ «Կայուն լուծումներ տեղահանված և կոնֆլիկտից տուժած անձանց ինտեգրման համար», որը ֆինանսավորվում է ԱՄՆ Պետքարտուղարության բնակչության, փախստականների և միգրացիայի գրասենյակի կողմից: Ծրագրի նպատակն է նպաստել Հայաստանում՝ տեղահանված և կոնֆլիկտից տուժած անձանց և տեղացիների աշխատանքային հնարավորությունների ընդլայնմանը և ապրուստի միջոցների կայուն հասանելիությանը: Ծրագիրը հիմնված է ԱՄՆ Պետքարտուղարության բնակչության, փախստականների և միգրացիայի գրասենյակի կողմից ֆինանսավորվող 2017 և 2018թթ. հաջողությամբ իրականացված երկու ծրագրերի բաղադրիչների վրա:

134. Ծրագիրը կաշխատի շուրջ 760 ուղղակի շահառուների հետ՝ փախստականներ, ապաստան հայցողներ, փախստականի հատուկ իրավիճակում հայտնված, տեղահանված ու կոնֆլիկտից տուժած անձինք, ինչպես նաև տեղացիներ, կանայք և տղամարդիկ, հիմնականում (բայց ոչ միայն) Երևանում, Չարենցավան քաղաքում և Արարատի մարզի Դարբնիկ համայնքում:

135. Երևանում կհիմնադրվի ձեռներեցության աջակցության միավոր, որը կկազմակերպի անհրաժեշտ վերապատրաստումներ, որպեսզի տեղի երկու առանցքային կազմակերպությունները՝ Սիրիահայերի միությունը և «Հալեպ» հայրենակցական բարեսիրական կազմակերպությունը իրենց կառուցվածքում ներառեն ձեռներեցության աջակցման միավորը և մեթոդաբանություն: Մրցութային կարգով ընտրված 40 սկսնակ ձեռներեցներ և փոքր ու միջին ձեռնարկություններ կծանոթանան նորարարությանն ու ձեռներեցությանը վերաբերող թեմաների: Ձևավորված խորհրդատվական խումբը ֆինանսական և մասնագիտական աջակցություն կցուցաբերի սկսնակ ձեռներեցներին և փոքր ու միջին ձեռնարկություններին:

136. Փոքր ու միջին ձեռնարկությունների համար տարածաշրջանային ու ազգային շուկաները, ձեռներեցության ցանցերն ու ասոցիացիաները հասանելի դարձնելու նպատակով ձեռներեցության աջակցման միավորը կկազմակերպի փորձի փոխանակման հանդիպումներ, ցուցահանդեսներ և (միջ)ազգային տոնավաճառներ:

Բ.2: Ձեռներեցային կրթության և ձեռներեցություն

Բ.2.1 Աշխատատեղերի ստեղծումն ու ՄԿՈՒ-ն

137. Ֆորմալ ՄԿՈՒ միջոցով ինքնազբաղվածության խթանումը հասցեագրված է ձեռներեցային կրթության ուսումնառության ներդրմանը, որը քննարկվում է ստորև բաժին Բ.2.2-ում: Միևնույն ժամանակ, կան նախաձեռնություններ, որոնք ուղղված են այս խնդրին նաև ոչ ֆորմալ ուսուցման միջոցով: Այսպես՝ «ԵՄ-ն հանուն երիտասարդության՝ ՍԵյ ԵՍ. հմտություններ աշխատանքի համար» ծրագրի շրջանակներում միջամտություններից մեկը երիտասարդներին տնտեսապես հզորացնելու համար նախատեսված՝ 15 ՍՔԱՅ ակումբների ստեղծումն ու գործարկումն է: Դրանք բացվել են 4 ՄԿՈՒ հաստատություններում, և 312 երիտասարդներ, հիմնականում այդ քոլեջների ուսանողները, ներգրավված են, որպեսզի սովորեն լինել

[101] ԵՄ ֆինանսավորումը կազմել է 94.1%, և 5.9%-ը՝ եղել է համաֆինանսավորում:

[102] Ըստ գնահատումների ՝ Հայաստան է եկել ավելի քան 20 հազար սիրիացի փախստական: Նրանցից շատերը հեռացել են, բայց զգալի թվով սիրիացիներ մնացել և փորձել են ինտեգրվել:

ակտիվ քաղաքացիներ և կարեկից առաջնորդներ, ձեռք բերեն ձեռներեցության և զբաղունակության հմտություններ միջոցառումների միջոցով և միմյանցից:

138. Այդ ակումբների խմբավարները, ովքեր դասավանդում են քոլեջներում, նաև նշում են, որ փորձում են կիրառել ինտերակտիվ ուսուցման մեթոդները իրենց սովորական դասերին, ինչպես նաև նրանք տեսնում են փորձառական ուսուցման արժեքը: Ծրագրի թիմը գնահատել է ակումբի անդամների գործունակության հմտությունները իրենց ելակետային գիտելիքները չափելու և հետագայում ձեռք բերածի հետ համեմատելու նպատակով: Հայկական ՍՔԱՅ ակումբի անդամները նաև զբաղվել են ձեռնարկատիրական գործունեությամբ՝ ձեռնարկատիրության ոլորտում իրենց գիտելիքներն ու պրակտիկան առավել ամրապնդելու և իրենց սեփական գործը սկսելու նպատակով: Լրացուցիչ հնարավորություններ են ստեղծվել ՍՔԱՅ ակումբի անդամների (և մյուս երիտասարդների) զարգացման համար: Դրանք են ՏՏ և անգլերեն դասերը և անվճար առցանց կրթական ռեսուրսները: Ակնկալվում է, որ ՍՔԱՅ ակումբները կլրացնեն ֆորմալ կրթությունը երիտասարդների՝ աշխատաշուկայում առավել մրցունակ դառնալու համար:

Բ.2.2 Ձեռներեցային գործունեության խթանման ՄԿՈՒ քաղաքականությունը

139. ՄԿՈՒ ոլորտի բարեփոխումների ռազմավարության նախագծում գերակայություններից մեկն է «Երիտասարդության զբաղվածության և ձեռներեցային գործունեության խթանումը»: Համապատասխանաբար՝ գործողությունների ծրագրում նախատեսված են հետևյալ միջոցառումները. 1) Ձեռնարկատիրական կրթության հայեցակարգի մշակում. 2) ՄԿՈՒ կրթական չափորոշիչներում ձեռներեցության մոդուլի ներդրում. 3) ՄԿՈՒ ոլորտում ձեռնարկատիրական կարողությունների զարգացմանն ուղղված ուսումնամեթոդական նյութերի և ձեռնարկների մշակում և փորձարկում. 4) ՄԿՈՒ դասավանդողների և կառավարում իրականացնողների վերապատրաստում ձեռներեցության մոդուլով:

140. Այդ չորս միջոցառումներից երեքը (№ 2-4) արդեն իրականացվել են: Այսպես՝ 2017թ. ձեռներեցության մոդուլը մշակվել էր GIZ «Մասնավոր հատվածի զարգացում և մասնագիտական կրթություն և ուսուցում Հարավային Կովկասում» ծրագրի աջակցությամբ, և այն կդառնա պարտադիր ՄԿՈՒ բոլոր ծրագրերի համար 2019-2020 ուս. տարվանից: Մոդուլը նախատեսված է 72 ժամի համար և առաջարկվում է դասավանդել ուսուցման վերջին տարվա ընթացքում, երբ ուսանողներն արդեն տիրապետում են որակավորմանն առնչվող հիմնական կարողություններին: Մոդուլը կանխորոշում է ուսումնառության հետևյալ արդյունքները՝

- Ներկայացնել հիմնավորված բիզնես գաղափարի մշակման գործընթացը.
- Ներկայացնել ընկերության հիմնադրման և գրանցման, կառավարման գործընթացի կանոնակարգը.
- Կատարել շուկայի հետազոտման և գնահատման գործունեություն.
- Բնութագրել ընկերության ռեսուրսները և գնահատել դրանց օգտագործման արդյունավետությունը.
- Կատարել ծախսերի հաշվարկ և սահմանել ապրանքի (ծառայության) գինը.
- Մշակել բիզնես պլան և գործողությունների ծրագիր.
- Հաշվարկել հարկերն ու տուրքերը, պատրաստել ֆինանսական հաշվետվություն:

141. 2017թ. GIZ-ը մշակել է ուղեցույց՝ «Ձեռնարկատիրական հմտությունների զարգացում» մոդուլի ՄԿՈՒ հաստատությունների դասավանդողների համար, և ուսումնական ձեռնարկ՝ «Ձեռնարկատիրական հմտությունների զարգացում» մոդուլի վերապատրաստման դասընթացի մասնակիցների համար: «Ձեռնարկատիրական հմտությունների և դյուրացման մեթոդների մշակում» վերապատրաստումը իրականացվել է 25 ՄԿՈՒ դասավանդողների համար վերոնշյալ ուսումնական ձեռնարկների կիրառմամբ: Բացի այդ, ՄԿՈՒ ուսանողների համար հրապարակվել է ուղեցույց: Այն ներառում է տարատեսակ նյութեր, որոնք աջակցում են տեսական և գործնական ուսումնառությանը, ինչպես նաև հանձնարարություններ տվյալ առարկայի կամ բաժնի շրջանակներում «Ձեռնարկատիրական ուսումնառություն» մոդուլի նպատակներին համապատասխան:

II. Ամփոփում և եզրակացություններ

142. Բոլոր շահագրգիռ կողմերը (պետական և մասնավոր) ընդունում են **հմտությունների անհամապատասխանության** փաստը, և ՄԿՈՒ շրջանավարտների հմտությունները աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցնելու անհրաժեշտությունը հստակ նշված է քաղաքականության

փաստաթղթերում: Միևնույն ժամանակ, հմտությունների անհամապատասխանության մակարդակն ու ձևերը լավ ուսումնասիրված և փաստագրված չեն: Ավելին՝ փաստորեն գոյություն չունեն աշխատաշուկայում առկա հմտությունների պահանջարկի բացահայտման, առավել ևս՝ հետագա կարիքների կանխատեսման արդյունավետ մեխանիզմներ: Կրթության բովանդակությունը սահմանվում է բացառապես պետական կրթական չափորոշիչների մշակման միջոցով՝ սահմանափակ թվով գործատուների մասնակցությամբ: ՄԿՈՒ ուսանողների թվաքանակի պլանավորման համար ԿԳՆ-ն ՄԿՈՒ պահանջարկի վերաբերյալ տեղեկատվություններ է հավաքագրում համապատասխան նախարարություններից, մարզային իշխանություններից և գործատուների միություններից: Դժբախտաբար, ոչ միայն այդ տվյալների ճշգրտությունն ու վավերականությունն են վիճահարույց, այլև պահանջվող հմտությունները (կամ գիտելիքներն ու կարողությունները) այդ փուլում քննարկման առարկա չեն:

143. Երկիրը **թվայնացման** բավականին բարձր մակարդակ ունի: ՏՏ ոլորտի, այդ թվում՝ ՄԿՈՒ մասնագետների պահանջարկն աճում է: Բացի այդ, ուսանողները դառնում են առավել պահանջկոտ ՏՏ նոր հմտություններ սովորելու առումով: Թվային փոխակերպումը, այնուամենայնիվ, առանձնահատուկ ազդեցություն չի ունեցել ՄԿՈՒ համակարգի վրա, և թվային տեխնոլոգիաներով աշխատելը, որը տարածված է ՄԿՈՒ ուսանողների շրջանում, մնում է ֆորմալ ուսումնական ծրագրերից դուրս:

144. Երկրի ***քաղաքականության հիմնական շրջանակը*** սահմանվում է ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրով: Ոլորտին առնչվող փաստաթղթերը, այն է՝ Կրթության զարգացման ազգային ծրագիրը և ՄԿՈՒ ոլորտի բարեփոխումների ծրագիրը, սպառվել են 2016թ., իսկ նորերը չեն հաստատվել ու մեկնարկել: Ներկայումս մշակվում է ավելի երկարաժամկետ, համապարփակ փաստաթուղթ՝ Կրթության զարգացման 2020-2030թթ. ռազմավարությունը, որն ակնկալվում է հաստատվել ամենաուշը 2020թ. առաջին եռամսյակում:

145. Զբաղվածության ռազմավարության ժամկետը լրացել է (2018թ.), և նոր՝ մինչև 2022թ. ռազմավարության մշակումն ընթացքի մեջ է ԱՄԿ փորձագետների աջակցությամբ:

146. Վերոնշյալ հարցերի առնչությամբ առաջարկվում է՝

- Մշակել և ներդնել հմտությունների անհամապատասխանության բացահայտման արդյունավետ մեխանիզմ, ինչպես նաև ՄԿՈՒ ընդգրկվածության պլանավորման առավել արդյունավետ համակարգ:
- Վերանայել բոլոր ֆորմալ ՄԿՈՒ որակավորումների ուսումնական ծրագրերը ուսանողներին առավել առաջադեմ ՏՏ հմտություններ ուսուցանելու նպատակով (օրինակ՝ համակարգչային գրագիտության ուսուցման պարտադիր մոդուլի բարելավման, ինչպես նաև այլ մոդուլներում ՏՏ կիրառման տարրերի ներդրման միջոցով), մշակել և ներդնել դասավանդման և ուսումնառության գործընթացներում ՏՏ-ների առավել լայնածավալ կիրառման մեթոդաբանություն: ՄԿՈՒ հաստատությունները կարող են առաջարկել նաև լրացուցիչ (ոչ ֆորմալ) ՏՏ դասընթացներ իրենց ուսանողների և դասախոսական անձնակազմի, ինչպես նաև բնակչության համար:
- Մշակել ՄԿՈՒ համակարգի վերակառուցման և օպտիմալացման հայեցակարգ, ներառյալ բոլոր կողմերը, այն է՝ ՄԿՈՒ մակարդակները, որակավորման աստիճանները, չափորոշիչներն ու ուսումնական պլանները, հաստատությունների ցանցն ու դրանց կարգավիճակը և այլն:
- Ձանքեր գործադրել մշակման փուլում գտնվող կրթության զարգացման ռազմավարության, մասնավորապես ՄԿՈՒ ոլորտին առնչվող մասի համապատասխանության և արժանահավատության ապահովման ուղղությամբ՝ հաշվի առնելով սույն զեկույցի առաջարկությունները:
- Վերոնշյալ ռազմավարության հաստատումից հետո մշակել միջնաժամկետ (օրինակ՝ 5-տարի) ՄԿՈՒ ոլորտի բարեփոխումների գործողությունների պլան և մշակել ու ներդնել դրա իրականացման մոնիթորինգի արդյունավետ մեխանիզմ:

Բաղադրիչ Գ. Սոցիալական միջավայրը և ՄԿՈՒ անհատական պահանջարկը

Գ.1. Մասնակցություն ՄԿՈՒ-ին և ցկյանս ուսումնառությանը

Գ.1.1 Մասնակցություն

147. ՄԿՈՒ-ն շարունակում է մնալ երկրորդ ընտրությունը ինչպես հիմնական ընդհանուր, այնպես էլ միջնակարգ ընդհանուր կրթության շրջանավարտների համար: Այսպիսով, չնայած վերջին տարիների ընթացքում հիմնական ընդհանուր կրթությունն ավարտածների շրջանում ՄԿՈՒ ընտրածների մասնաբաժինը զգալիորեն աճել է, սակայն նրանք դեռևս կազմում են ավագ դպրոցներում կրթությունը շարունակողների կեսից պակասը (Աղյուսակ 9):

Աղյուսակ 9. Հիմնական ընդհանուր կրթությամբ շրջանավարտների թվաքանակը՝ ըստ հետագա կրթության, %

Ուսումնական տարի	Միջնակարգ ընդհանուր կրթությունը շարունակող		ՄԿՈՒ ընդունվածներ	
	ընդամենը	կանայք	ընդամենը	կանայք
2018-2019	67.2	71.9	26.7	23.2
2017-2018	54.0	57.2	23.6	20.5
2016-2017	57.0	60.8	20.6	17.4
2015-2016	59.8	63.1	19.1	15.9
2014-2015	59.9	64.4	16.6	13.6

Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

148. Միջնակարգ ընդհանուր կրթության շրջանավարտների հետագա կրթության ուղիները համեմատելիս, կարելի է նկատել, որ կրկին ՄԿՈՒ ընդունվածների թվաքանակը ցուցաբերում է կայուն աճ 2014-2017թթ., սակայն զգալիորեն (ավելի քան 5 անգամ) զիջում է համալսարան ընդունվածների թվաքանակին (Աղյուսակ 10):

Աղյուսակ 10. Միջնակարգ ընդհանուր կրթությամբ շրջանավարտների թվաքանակը՝ ըստ հետագա կրթական ուղիների

Տարեթիվ	Միջնակարգ ընդհանուր կրթությունն ավարտած		Նրանցից՝							
			Ընդունվել են բուհ				Ընդունվել են ՄԿՈՒ			
	ընդամենը	կանայք	ընդամենը		կանայք		ընդամենը		կանայք	
			թիվը	%	թիվը	%	թիվը	%	թիվը	%
2018-2019	28,874	13,701	9,512	*32.9%*	4,429	32.3%	1,557	*5.4%*	1,111	8.1%
2017-2018	18,749	9,762	15,538	*82.9%*	7,675	78.6%	3,084	*16.4%*	2,064	21.1%
2016-2017	22,655	11,702	17,649	*77.9%*	9,196	78.6%	3,382	*14.9%*	2,276	19.4%
2015-2016	23,726	12,393	18,061	*76.1%*	9,394	75.8%	3,549	*15.0%*	2,,439	19.7%
2014-2015	23,700	12,432	17,473	*73.7%*	9,001	72.4%	3,492	*14.7%*	2397	19.3%

Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

149. Արդյունքում բուհում սովորողների թվաքանակը ՄԿՈՒ հաստատություններում սովորողների թվաքանակից ավելի քան երկու անգամ ավելին է (Աղյուսակ 11):

Աղյուսակ 11. Բուհերի և ՄԿՈՒ ուսանողների թվաքանակը

Տարեթիվ	Համալսարանում սովորողների թվաքանակը		ՄԿՈՒ հաստատություններում սովորողների թվաքանակը	
	ընդամենը	կանայք	ընդամենը	կանայք

2018-2019	69,622	35,938	28,442	13,177
2017-2018	78,747	41,441	29,563	14,354
2016-2017	81,648	43,926	29,444	14,199
2015-2016	84,591	46,180	31,174	15,078
2014-2015	79,623	41,579	35,778	17,354

Աղբյուրը՝ ՀՀ Վիճակագրական կոմիտե

150. Հիմնական պատճառը բարձրագույն կրթության համակարգի ավանդական «գրավչությունն» է ինչպես երիտասարդների, այնպես էլ նրանց ծնողների համար:

151. 2014 թվականից ի վեր անվճար տեղերի քանակը զգալիորեն ավելացել է թե՛ նախնական, թե՛ միջին ՄԿՈՒ-ի համար, և շատ թե քիչ կայուն է՝ որոշակի շեղմամբ 2015 և 2018թթ (Աղյուսակ 12): Սա թույլ տվեց ընդլայնել երիտասարդների ՄԿՈՒ ստանալու հնարավորությունները և գրեթե բոլոր դիմորդներին ներգրավել անվճար կրթության համակարգում:

Աղյուսակ 12. ՄԿՈՒ անվճար տեղերի քանակը[103]

	2012	2013	2014	2015	2016	2017	2018
Նախնական ՄԿՈՒ	3,997	3,977	4,117	4,117	4,277	3,960	3,977
Միջին ՄԿՈՒ	3,882	3,882	8,404	5,411	7,992	8,309	6,546
Ընդամենը՝ ՄԿՈՒ	7,879	7,859	12,521	9,528	12,269	12,269	10,523

Գ.1.2 ՄԿՈՒ հնարավորությունները խոցելի ու մարգինալացված խմբերի համար

152. Բնակչության հետևյալ խմբերն օգտվում եմ արտոնություններից ինչպես ՄԿՈՒ հաստատություններ, այնպես էլ բուհեր ընդունվելիս՝

- առաջին և երկրորդ խմբի հաշմանդամություն ունեցող[104] և մինչև 16 տարեկան հաշմանդամ երեխաները.
- երկկողմանի ծնողազուրկ՝ մինչև 18 տարեկան երեխաները.
- մահացած և առաջին խմբի հաշմանդամություն ունեցող զինծառայողների երեխաները և ամուսինները.
- պարտադիր զինվորական ծառայություն անցածները:

153. Ընդունելության քննությունները (առկայության դեպքում) հաջողությամբ հանձնելուց հետո, նրանք օգտվում են անվճար կրթության իրավունքից[105]:

Գ.1.3 ՄԿՈՒ հասանելիության և մասնակցության բարելավման քաղաքականություն

***Տես՝ բաժին Բ**.1.5:*

Գ.1.4 Խոցելի և մարգինալացված խմբերի համար ՄԿՈՒ հասանելիության և մասնակցության խթանում

154. Բացառությամբ Գ.1.2 բաժնում քննարկված հարցերի, գոյություն չունեն բնակչության այլ կատեգորիաներ, որոնք պաշտոնապես համարվում են խոցելի կրթության հնարավորությունների տեսանկյունից, և կրթություն ստանալու այլ առավելություններ Հայաստանում նախատեսված չեն: Այնուամենայնիվ, խոցելիությունը ՄԿՈՒ (կամ ընդհանրապես կրթության) հնարավորությունների առումով, կարող է վերաբերել ցածր եկամուտ ունեցող ընտանիքների բոլոր երիտասարդներին: Մասնակցությունը ՄԿՈՒ-ին, նույնիսկ եթե անվճար է, պահանջում է լրացուցիչ ծախսեր, օրինակ՝ տրանսպորտի համար, որը, հատկապես վերաբերում է գյուղական համայնքներում բնակվող երիտասարդությանը, ովքեր ամեն օր պետք է հաճախեն քաղաքում գտնվող ՄԿՈՒ հաստատություններ (մարզային կամ տարածքային կենտրոններ):

[103] Կառավարության որոշումներ № 722-Ն, 07.07.2012; № 628-Ն, 13.06.2013; №5 69-Ն, 06.06.2014; № 600-Ն, 10.06.2015; № 692-Ն, 23.06.2016; № 728-Ն, 23.06.2017; № 686-Ն, 15.06.2018.

[104] Գոյություն ունի հաշմանդամության սահմանման երեք խումբ: Առաջինը ամենալուրջն է:

[105] Կառավարության որոշում № 545, 27.08.1999.

Հանրակացարաններում բնակվելը նույնպես լրացուցիչ ֆինանսական բեռ է ընտանիքների համար: Շատ դեպքերում աղքատության մեջ ապրող երիտասարդությունը ի վիճակի չէ ստանալ ՄԿՈՒ (կամ բարձրագույն կրթություն) աշխատաշուկա մուտք գործելու նույնիսկ առանց որևէ որակավորման) հրատապ անհրաժեշտության կամ, օրինակ՝ գյուղերում ընտանեկան տնտեսություններում ապրուստի միջոց վաստակելու համար ընդգրկված լինելու պատճառով:

155. Անվճար տեղերի թվի ավելացումը առնվազն ներդրում էր ՄԿՈՒ-ն առավել հասանելի դարձնելու համար: ՄԿՈՒ ուսանողներին վճարվող կրթաթոշակները որոշակի եկամուտ են, սակայն դրանք չնչին են՝ ամսական մոտ 8-9 եվրո: Արհեստագործական ուսումնարաններում ուսանողների 100%-ը ստանում է կրթաթոշակ, մինչդեռ քոլեջներում ՝ միայն 70%-ը՝ կախված իրենց ակադեմիական առաջադիմությունից: Այնուամենայնիվ, 2020 թվականի պետական բյուջեում արդեն անհրաժեշտ քանակությամբ գումար է նախատեսված քոլեջների ուսանողների 100%-ի համար կրթաթոշակ ապահովելու նպատակով:

Գ.1.5 Ճկուն ՄԿՈՒ ծրագրերի իրականացումը ՄԿՈՒ ոլորտում մասնակցության ընդլայնման նպատակով

156. Մասնակցությունը ՄԿՈՒ ոլորտում ընդլայնելը ԿԳՆ ռազմավարական նպատակներից մեկն է, սակայն ֆորմալ ՄԿՈՒ ծրագրերի իրականացման ճկունությունը բավականին սահմանափակ է: Ճշմարիտ է, որ ՄԿՈՒ հաստատությունները որոշակի ազատություն ունեն իրականացվող կրթության բովանդակությունը պետական կրթական չափորոշիչներով սահմանված ուսումնառության արդյունքներին և մոդուլներին համապատասխան սահմանելու (տես՝ Բաժին Դ.3.4), ինչպես նաև դասավանդման մեթոդների ընտրության գործում, սակայն ուսուցման կազմակերպման և իրականացման հարցերի մեծամասնությունը, ինչպիսիք են՝ ուստարվա մեկնարկը, դասընթացների տևողությունը, ուսուցման մատուցման ձևերը[106] խստորեն կարգավորված են տարբեր իրավական ակտերով, և ՄԿՈՒ հաստատությունները իրավասու չեն որևէ զգալի շեղումներ կատարել:

157. 2000-ականների երկրորդ կեսից ներդրված մոդուլային համակարգն իսկապես աջակցեց ՄԿՈՒ արդյունավետության և որակի բարձրացմանը: Մոդուլները արժեքավոր գործիքներ են կարճաժամկետ, ոչ ֆորմալ ՄԿՈՒ դասընթացների[107] իրականացման համար, սակայն չեն օժանդակում ֆորմալ ՄԿՈՒ-ի ճկունությանը:

158. Մասնակի որակավորման շնորհումը նույնպես դեռևս ներդրված չէ (մանրամասների համար տես՝ հաջորդ բաժինը):

Գ.1.6 Ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման վավերացումը

159. 2013-2014 թվականներին իրականացվող ԵԿՀ ծրագրի շրջանակներում մշակվել են ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության վավերացման հայեցակարգը, և գնահատման ուղեցույցը, և փորձարկվել են խոհարարի մասնագիտության վավերացման մեխանիզմները: Դրան հաջորդել է կառավարության կողմից երկու կանոնակարգերի[108] ընդունումը՝ լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման և իրականացման և ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների ճանաչման և գնահատման վերաբերյալ: Այս կանոնակարգերը, որոնք մշակվել են փորձագիտական խմբի կողմից ՄԱԶԾ[109] աջակցությամբ, պետք է ապահովեն Հայաստանում այնպիսի մեխանիզմի ներդրմանը, որը թույլ կտա վավերացնել անհատների գիտելիքները, հմտություններն ու կարողությունները նրանց գոնե մասնակի որակավորում շնորհելու համար: Այնուամենայնիվ, այդ նորարարական մոտեցումը չի ընդունվել կառավարության կողմից, և կանոնակարգի հաստատված տարբերակում նշվում է, որ շարունակական (ոչ ֆորմալ) ուսուցումը «*չի կարող հանգեցնել որակավորման շնորհման կամ ուսումնառության արդյունքների պաշտոնական ճանաչման, բացառությամբ*

---

[106] ՀՀ-ում նախատեսված են ուսուցման հետևյալ ձևերը՝ առկա կամ ստացիոնար, հեռակա, հեռավար և դրսեկություն (ընտանեկան և ինքնակրթություն).

[107] Ոչ ֆորմալ ՄԿՈՒ իրականացման վերաբերյալ զգալի տեղեկություններ, ներառյալ, օրինակ՝ Գործազուրկների մասնագիտական ուսուցումը ներկայացված է սույն զեկույցի շատ այլ բաժիններում:

[108] Կառավարության որոշում № 1062-Ն, 10.09.2015.

[109] UNDP /ՄԱԶԾ ծրագիրը «Աջակցություն մասնագիտական կրթության և վերապատրաստման համակարգի արդիականացմանը», 2006-2012թթ.

օրենքով նախատեսված դեպքերի»: Ներկայումս, որևէ օրենքով սահմանված չեն նման դեպքեր, այսպիսով՝ անարդյունավետ դարձնելով «գոյություն ունեցող» վավերացման համակարգը:

160. 2015թ. ԿԳՆ-ն լիազորել[110] է Ուսուցման ազգային հիմնադրամին (ՈՒԱՀ) որպես մարմին, որը պատասխանատու է ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների ճանաչման և գնահատման համակարգերի գործարկման, համակարգման, կազմակերպման և աջակցման համար: Ներկայումս, ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության վավերացման մեխանիզմը չի գործում ՈՒԱՀ-ում կարողությունների (հիմնականում՝ ֆինանսական) բացակայության պատճառով, որպեսզի իրականացնի համապատասխան վերապատրաստման ծրագրեր գնահատողների համար, ովքեր պետք է վավերացնեն սովորողի կարողությունները, ինչպես նաև կազմակերպի գնահատման և վավերացման ամբողջ գործընթացը:

161. Երկրում ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության վավերացումը խթանելու համար Եվրամիության կողմից ֆինանսավորվող «ԵՄ-ն հանուն երիտասարդության՝ ՍԵՅ ԵՍ. հմտություններ աշխատանքի համար»[111] ծրագրի շրջանակներում կկազմակերպվի կարողությունների զարգացման ծրագիր ՈՒԱՀ-ի, ինչպես նաև վավերացման մեխանիզմ իրականացնող ընտրված ՄԿՈՒ քոլեջների համար: Դրան կհաջորդի ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության պիլոտային վավերացումը ՄԿՈՒ քոլեջներում այն սովորողների համար, ովքեր վերոնշյալ ծրագրի շրջանակներում ավարտել են աշխատանքի վրա հիմնված ուսումնառության դասընթացները 4 գյուղատնտեսական մասնագիտությունների ուղղությամբ՝ գինեգործություն, գյուղտեխնիկայի շահագործում, անասնաբուժություն և կաթնամթերքի արտադրություն: Դրանից հետո կմշակվեն և ԿԳՆ կներկայացվեն առաջարկություններ ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության վավերացման կանոնակարգերի կատարելագործման վերաբերյալ:

Գ.2. Անաչառություն և հավասար հնարավորություններ ՄԿՈՒ ոլորտում

Գ.2.1 ՄԿՈՒ համակարգում սովորողների հաջողությունները

162. ՄԿՈՒ ոլորտի շրջանավարտների թվաքանակը բավականին բարձր է: Չնայած դուրս մնացած շրջանավարտների բացարձակ թիվը բավականին կայուն է (մոտավորապես՝ 1,500-1,600), նրանց մասնաբաժինը չի գերազանցում տվյալ տարվա ՄԿՈՒ ուսանողների ընդհանուր թվաքանակի 7%-ին: Դուրս մնացած ուսանողների դինամիկան ներկայացված է Աղյուսակ 13-ում:

Աղյուսակ 13. Դուրս մնացած ուսանողների դինամիկան

	2014-2015		2015-2016		2016-2017		2017/2018		2018/2019	
	Ընդամենը	Կանայք	Ընդամենը	Կանայք	Ընդամենը	Կանայք	Ընդամենը	Կանայք	Ընդամենը	Կանայք
Դուրս են մնացել, ընդամենը, *այդ թվում՝ ըստ պատճառների*	1,609	417	1,499	384	1,497	298	1,603	369	1,628	397
Ֆիզիկական անկարողություններ (ներառյալ առողջականը)	*51*	*41*	*14*	*6*	*8*	*7*	*14*	*10*	*28*	*22*
Նյութական անկարողություններ	*215*	*85*	*181*	*59*	*112*	*36*	*99*	*45*	*74*	*30*
Անբավարար առաջադիմություն	*227*	*74*	*205*	*51*	*223*	*52*	*259*	*76*	*279*	*90*
Բանակում ծառայող	*488*	*n.a.*	*n.a.*	*n.a.*	*n.a.*	*n.a.*	*n.a.*	*n.a.*	*n.a.*	*n.a.*
Այլ պատճառներ	*628*	*217*	*1,099*	*268*	*1,154*	*203*	*1,231*	*238*	*1,247*	*255*
Տվյալ տարվա ՄԿՈՒ ուսանողների ընդհանուր թվաքանակի %-ը	6.1%	3.8%	6.5%	4.1%	6.8%	3.3%	7.0%	3.8%	5.7%	3.0%

Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

163. Հատկանշական է, որ դուրս մնացած կանանց մասնաբաժինը զգալիորեն ավելի փոքր է, քան

[110] ԿԳՆ հրաման № 980-Ա/Ք, 23.11.2015.

[111] Իրականացվում է Վորլդ վիժն Հայաստանի կողմից «Գլոբալ զարգացումներ» հիմնադրամի, ինչպես նաև Վորլդ Վիժն Վրաստանի, Վրաստանի ֆերմերների ասոցիացիայի և Anika ասոցիացիայի հետ համագործակցաբար:

տղամարդկանցը, և պատճառը ոչ միայն ծառայությունն է բանակում[112]: Վերլուծությունը ցույց է տալիս, որ արական սեռի դուրս մնացած ուսանողների ինչպես մասնաբաժինը, այնպես էլ թիվը շատ ավելի մեծ է նաև այլ պատճառները հաշվի առնելիս:

164. Տվյալները ցույց են տալիս, որ դուրս մնացածների մեծամասնությունը (բացառությամբ զորակոչի պատճառով) ունեն անբավարար առաջադիմություն, որին հաջորդում է նյութական անկարողությունները: Այնուամենայնիվ, եթե նշված պատճառներից առաջինի դեպքում ուսումը թողածների բացարձակ թիվը համեմատաբար կայուն է (աննշան աճ կա 2017-2018թթ. համար), ապա երկրորդ պատճառի դեպքում դուրս մնացածների թիվը ակնհայտորեն նվազում է: Սա կարող է լինել բնակչության վճարունակության աստիճանական բարելավման ցուցանիշ: Պետք է հաշվի առնել նաև, որ ֆինանսական պատճառներով դուրս մնացած ուսանողները գրեթե հավասարապես ներկայացնում են վճարովի և անվճար ուսանողների խմբերը: Այսպիսով, ֆինանսական անկարողությունը չպետք է ընկալվի միայն որպես ուսման վարձի վճարման անկարողություն: Որոշ ուսանողներ, հավանաբար ընդհանրապես չեն կարող կրթություն ստանալ (պարտավորված լինելով, օրինակ՝ ապրուստի միջոց վաստակել), կամ չունեն բավարար գումար տրանսպորտի կամ կրթության հետ կապված այլ ծախսերի համար:

165. ՄԿՈՒ ոլորտի շրջանավարտների թվաքանակն ավելի փոքր է, քան բուհերինը: Այսպես, օրինակ՝ բարձրագույն կրթության առաջին աստիճանից (Բակալավրի կրթական ծրագիր, ՈԱՇ մակարդակ 6) դուրս մնացած ուսանողները կազմել են 11.1% (4.4%-ը՝ կանայք) 2014-2015թթ, 10.2% (3.7%-ը՝ կանայք) 2015-2016թթ, 10.4% (3.8%-ը՝ կանայք) 2016-2017թթ. և 10.8% (3.7%-ը՝ կանայք) 2017/2018թթ:

Գ.2.2 Լրացուցիչ ուսուցման և վերապատրաստման աջակցության կարիք ունեցող ՄԿՈՒ ուսանողները

166. Հայաստանում չկան պետական ծրագրեր, որոնք նպատակաուղղված են ՄԿՈՒ ուսանողների հատուկ կատեգորիաներին կամ կարիքներին, բացառությամբ այն ծրագրերի, որոնք վերաբերում են ընդունելության արտոնություններին (տես՝ Բաժին Գ.1.2) և ներառական կրթությանը (տես՝ Բաժին Գ.2.4): Այնուամենայնիվ, ընդհանուր առմամբ, ՄԿՈՒ ուսանողներից շատերը տարբեր տեսակի աջակցության կարիք ունեն: Օրինակ՝ մարզերի այն ուսանողները, ովքեր պետք է գյուղերից գնան այն քաղաքները, որտեղ տեղակայված են ՄԿՈՒ հաստատությունները, փոխադրման խնդիրը ինքնին դժվարություն է: Մյուսների, հատկապես՝ աղքատ ընտանիքների ուսանողների համար խնդիր է անգամ հագուստն ու կոշիկը, պատշաճ տեսքով հաստատություն ներկայանալը:

167. Նման կարիքները սովորաբար լուծվում են դոնորների կողմից ֆինանսավորվող ծրագրերով կամ բարեգործական գործունեությամբ, ինչպիսիք են՝ Բաժին Ա.3.5-ում ներկայացված «Անուշավան Աբրահամյան» կրթական հիմնադրամի կողմից միկրոավտոբուսների տրամադրումը: Նմանատիպ նախաձեռնության մեկ այլ օրինակ է Եվրամիության ֆինանսավորմամբ իրականացվող «Մասնագիտական կրթություն և զբաղվածություն հաշմանդամություն ունեցող երիտասարդների համար» ծրագիրը, որն իրականացվեց «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության հայաստանյան գրասենյակի կողմից՝ «Մասնագիտական կրթության բարեփոխումներ» ՀԿ-ի հետ համատեղ 2016-2018թթ. Արագածոտնի, Արմավիրի, Կոտայքի, Տավուշի, Սյունիքի և Վայոց ձորի մարզերում և Երևանում: Ծրագրի նպատակները հետևյալն էին՝

- խթանել սոցիալական նորարարությունը ՄԿՈՒ ոլորտում՝ զբաղվածության հավասար հնարավորություններ ստեղծելով հաշմանդամություն ունեցող երիտասարդների համար.
- հզորացնել ՄԿՈՒ հաստատությունների կարողությունները սոցիալական ձեռնարկությունների փորձարկման համար, որտեղ աշխատում են հաշմանդամություն ունեցող երիտասարդները և կիսել փորձը մյուս քոլեջների հետ՝ այն ծավալելու համար.
- կազմակերպել մասնագիտական կողմնորոշման հանդիպումներ երեխաների և իրենց ծնողների հետ նրանց ավարտական տարում հատուկ և ներառական դպրոցներում.

[112] Տվյալներն այն անձանց մասին, ովքեր թողել են կրթությունը զինծառայության գնալու պատճառով հասանելի են միայն մինչև 2014-2015 ուս. տարին: Հաջորդ տարիների համար, նրանց թվաքանակը ներառվել է «այլ պատճառներում»:

- ընդգրկել երիտասարդներին ՄԿՈՒ հաստատություններ երկարաժամկետ (ֆորմալ) մասնագիտական կրթություն ստանալու համար.
- Կազմակերպել շուկայամետ կարճաժամկետ ներառական դասընթացներ ՄԿՈՒ հաստատություններում.
- Բարելավել հաստատությունների ֆիզիկական մատչելիությունը.
- Կատարելագործել ՄԿՈՒ և հատուկ դպրոցների դասավանդողների կարողությունները մասնագիտական կողմնորոշում և ներառական կրթություն իրականացնելու ուղղությամբ:

168. Արդյունքում՝

- 46 ՄԿՈՒ հաստատություններից 917 դասավանդողներ մասնակցել են մի շարք սեմինարների ներառական կրթություն և հաշմանդամություն ունեցող երիտասարդների հետ աշխատելու հիմնական սկզբունքների վերաբերյալ:
- Կարճաժամկետ մասնագիտական կրթության դասընթացներ են անցկացվել 7 մրցութային կարգով ընտրված ՄԿՈՒ հաստատություններում (Երևանի տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջ, Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ, Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջ, Արմավիրի արվեստի պետական քոլեջ, Սիսիանի պետական քոլեջ և Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջ):
- Հաշմանդամություն ունեցող 282 երիտասարդ ներգրավվել է ձեռք բերելու պահանջարկ ունեցող գիտելիքներ և հմտություններ:
- Երևանից և ծրագրի թիրախային մարզերից հաշմանդամություն ունեցող 64 երիտասարդներ ընդգրկվել են ՏՄԿՈՒ հաստատություններում 2016-2017 ուս. տարում երկարաժամկետ ֆորմալ կրթություն ստանալու համար:
- 5 ՄԿՈՒ հաստատություններ ստացել են փոքր դրամաշնորհներ նորարարական սոցիալական ձեռնարկություններ ստեղծելու համար;
- 25 հաշմանդամություն ունեցող երիտասարդներ աշխատանքի են տեղավորվել նորաստեղծ ՄԿՈՒ-ի վրա հիմնված սոցիալական ձեռնարկություններում:

Գ.2.3 ՄԿՈՒ ոլորտում հավասարության ապահովմանն ուղղված միջոցառումներ

***Տես՝ բաժիններ Գ**.1.3 **և Գ**.2.4:*

Գ.2.4 Ներառական կրթությունը և ՄԿՈՒ-ն

169. Հայաստանում ներառական կրթության հիմքը ձևավորվել է 2005թ., երբ ընդունվեց «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» օրենքը[113]: Այնուամենայնիվ, դրա իրականացումն սկսվել է 2001 թվականին, երբ եռակողմ համաձայնագիր ստորագրվեց կրթության բնագավառի լիազորված պետական մարմինների, Երևանի № 27 միջնակարգ դպրոցի և «Հույսի կամուրջ» ՀԿ-ի միջև: Այս համաձայնագրով վերոնշյալ դպրոցը ճանաչվել է որպես ներառական կրթություն իրականացնող առաջին հանրակրթական հաստատությունը: Դրանից հետո պաշտոնապես «ներառական» ճանաչված հանրակրթական դպրոցների թիվը զգալիորեն աճեց[114]: Ներկայումս ԿԳՆ քաղաքականությունն այն է, որ բոլոր դպրոցները պետք է ի վիճակի լինեն կազմակերպել ներառական կրթություն, և ներառականությունը կրթության մեջ պետք է նորմ լինի ամբողջ համակարգում:

170. 2016թ. կառավարությունը հաստատեց մինչև 2022թ. Հայաստանում ինտեգրված ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանն ու ժամանակացույցը[115]: Այնուամենայնիվ, այն ընդգրկում է միայն հանրակրթությունը: ՄԿՈՒ ոլորտի համար առկա չէ ներառական կրթությանն առնչվող որևէ կոնկրետ քաղաքականություն կամ կանոնակարգ, այնուամենայնիվ, պետության երաշխիքների

---

[113] Այս օրենքը անվավեր է համարվել 2015թ.

[114] Ներառական կրթության իրականացման գնահատումը Հայաստանի Հանրապետությունում: Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան, Կրթական հետազոտությունների և խորհրդատվության կենտրոն 2013 թ. http://www.osf.am/wp-content/uploads/2018/03/Inclusive-education-report_CERC_ENG1.pdf.

[115] ՀՀ կառավարման արձանագրային որոշում № 6, 18.02.2016.

վերաբերյալ «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» օրենքի ձևակերպումը[116], մասնավորապես՝ «*մասնագիտական կրթություն և ուսուցում ստանալու հավասար հնարավորությունների ապահովում կրթության առանձնահատուկ պայմանների տրամադրման և ներառումը ապահովելու միջոցով*», ընկալվում է՝ որպես հատուկ կրթական կարիքներ ունեցող անձանց համար պայմաններ ստեղծելու և բոլոր ՄԿՈՒ հաստատությունների հիմնական կրթության մեջ նրանց ներառման պահանջ: Այս գործընթացն, այնուամենայնիվ, դեռ նոր է սկսվել, և զգալի ռեսուրսներ են անհրաժեշտ ՄԿՈՒ հաստատությունների ֆիզիկական պայմանների հարմարեցման, համապատասխան սարքավորումների ձեռքբերման ու տեղադրման, մարդկային, մեթոդական և դիդակտիկ ռեսուրսների զարգացման համար:

171. Ներկայումս, ներառման գործընթացը համեմատաբար բարեհաջող է ընթանում Երևանի պետական հումանիտար քոլեջում, Երևանի զարդակիրառական արվեստի արհեստագործական պետական ուսումնարանում, Վանաձորի արհեստագործական ուսումնարանում, որտեղ հատուկ կրթական կարիքներ ունեցող ուսանողների թիվը շոշափելի է: Մյուս քոլեջներում այս կատեգորիայի ուսանողների թիվը չնչին է:

Գ.3: Ակտիվ աջակցություն զբաղվածությանը

Գ.3.1 ՄԿՈՒ շրջանավարտների զբաղունակությունը

172. ՄԿՈՒ շրջանավարտների աշխատանքի տեղավորման կամ կարիերայի այլ ուղիների վերաբերյալ տվյալները պետք է հասանելի լինեն EMIS/ԿԿՏՀ-ում, որը, ցավոք, դեռևս չի գործում: Այդ իսկ պատճառով, այս տեղեկատվությունը սովորաբար հավաքվում է ԿԳՆ-ի կողմից անմիջապես հաստատություններից կամ ՄԿԿԶԿ-ի կողմից իրականացվող՝ կարիերայի ստորաբաժանումների գործունեության մոնիթորինգի միջոցով:

173. Ներկայումս հասանելի են երկու ուսումնասիրությունների արդյունքներ: 2017 և 2018թթ. ՄԿԿԶԿ-ն աշխատանքի տեղավորման վերաբերյալ հավաքագրել է տվյալներ 41 ընտրված ՄԿՈՒ հաստատություններից՝ 12 արհեստագործական ուսումնարաններից և 29 քոլեջներից: Ուսումնարանների 2016թ. շրջանավարտների 72%-ը և 2017թ. շրջանավարտների 76%-ը գտել են աշխատանք, մինչդեռ քոլեջների դեպքում այդ ցուցանիշները համապատասխանաբար եղել են՝ 70% և 71%: 41 հաստատությունների շրջանավարտների աշխատանքի տեղավորման վերաբերյալ մանրամասները ներկայացված են Աղյուսակ 14-ում:

Աղյուսակ 14. Ընտրված 41 **ՄԿՈՒ հաստատությունների** 2016-2017**թթ. շրջանավարտների աշխատանքի տեղավորման վերաբերյալ տվյալները**

Հաստատություններ	2014-2015թթ. շրջանա-վարտների ընդհանուր թիվը	Նրանցից՝						
		Շարունակել են կրթությունը բուհում	Գնացել են բանակ	Արտա-գաղթել են	Գտել են աշխատանք			
					Ընդամենը		*Ըստ իրենց որակավորման*	
					Թիվ	%	Թիվ	%
2015-2016**թթ. շրջանավարտներ**								
12 Արհեստագործա-կան ուսումնարաններ	1,126	65	391	47	451	72%	301	48%
29 Քոլեջներ	4,684	1,003	562	255	1,999	70%	1,280	45%
Ընդամենը	5,810	1,068	953	302	2,450	70%	1,581	45%
2016-2017**թթ. շրջանավարտներ**								
12 Արհեստագործա-կան ուսումնարաններ	1,148	72	231	48	606	76%	427	54%
29 Քոլեջներ	4,262	1,037	394	197	1,853	71%	1,123	43%
Ընդամենը	5,410	1,109	625	245	2,459	72%	1,550	45%

Աղբյուրը՝ ՄԿԿԶԿ՝ հիմնված հաստատությունների զեկույցների վրա

174. Նույն ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տվել, որ մասնագիտությունների (որակավորումների) առումով, լավագույն ցուցանիշը գրանցվել է «Կաթի և կաթնամթերքի արտադրության տեխնոլոգիայի» համար, որտեղ 2016թ. աշխատանք փնտրող շրջանավարտների 100%-ը աշխատանքի են

[116] Հոդված 4, մաս 2, կետ 4.

տեղավորվել՝ ըստ իրենց որակավորման: Մյուս մասնագիտությունները, որոնց շրջանավարտները աշխատանքի տեղավորման բարձր տոկոս են ունեցել (ավելի քան 85%), եղել են՝ զբոսաշրջությունը (100% ընդհանուր առմամբ և 50%՝ ըստ որակավորման), ատամնատեխնիկա (91.9% և 58.5%), ատաղձագործություն, մանրահատակ, ապակյա արտադրանք (91.7% և 41.7%), գինեգործություն (88.9% և 55.6%), հացի, մակարոնեղենի և հրուշակեղենի տեխնոլոգիա (85.7% և 85.7%), որտեղ վերջինս առաջատար է՝ ըստ որակավորման աշխատանքի տեղավորման առումով:

175. Ամենացածր ցուցանիշները բաժին են ընկել ագրոնոմիային (21.4% և 21.4%), հանրային սննդի կազմակերպմանը (14.3% և 0.0%), բանկային գործին (12.5% և 12.5%), և մանկաբարձությանը (9.3% և 0.0%):

176. ԵՄ բյուջետային աջակցության ծրագրի շրջանակներում իրականացվել է մեկ այլ ուսումնասիրություն ԵՄ 2010-2014թթ. բյուջետային աջակցությամբ արդիականացված 17 ՄԿՈՒ հաստատությունների շրջանավարտների աշխատանքի տեղավորումը գնահատելու համար: Այս հաստատությունների արդյունքները համեմատելի են վերոնշյալ 41 հաստատությունների արդյունքների հետ (Աղյուսակ 15):

Աղյուսակ 15. ԵՄ բյուջետային աջակցության շրջանակներում 2010-2014**թթ. արդիականացված** 17 **ՄԿՈՒ հաստատությունների** 2014-2017**թթ. շրջանավարտների աշխատանքի տեղավորման ցուցանիշները**

Տարեթիվ	2014-2015թթ շրջանավարտների ընդհանուր թիվը	Նրանցից՝							
		Շարունակել են կրթությունը հանրակրթարանում	Գնացել են բանակ	Արտագաղթել է	Աշխատանք է փնտրում	Գտել են աշխատանք			
						Ընդամենը		*Ըստ իրենց որակավորման*	
						թիվը	Աշխատանք փնտրողների %	թիվը	Աշխատանք փնտրողների %
2013-2014	1,772	213	279	137	874	636	72.8	298	34.1
2014-2015	1,847	254	315	149	931	701	75.3	353	37.9
2016-2017	1,861	303	288	99	937	686	73.2	381	40.7

Աղբյուրը՝ ԿԳՆ, հիմնված հաստատությունների զեկույցների վրա

177. Այսպիսով, աշխատանք փնտրող շրջանավարտների շուրջ երեք քառորդը գտել է այն, բայց կեսից քիչ են տեղավորվել աշխատանքի՝ ըստ իրենց որակավորումների:

Գ.3.2 Անցման վրա ազդող տնտեսական գործոնները

178. Բոլոր շահագրգիռ կողմերն[117] ընդունում են այն փաստը, որ ՄԿՈՒ շրջանավարտների աշխատանքի տեղավորման համեմատաբար ցածր մակարդակը հիմնականում պայմանավորված է աշխատաշուկայում նոր թափուր աշխատատեղերի ստեղծման անբարենպաստ վիճակն է: Ըստ որոշ գնահատումների՝ 2018թ. ընդամենը 8-9 հազար նոր աշխատատեղ է ստեղծվել, և թափուր աշխատատեղերի քանակը կազմել է շուրջ 7 հազար[118]: Միևնույն ժամանակ, ցածր աշխատավարձը և անհրապույր աշխատանքային պայմանները նույնպես խոչընդոտ են հանդիսանում ՄԿՈՒ շրջանավարտների՝ ըստ իրենց որակավորման աշխատանք ստանալու համար: Այդ պատճառով հաճախ աշխատանքը չի համապատասխանում ձեռքբերված կրթության պրոֆիլին (տես նաև՝ Բաժին Գ.3.1):

179. Առկա վերջին տվյալները վկայում են, որ 2015թ. Հայաստանի տնտեսության շուրջ 36%-ը ստվերում էր[119]: Սա բացասական ազդեցություն է ունենում նաև աշխատանքի տեղավորման վրա, առնվազն՝ զբաղվածության

[117] Այս եզրակացությունները հիմնականում հիմնված են Ֆոկուս խմբերի քննարկումների արդյունքների վրա, քանի որ որևէ պաշտոնական տեղեկատվություն, օրինակ՝ այս թեմային առնչվող հետազոտությունների վերաբերյալ վիճակագրական տվյալներ, առկա չեն:

[118] Ոչ պաշտոնական տվյալներ՝ փորձագիտական գնահատումների հիման վրա:

[119] «Ստվերային տնտեսություններ ամբողջ աշխարհում. Ի՞նչ ենք սովորել վերջին 20 տարում», ԱՄՀ աշխատանքային փաստաթուղթ, 2018. https://www.imf.org/~/media/Files/Publications/WP/2018/wp1817.ashx.

վերաբերյալ պաշտոնական տվյալների առումով: Իրականում աշխատանք ունեցողներից շատերը գրանցված չեն և չեն հայտնվում պաշտոնական վիճակագրության մեջ: Բացի այդ, ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի՝ 2017թ. ոչ ֆորմալ զբաղվածության մակարդակը գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական հատվածներում եղել է 44.5% (44.6% տղամարդկանց և 44.5% կանանց համար) և մինչև 18.3% (21.9% տղամարդկանց 13.9% կանանց համար) ոչ գյուղատնտեսական հատվածներում[120]:

180. ՄԿՈՒ շրջանավարտների աշխատանքի տեղավորման վրա ազդող գործոններից մեկն այն է, որ զբաղմունքների մեծ մասի համար որևէ կարգավորում չկա կրթության մակարդակի կամ նույնիսկ բնույթի առումով: Սա հանգեցնում է այն իրավիճակին, որ ՄԿՈՒ ոլորտին առնչվող շատ աշխատատեղեր զբաղեցնում են բարձրագույն կրթություն ունեցողները կամ հակառակը՝ առանց մասնագիտական կրթության անձինք: Աղյուսակ 16-ը, որը ցույց է տալիս զբաղված անձանց մասնաբաժինը՝ ըստ զբաղմունքի տեսակի և կրթական մակարդակի, հուշում է, որ միջին որակավորման մասնագետների պաշտոնների շուրջ քառորդը, և սպասարկման, բնակարանային կոմունալ տնտեսության, առևտրի ոլորտի աշխատողների պաշտոնների շուրջ 20%-ը, որոնց համար մասնագետները սովորաբար պատրաստվում են ՄԿՈՒ համակարգի կողմից, զբաղեցնում են բարձրագույն կրթություն ունեցող անձինք: Միևնույն ժամանակ, որակավորում չունեցող անձանց մասնաբաժինը (հանրակրթություն ունեցողները), ովքեր հանդես են գալիս որպես գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական ոլորտի որակավորված աշխատողներ, օպերատորներ, ապարատավարներ, մեքենավարներ, փականագործներ, մոտ 1.5 անգամ ավելի մեծ է, քան ՄԿՈՒ ունեցողներինը:

Աղյուսակ 16. Զբաղվածները՝ ըստ զբաղմունքի և կրթության մակարդակի

	Ընդամենը		Բարձրագույն, հետբուհական		Մասնագիտական		Հանրակրթություն		Հիմնական ընդհանուր, տարրական և ցածր	
	2016	2017	2016	2017	2016	2017	2016	2017	2016	2017
Ղեկավարներ՝ օրենսդիր, գործադիր, դատական, ՏԻՄ, կազմակերպությունների, քաղաքական և հասարակական միավորումների	6.0	6.1	15.2	15.1	4.4	3.9	1.3	1.6	0.7	0.9
Բարձր որակավորման մասնագետներ	15.7	16.5	47.8	48.2	2.7	2.8	2.6	3.6	1.6	2.2
Միջին որակավորման մասնագետներ	9.6	8.8	11.8	9.3	23.1	23.1	1.9	2.0	0.1	0.0
Գրասենյակների ծառայողներ	2.9	3.4	4.3	5.5	4.5	4.4	1.5	1.8	…	0.0
Սպասարկման, բնակարանային կոմունալ տնտեսության, առևտրի ոլորտի աշխատողներ	11.8	12.3	8.5	9.3	15.1	16.5	13.3	12.8	5.2	6.4
Գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական ոլորտի որակավորված աշխատողներ, օպերատորներ, ապարատավարներ, մեքենավարներ, փականագործներ	47.0	44.9	11.5	11.2	43.9	41.2	68.6	66.9	80.5	74.4
Որակավորում չունեցող աշխատողներ	6.9	7.9	0.8	1.4	6.3	8.1	10.8	11.5	12.0	16.1

Աղբյուրը՝ ՀՀ Վիճակագրական կոմիտե[121]

Գ.3.3 Զբաղունակությանն ու զբաղվածության անցմանն ուղղված քաղաքականությունների վերանայում

181. Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի[122] 2018թ. հրապարակված հարցման արդյունքների՝ միայն 2016թ. ոչ

[120] ՀՀ աշխատաշուկան 2003-2017թթ., ՀՀ վիճակագրական կոմիտե, 2018. https://www.armstat.am/file/article/trud_18_4.3.pdf.
[121] ՀՀ աշխատաշուկան 2003-2017թթ., ՀՀ Վիճակագրական կոմիտե, 2018. https://www.armstat.am/file/article/trud_18_4.1.pdf
[122] ՀՀ Աշխատաշուկան 2003-2017թթ, ՀՀ Վիճակագրական կոմիտե, 2018. https://www.armstat.am/file/article/trud_18_3.pdf.

ակտիվ բնակչության 12.4%-ը և 2017թ.՝ 11.5%-ն են համարել, որ իրենց կրթությունը շատ օգտակար է եղել աշխատանք գտնելու հարցում: Իրենց կրթությունը համեմատաբար օգտակար գնահատողների մասնաբաժինը եղել է 26.4% և 20.0%, և որպես ոչ օգտակար գնահատողներինը՝ 13.6% և 9.3%, համապատասխանաբար (Աղյուսակ 17).

Աղյուսակ 17. Տնտեսապես ոչ ակտիվ բնակչության վերաբերմունքը ձեռքբերված կրթության օգտակարության նկատմամբ

	Ընդամենը		Տղամարդիկ		Կանայք		Քաղաք		Գյուղ	
	2016	2017	2016	2017	2016	2017	2016	2017	2016	2017
Շատ օգտակար	12.4	11.5	12.6	9.3	12.4	12.6	14.3	14.2	8.2	5.7
Համեմատաբար օգտակար	26.4	20.0	23.2	16.2	28.0	22.0	31.9	24.1	14.0	11.2
Ոչ օգտակար	13.6	9.3	14.0	8.8	13.4	9.6	14.8	10.7	11.0	6.5
Չունեն մասնագիտական կրթություն	44.1	55.9	47.0	63.3	42.7	52.1	35.8	47.3	63.1	74.3
Դժվարանում են պատասխանել	3.5	3.3	3.3	2.4	3.5	3.7	3.3	3.8	3.8	2.3

182. Զբաղվածների ներկայացուցիչները շատ ավելի դրական վերաբերմունք ունեին աշխատանքի տեղավորման գործում իրենց կրթության օգտակարության նկատմամբ: 2016թ. 25.3%-ը և 2017թ. 23.9%–ը համարել են այն շատ օգտակար, համապատասխանաբար 34.8% և 28.4%-ը՝ համեմատաբար օգտակար, և միայն 6.9% և 7.0%-ը՝ ոչ օգտակար[123] (Աղյուսակ 18).

Աղյուսակ 18. Զբաղվածների վերաբերմունքը ձեռքբերված կրթության օգտակարության նկատմամբ

	Ընդամենը		Տղամարդիկ		Կանայք		Քաղաք		Գյուղ	
	2016	2017	2016	2017	2016	2017	2016	2017	2016	2017
Շատ օգտակար	25.5	23.9	25.1	22.2	26.0	25.7	35.2	33.1	15.0	13.8
Համեմատաբար օգտակար	34.8	28.4	35.8	28.7	33.7	28.0	41.2	33.9	28.0	22.2
Ոչ օգտակար	6.9	7.0	7.5	6.8	6.3	7.2	6.5	6.8	7.3	7.2
Չունեն մասնագիտական կրթություն	32.4	40.1	31.3	41.4	33.7	38.6	16.8	25.6	49.2	56.0
Դժվարանում են պատասխանել	0.3	0.7	0.3	0.8	0.4	0.5	0.3	0.6	0.4	0.8

183. Տնտեսապես ոչ ակտիվ երիտասարդությունը նույնիսկ ավելի թերահավատորեն էր վերաբերվում իրենց կրթության օգտակարությանը: 2016թ. 15-24 տարեկանների 15.5%-ը և 25-29 տարեկանների 12.5%-ը գնահատել են այն ոչ օգտակար: 2017թ. այս ցուցանիշները եղել են 6.0% և 12.2%՝ համապատասխանաբար[124] (Աղյուսակ 19): Այնուամենայնիվ, պետք է նկատել, որ ոչ ակտիվ երիտասարդների շրջանում մեծ էր նաև մասնագիտական կրթություն (մասնագիտական կամ բարձրագույն) չունեցողների տոկոսը, և երիտասարդների հարցման արդյունքները ամբողջովին համատեղելի չեն վերոնշյալ Աղյուսակ 17-ի արդյունքների հետ:

Աղյուսակ 19. Տնտեսապես ոչ ակտիվ երիտասարդների վերաբերմունքը ձեռքբերված կրթության օգտակարության նկատմամբ՝ ըստ տարիքային խմբերի

	Ընդամենը		Տղամարդիկ		Կանայք		Քաղաք		Գյուղ	
	15-24	25-29	15-24	25-29	15-24	25-29	15-24	25-29	15-24	25-29
2016										
Շատ օգտակար	4.7	14.8	4.7	11.5	4.7	15.6	4.6	16.5	4.8	11.8

[123] ՀՀ Աշխատաշուկան 2003-2017թթ, ՀՀ Վիճակագրական կոմիտե, 2018. https://www.armstat.am/file/article/trud_18_4.1.pdf
[124] ՀՀ Աշխատաշուկան 2003-2017թթ, ՀՀ Վիճակագրական կոմիտե, 2018. https://www.armstat.am/file/article/trud_18_6.pdf

Համեմատաբար օգտակար	14.5	23.0	12.5	15.6	16.2	25.0	19.7	28.1	7.3	14.5
Ոչ օգտակար	15.5	12.5	16.2	10.6	14.8	13.0	18.5	12.6	11.2	12.4
Չունեն մասնագիտական կրթություն	60.8	45.1	62.1	57.6	59.5	41.8	53.3	37.6	71.0	57.7
Դժվարանում են պատասխանել	4.7	4.6	4.5	4.7	4.8	4.5	3.9	5.1	5.7	3.6
2017										
Շատ օգտակար	3.7	11.6	2.0	9.2	5.3	12.1	4.6	15.9	2.6	5.7
Համեմատաբար օգտակար	6.1	19.3	5.2	13.9	7.0	20.6	8.6	22.4	3.4	15.2
Ոչ օգտակար	6.0	12.2	6.3	10.1	5.8	12.7	7.3	13.9	4.6	9.9
Մասնագիտական կրթություն չունեն	81.8	50.9	84.4	63.5	79.1	48.0	76.9	41.2	87.1	63.9
Դժվարանում են պատասխանել	2.4	6.0	2.1	3.3	2.8	6.6	2.5	6.5	2.3	5.3

184. Չսովորող և չաշխատող (NEET) երիտասարդության վերաբերյալ տվյալները նույնպես կարող են հանդիսանալ զբաղունակության և զբաղվածության անցման ցուցանիշ: Այս կատեգորիան ունի ամենամեծ մասնաբաժինը 25-29 տարեկան երիտասարդների շրջանում (2016թ.՝ 45.1% և 2017թ.՝ 44.5%), որին հաջորդում է 20-24 տարիքային խումբը (2016թ՝ 40.9% և 2017թ.՝ 40.3%): NEET-ի ցուցանիշները ավելի բարձր են բոլոր տարիքային խմբերի կանանց համար (Աղյուսակ 20):

Աղյուսակ 20. NEET-**ը՝ ըստ տարիքային խմբերի, որպես նույն տարիքային խմբի բնակչության** %

	Ընդամենը		Տղամարդիկ		Կանայք		Քաղաք		Գյուղ	
	2016	2017	2016	2017	2016	2017	2016	2017	2016	2017
ընդամենը	34.6	34.6	22.7	23.4	46.5	45.9	35.7	35.9	32.9	32.7
15-19	14.2	15.6	11.3	12.0	17.7	20.2	13.4	14.8	15.1	16.4
20-24	40.9	40.3	27.8	29.7	52.7	50.1	41.2	40.2	40.5	40.4
15-24	28.5	28.7	19.5	20.7	37.8	37.5	28.6	29.3	28.3	28.1
25-29	45.1	44.5	28.5	28.4	60.4	59.1	46.2	46.1	42.8	42.0

185. Շատ հաճախ, պատշաճ գիտելիքներից և հմտություններից բացի գործատուներն աշխատանքի ընդունելու համար պահանջում են նաև որոշակի աշխատանքային փորձ, որը լուրջ մարտահրավեր է ՄԿՈՒ և համալսարանի նորաթուխ շրջանավարտների համար: Այդ իսկ պատճառով, ԶՊԳ-ի կողմից իրականացվող զբաղվածության պետական ծրագրերից մեկն ուղղված է այն երիտասարդներին, ովքեր ավարտել են մասնագիտական կամ բարձրագույն հաստատությունը, սակայն աշխատանք չեն գտել առնվազն մեկ տարվա ընթացքում: Այս ծրագրի նպատակն է օգնել երիտասարդներին աշխատանքային փորձ ձեռք բերել՝ ըստ իրենց որակավորման: Այս նպատակով, գործատուները, ովքեր համաձայնում են աշխատանքի ընդունել աշխատանքային պրակտիկա անցնող երիտասարդներին, վճարվում են նրանց աշխատավարձի չափով (հավասար օրենսդրությամբ սահմանված ազգային նվազագույն աշխատավարձին) և վեց ամսվա հարկերը: Ցավոք, այս ծրագրում ընդգրկված երիտասարդների թիվը բավականին սահմանափակ է և չի գերազանցում 150-200:

Գ.3.4 Կարիերայի ուղղորդում

186. Ներկայումս, առնվազն մեկ համապատասխան մասնագետով համալրված՝ կարիերայի ուղղորդման ստորաբաժանումները համակարգված կերպով գործում են 95 պետական ՄԿՈՒ հաստատություններում: 2018 թվականից ի վեր տարեկան շուրջ 49 միլիոն դրամ (մոտ 88.3 հազար եվրո) է նախատեսվում այդ կարիերայի խորհրդատուների աշխատավարձերի վճարման համար: Կարիերայի ուղղորդման ծառայություններն իրականացվում են Մասնագիտական կողմնորոշման և կարողությունների զարգացման կենտրոնի կողմից համապատասխան մեթոդաբանությամբ (տես նաև՝ Բաժին Ա.2.2): Վերջինս պատասխանատու է նաև ՄԿՈՒ հաստատությունների կարիերայի մասնագետների վերապատրաստման

համար: 2013-2018 թվականների ընթացքում վերապատրաստվել է 143 նման մասնագետ: Նրանցից 39-ը (ներկայացնելով 37 հաստատություն) և 43-ը (25 հաստատություն)՝ համապատասխանաբար, վերապատրաստվել են 2017 և 2018թթ:

187. 2019թ. հուլիսին 40 ժամ տևողությամբ նոր վերապատրաստման դասընթաց է իրականացվել 40 հաստատությունների 42 կարիերայի խորհրդատուների համար (17-ը Երևանից, և 23-ը՝ մարզերից): Դասընթացի թեմաներն էին հատկապես՝ կարիերայի ուղղորդման միջազգային փորձը, կարիերայի կենտրոնների գործառույթներն ու նպատակները, կարիերայի խորհրդատուի մասնագիտական գիտելիքների և կարողությունների նկատմամբ պահանջները, անհատական և խմբային ծառայությունների մատուցման մեթոդաբանությունը: Մասնագետներին տրամադրվեց նաև «կարիերայի կառավարում» ձեռնարկը, որը մշակվել է ՄԿԿԶԿ-ի կողմից:

188. ՄԿԿԶԿ-ի կողմից մշակված ՄԿՈՒ հաստատությունների կարիերայի ուղղորդման ստորաբաժանումների ինստիտուցիոնալ և մեթոդական բազային առնչվող նյութերի փաթեթը հաստատվել է իր խորհրդի կողմից (2013թ. հունիսի 13), հետո փորձարկվել է ԵԿՀ-ի աջակցությամբ իրականացվող «*ԵԿՀ գործունեությունն ուղղված Հայաստանում մասնագիտական կրթության և ուսուցման 2013-2016 թվականների բարեփոխումներին*» ծրագիրը: Փաթեթը ներառում է *ՄԿՈՒ հաստատությունների կարիերայի ուղղորդման ստորաբաժանման օրինակելի կանոնակարգը, կարիերայի խորհրդատուի/համակարգողի աշխատանքի նկարագիրը, կարիերայի ուղղորդման ստորաբաժանումների մոնիթորինգի օրինակելի հարցաթերթը:* Փաթեթը պաշտոնապես փոխանցվել է ՀՀ ԱՍՀՆ-ից ՀՀ ԿԳՆ 2017թ. մարտին, այնուհետև 2017թ. մայիսին ԿԳՆ-ն այն տարածել է ՄԿՈՒ հաստատություններում:

189. Կարիերայի ստորաբաժանման վերոնշյալ օրինակելի կանոնակարգի համաձայն՝ վերջինիս հիմնական նպատակը աշխատաշուկայում ուսանողների և շրջանավարտների մրցունակության խթանումն ու իրենց որակավորման համապատասխան աշխատանքի տեղավորման հնարավորությունների բացահայտումն է՝ այնպիսի խնդիրների իրականացման միջոցով, ինչպիսիք են՝ կարիերայի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը, խորհրդատվությունն ու ուղղորդումը, կարիերայի պլանավորման կարողությունների զարգացումը, ուսանողի անհատական բնութագրերի, կարողությունների ու նախասիրությունների բացահայտումը, աշխատաշուկա անցման, կարիերայի պլանավորման և կառավարման, այդ թվում՝ զբաղունակության, ձեռներեցության և այլ առանցքային հմտությունների հետ կապված ծառայությունների մատուցումը: Կարիերայի ստորաբաժանման առաջադրանքների շրջանակներում կարիերայի խորհրդատուն իրականացնում է գործառույթներ հետևյալ 4 ուղղություններով՝ տեղեկատվական և խորհրդատվական աշխատանքներ, կարիերայի կարողությունների զարգացում, օժանդակություն աշխատանքի տեղավորման և վարչական աշխատանքներին:

190. ՄԿՈՒ հաստատությունների կարիերայի ստորաբաժանումների գործունեության մոնիթորինգն իրականացվել է 2018թ. փետրվար-մարտ ամիսներին ՄԿԿԶԿ-ի և ԿԳՆ-ի կողմից համատեղ: Այն նպատակաուղղված էր այդ ստորաբաժանումների կողմից շահառուներին և վերոնշյալ ծառայություններից օգտվող ուսանողներին տրամադրվող ծառայությունների բնույթի և բովանդակության բացահայտմանը: ՄԿԿԶԿ-ի կողմից մոնիթորինգի ենթարկված 83 ՄԿՈՒ հաստատություններում 7,693 շրջանավարտներից 3,950-ը ստացել են կարիերայի ուղղորդման ծառայություններ:

191. Կարիերայի ուղղորդման ստորաբաժանումների ձեռքբերումների հստակ դրսևորում են ՄԿՈՒ հաստատությունների 2015-2016թթ. և 2016-2017թթ. շրջանավարտների աշխատանքի տեղավորման վերաբերյալ տվյալները, որոնք ներկայացված են Բաժին C.3.1-ում:

II.Ամփոփում և եզրակացություններ

192. **ՄԿՈՒ ոլորտում մասնակցության ընդլայնումը** ԿԳՆ ռազմավարական նպատակներից մեկն է: Հիմնական ընդհանուր կրթությունն ավարտելուց հետո ՄԿՈՒ-ն ընտրած երիտասարդների մասնաբաժինն աճում է, սակայն նրանց թիվը դեռևս կազմում է ավագ միջնակարգ դպրոցում կրթությունը շարունակողների կեսից պակասը: Բարձրագույն կրթության համակարգի ավանդական «գրավչությունը» երիտասարդների և նրանց ծնողների համար դեռևս առաջին տեղում է, և ՄԿՈՒ-ն մնում է երկրորդ ընտրությունը: ՄԿՈՒ-ն առավել հասանելի դարձնելու նպատակով կառավարությունը 2014 թվականից զգալիորեն ավելացրել է անվճար տեղերի քանակը նախնական և միջին ՄԿՈՒ-ի համար: Կրթաթոշակները (որոնք վճարվում են

արհեստագործական ուսումնարանների բոլոր ուսանողներին և քոլեջի ուսանողների 70%-ին[125]), որոնք պետք է գործիք դառնան ՄԿՈՒ գրավչության և հասանելիության բարձրացման համար, դեռևս շատ փոքր են: Ֆորմալ ՄԿՈՒ ծրագրերի իրականացման տարբեր հարցերում (ուս. տարվա մեկնարկ, դասընթացների տևողություն, դասավանդման մատուցման ձևեր) սահմանափակ ճկունությունը չի նպաստում ՄԿՈՒ ուսանողների ավելացմանը: Այնուամենայնիվ, հաստատություններն ունեն մեծ ազատություն կրթության բովանդակության և դասավանդման մեթոդների սահմանման գործում:

193. 2016թ. ՀՀ կառավարության կողմից հաստատված մինչև 2022թ. Հայաստանում ինտեգրված ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանն ու ժամանակացույցը վերաբերում է միայն հանրակրթությանը, մինչդեռ ՄԿՈՒ համար ներառականությանն առնչվող որևէ հատուկ քաղաքական փաստաթուղթ առկա չէ: Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» օրենքը պահանջում է ՄԿՈՒ ստանալու հավասար հնարավորությունների ապահովում՝ հիմնականում **առանձնահատուկ կրթական կարիքներ** ունեցող անձանց համար պայմաններ ստեղծելու և բոլոր ՄԿՈՒ հաստատությունների հիմնական կրթության մեջ նրանց **ներառման** միջոցով: Օրենքի պահանջի բավարարման գործընթացը սկսվել է, սակայն միայն մի քանի հաստատություններ են առայժմ ի վիճակի ապահովել ներառականությունը:

194. **ՄԿՈՒ շրջանավարտների աշխատանքի տեղավորման** մակարդակը մնում է համեմատաբար ցածր (աշխատանք փնտրողների 73-74%-ը և շուրջ 40%-ը՝ ըստ ստացած որակավորման): Դրա հիմնական գործոնները, ըստ շահագրգիռ կողմերի գնահատումների, անբարենպաստ իրավիճակն է նոր աշխատատեղերի ստեղծման, ցածր աշխատավարձի և անհրապույր աշխատանքային պայմանների, ինչպես նաև մեծ չափով ստվերային տնտեսության հետ կապված: Մյուս գործոնն այն է, որ զբաղմունքների մեծ մասի համար որևէ կարգավորում կրթության մակարդակի կամ նույնիսկ նկարագրի առումով չկա: Սա հանգեցնում է մի իրավիճակի, երբ ՄԿՈՒ ոլորտին վերաբերող շատ աշխատատեղեր զբաղեցնում են բարձրագույն կրթություն ունեցող կամ մասնագիտական կրթություն չունեցող անձինք:

195. ՄԿՈՒ շրջանավարտների **կրթությունից աշխատանքի անցմանն** աջակցող ակտիվ աշխատաշուկայի միջոցառումների թիվը մեծ չէ: Հավանաբար, ԶՊԳ-ի ծրագիրը միակն է, որի միջոցով գործատուներին, ովքեր համաձայնում են աշխատանքի ընդունել երիտասարդ ՄԿՈՒ և բարձրագույն կրթությամբ շրջանավարտների, վճարում են նրանց վեց ամսվա աշխատավարձը: Սա երիտասարդներին հնարավորություն է տալիս ձեռք բերել աշխատանքային փորձ իրենց որակավորման համապատասխան: Այնուամենայնիվ, ծրագրի հնարավորությունները թույլ չեն տալիս ներգրավել տարեկան 200 շահառուից ավել:

196. Որպես ՄԿՈՒ շրջանավարտների աշխատանքի տեղավորմանն աջակցող գործիք՝ **կարիերայի ուղղորդումը** ներդրվել է ՄԿՈՒ համակարգում 2013 թվականից, և գրեթե բոլոր հաստատություններում առնվազն մեկ վերապատրաստված կարիերայի մասնագետով համալրված կարիերայի ուղղորդման ստորաբաժանումները համակարգված կերպով գործում են 2018 թվականից: Ներկայումս, կարիերայի խորհրդատուների աշխատավարձը ամբողջությամբ վճարվում է պետական բյուջեից, և նրանք պարբերաբար վերապատրաստվում են ՄԿԿԶԿ-ի կողմի: Վերջինս շարունակաբար իրականացնում է ՄԿՈՒ հաստատությունների կարիերայի ուղղորդման ստորաբաժանումների գործունեության մոնիթորինգ:

197. **Ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության վավերացման համակարգը** պաշտոնապես առկա է (համապատասխան կանոնակարգերը հաստատված են ՀՀ կառավարության կողմից), և գոյություն ունի կազմակերպություն (ՈՒԱՀ), որը լիազորված է դրա իրականացման համար: Այնուամենայնիվ գործնականում այս մեխանիզմը չի գործում հիմնականում ֆինանսական և ընթացակարգային հարցերի պատճառով: Գործող օրենսդրության հիմնական թույլ կողմերից մեկն այն է, որ ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման վավերացման համակարգը չի հանգեցնում որևէ ֆորմալ որակավորման շնորհման: Ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման վավերացման խթանման համար ՈՒԱՀ-ի կարողությունների զարգացման և սահմանված ընթացակարգերի բարելավմանն ուղղված առաջարկությունների մշակման գործընթացներն ակնկալվում է իրականացվել 2020թ. Եվրամիության կողմից ֆինանսավորվող «ԵՄ-ն հանուն երիտասարդության՝ ՍԵՅ ՅԵՍ. հմտություններ աշխատանքի համար» ծրագրի շրջանակներում:

198. Ֆորմալ և ոչ ֆորմալ ՄԿՈՒ ոլորտում ընդգրկվածությանն իրավիճակի բարելավման ուղղությամբ առաջարկվում է՝

[125] Նախատեսվում է քոլեջի ուսանողների 100% -ին տրամադրել կրթաթոշակներ 2020 թվականից:

- հաշվի առնել ֆորմալ ՄԿՈՒ ծրագրերի իրականացման ճկունության ապահովման միջոցների քննարկման հնարավորությունը, օրինակ՝ ընդգրկման ժամանակահատվածի (յուրաքանչյուր ուստարում երկու ընդունելություն կարող է հնարավոր լինել), դասընթացների տևողության և այլ հարցերի առումով.
- վերանայել ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության վավերացման վերաբերյալ օրենսդրությունը՝ հաշվի առնելով ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության վավերացման ընթացակարգերի արդյունքում ֆորմալ որակավորումների (որակի ապահովման մեխանիզմների հզորացման ուղեկցմամբ), ինչպես նաև մասնակի որակավորումների շնորհման հնարավորությունը.
- ընդլայնել գոյություն ունեցող աշխատաշուկայի ակտիվ ծրագրերի շրջանակները, որոնք ուղղված են ՄԿՈՒ շրջանավարտների կրթությունից աշխատանքի անցման օժանդակությանը, և ձեռնարկել նրանց աշխատանքի տեղավորմանը նպաստող նոր միջոցառումներ.
- մշակել և ընդունել օրենսդրություն/կանոնակարգեր, որոնք պահանջներ կսահմանեն կրթության մակարդակի և ՄԿՈՒ ոլորտին առնչվող զբաղմունքների որակավորման նկատմամբ.
- կապիտալ ներդրումների ծրագրերում նախատեսել միջոցառումներ և համապատասխան ֆինանսական միջոցներ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների համար բոլոր ՄԿՈՒ հաստատություններում 3-4 տարվա ընթացքում անհրաժեշտ պայմաններ ապահովելու համար.
- վերապատրաստել մասնագետներ (առկա դասավանդողներից և նոր աշխատանքի ընդունվածներից) կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների հետ աշխատելու համար, և մշակել ուսումնական ծրագրեր և դիդակտիկ նյութեր այդ ուսանողների համար.
- շարունակել կարիերայի ուղղորդման համակարգի զարգացումը կարիերայի խորհրդատուների շարունակական վերապատրաստման, անհրաժեշտ մեթոդական և այլ ռեսուրսների մշակման և աշխատանքների իրականացման մոնիթորինգի միջոցով: